ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ՊԵՏԳՐԱՀԱՏԱՆ
1954

БИБЛИОГРАФИЯ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

АРМЯНСКАЯ БОЛЬШЕВИСТСКАЯ ПЕЧАТЬ с 1902—1920 г. г.
АРМЯНСКАЯ СОВЕТСКАЯ ПЕЧАТЬ с 1920—1954 г. г.

Составил
ОВ. ПЕТРОСЯН

ЕРЕВАН

ГОС. КНИЖН. ПАЛАТА
Арм. ССР

1954

016:05/07(479.25)
Պ-48

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՑԱՆ ՄԱՄՈՒԼԸ 1902—1920 թ. թ.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ 1920—1954 թ. թ.

կազմեց
ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
Հայկական ՍՍՌ
ՊԵՏԳՐԱԳԱԼԱՏ
1954

A III 272

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկար տարիներ է մենք աշխատում ենք հայ գրականության և պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի վրա։

Արդեն լույս է տեսել մեր կազմած «Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն երեք հատորով։

Ներկա աշխատությամբ հրատարակության ենք հանձնում մեր կազմած «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ի մի հատորը, որ ընդգրկում է հայ բոլշևիկյան մամուլը 1902—1920 թ.թ. և սովետահայ մամուլը 1921—1954 թ.թ.։

Եթե «Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն գրականագիտական բնույթ ունի, նպատակ ունի օգնել հայ գրականությունը ուսումնասիրողներին, ապա «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ն և նրա ներկա հատորը, նպատակ ունեն առաջ նյութ տալ հայ հասարակական մտքի զարգացումն ուսումնասիրողներին, ցույց տալ հայ հրապարակախոսության զարգացումը, տեղեկատու-բիբլիոգրաֆիական աղբյուր հանդիսանալ՝ մեր քաղաքական-հասարակական, տնտեսական, կուլտուրական կյանքի կոնկրետ հարցերն ուսումնասիրողների համար։

Հայ պարբերական մամուլի համառոտ պատմությունը թողնելով մեր աշխատության մյուս հատորին, ներկա պրպտում մենք անհրաժեշտ ենք համարում, ընդհանուր գծերով տալ՝ 1. նախահեղափոխական շրջանի բոլշևիկյան մամուլի և նույն թվում բոլշևիկյան հայ մամուլի ծագումն ու զարգացումը, համառոտ նկարագրությունը և 2. Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո (1920 թ. նոյեմբեր) մինչև 1953 թ. ներառյալ լույս տեսած լրագրերի ու բոլոր տեսակի ժուռնալների ու պարբերականների բիբլիոգրաֆիան։

***

Մեր Կոմունիստական պարտիան, նրա հիմնադիր և հանճարեղ առաջնորդ վ. Ի. Լենինը միշտ բարձր են դասել պրոլետարական գրականության և մամուլի դերը։

Իր կլասիկ աշխատության մեջ, «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» հոդվածում (1905 թ.), վ. Ի. Լենինը տվել է պարտիական գրականության սկզբունքների եզգրիտ ձևակերպումը։ Նա պա-

հանդում էր, որպեսզի գրական գործը դառնա բաղկացուցիչ մասը սոցիալ-դեմոկրատական պարտիական աշխատանքի։ Մերկացնելով բուրժուական գրականության և մամուլի վաճառավաճառականությունը, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ մեր գրականությունը պիտի լինի իսկապես ազատ, սոցիալիզմի գաղափարներով տոգորված, պրոլետարիատի և աշխատավորության հետ սերտորեն կապված գրականություն և մամուլ։

Այդ գրականությունը և մամուլը, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, «հոլված է ծառայելու միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր աշխատավորներին, որոնք կազմում են երկրի ծաղիկը, նրա ուժը, նրա ապագան»*։

Վ. Ի. Լենինը ոչ միայն ժամանակին պարզաբանել է, վճռականորեն դրել պարտիական մամուլի ու գրականության անհրաժեշտությունը, այլև Լենինն է հանդիսանում ճիսկապես ազատ, պրոլետարիատի հետ բացորոշ կապված գրականության ու մամուլի ստեղծողը։

Բոլշևիկյան մամուլի պատմությունը կապված է բոլշևիկյան պարտիայի հերոսական պատմության հետ, անցել է պայքարի ու հաղթանակների փառահեղ ուղիով, առաջին անլեգալ բանվորական թերթիկներից, թռուցիկներից, բրոշյուրներից ու անլեգալ լրագրերից հասել է ներկայիս Սովետական Միության իսկական ժողովրդական մամուլի բարձրությանը։

Վ. Ի. Լենինի կողմից կազմակերպված «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը» Պետերբուրգում (1895 թ.) հայտնի է, որ հրատարակել է մի քանի ուսուցիչներ և թռուցիկներ (պրոկլամացիաներ) և պատրաստել է առաջին համարը «Ռաբոչեյա գազետա»-ի, որով հիմք է դրել Ռուսաստանում մարքսիստական բանվորական մամուլին։

Մի տարի հետո, 1896 թվին, արտասահմանում, նորից Վ. Ի. Լենինի ձեռնարկությամբ, լույս է տեսնում «Ռաբոչեյա միսլ» ժողովածուն, որի № 1-ում կա Լենինի «Պրիդրիխ Էնգելս» հոդվածը։

Դեռ սիբիրյան աքսորավայրում, Վ. Ի. Լենինը մշակել է համառուսական քաղաքական մարքսիստական լրագրի ստեղծման իր ծրագիրը։

«Ի՞նչից սկսենք (1901 թ.) իր հայտնի հոդվածում Վ. Ի. Լենինը գրել է,— «Մեր կարծիքով, գործունեության ելակետը, ցանկալի կազմակերպությունն ստեղծելու առաջին գործնական քայլը, վերջապես, այն հիմնական թելը, որը բռնելով մենք կկարողանայինք անշեղորեն զարգացնել, խորացնել ու ընդարձակել այդ կազմակերպությունը,— պետք է լինի համառուսական քաղաքական լրագիր հիմնելը ...Առանց դրա անհնարին է սկզբունքորեն կայուն և բազմակողմանի պրոպագանդայի ու ագիտացիայի սիստեմատիկ մղումը, որը կազմում է սոցիալ-դեմոկրատիայի մշտական ու գլխավոր խնդիրն ընդհանրապես և ներկա մոմենտի կենսական խնդիրն առանձնապես, երբ դեպի քաղաքականությունը, դեպի սոցիալիզմի հարցերը հետաքրքրությունն արթնացած է բնակչության ամենալայն խավերում»**։

«Իսկրա»-ն առաջին համառուսական մարքսիստական անլեգալ լրագիրն էր. նա ստեղծվել է Կոմունիստական պարտիայի հիմնադիր և մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի կողմից։ «Իսկրա»-ն խոշոր դեր է խաղացել մեր Կոմունիստական պարտիայի կազմակերպումը նախապատրաստելու, բանվորական շարժման

---

* Վ. Ի. Լենին. Երկեր, հա. 10, էջ 38—46

** Վ. Ի. Լենին. Երկեր, հա. 5, էջ 20

անքատված, ցանուցիր կազմակերպություններն փոխարեն միասնություն ամրապնդելու, լենինյան սկզբունքներով պարտիայի կառուցման իդեոլոգիական և կազմակերպական հիմունքները և ծրագիրը մասսայականացնելու, ռևոլյուցիոն ստեղծագործ մարքսիզմը Ռուսաստանում տարածելու ուղղությամբ։

«Իսկրա»-ի առաջին համարը լույս է տեսել 11(24)-ին, դեկտեմբերի 1900 թ. Լայպցիգում, հաջորդ համարները՝ Մյունխենում, 1902 թ. ապրիլից՝ Լոնդոնում, 1903 թ. գարնանից՝ Ժնևում։

ՌՍԴԲԿ երկրորդ համագումարը «Իսկրա»-ն ընդունեց որպես պարտիայի կենտրոնական օրգան։

Լրագրի բնաբանն էր. «Կայծից բոց կբռնկի» — որը մի կոչ էր ռևոլյուցիոն պայքարի։

Վ. Ի. Լենինը հանդիսանում էր «Իսկրա»-ի ոգեշնչողը, դեկավարը. հոդվածների մի խոշոր մասը Լենինի գրչին են պատկանում։ «Իսկրա»-ն ռևոլյուցիոն մարքսիզմի մարտական օրգանն էր, ռուսական առաջին ռևոլյուցիայի մրրկահավը։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ համառուսական քաղաքական լրագիրը կծառայի ոչ միայն որպես պարտիան իդեական համախմբելու միջոց, այլև...— տեղական կազմակերպություններն պարտիայի մեջ կազմակերպորեն միավորելու միջոց։

Եվ իսկապես, «Իսկրա»-ն հանդիսացավ այդպիսի համառուսական քաղաքական լրագիր, նա նախապատրաստեց մեր պարտիայի իդեական ու կազմակերպական համախմբումը։

Լենինյան «Իսկրա»-ն բազմակողմանի և խորը կերպով, ստեղծագործական մարքսիզմի դիրքերից լուսաբանում էր հասարակական կյանքի հարցերը, ապդում էր ռևոլյուցիոն դեպքերի զարգացման վրա, նախապատրաստում էր վերահաս ռևոլյուցիան և մասսաների ելույթները։

«Իսկրա»-ն ուներ հետևյալ մշտական բաժինները՝ «Պարտիական կյանք», «Մեր հասարակական կյանքը», «Բանվորական կյանքի խրոնիկա», «Տեսական ֆարրիկանտներից ու գործարաններից», «Գյուղում», «Արտաքին տեսություն», «Գրախոսական»։

«Իսկրա»-ում տպագրվել են Վ. Ի. Լենինի 50-ից ավելի հոդվածներ, որոնց մեջ նա ավել է՝ մարքսիզմի ստեղծագործական բազմակողմանի մշակումը և կիրառումը կոնկրետ ռևոլյուցիոն կյանքում, Կոմունիստական պարտիայի իդեոլոգիական հիմունքները, կազմակերպչական սկզբունքները, ծրագրի և կանոնադրության խորը լուսաբանումը, միջազգային բանվորական շարժման բոլոր կարևոր հարցերի վերլուծությունը։

Լենինյան «Իսկրա»-ն վճռականորեն պայքարել է համախմբելու համար ռևոլյուցիոն ուժերը մարքսիզմի շուրջը, սերտ կապ հաստատելու և ամրապնդելու կապը մասսաների հետ, կյանքում իրականացնելու պարտիայի ստեղծման լենինյան պլանը, լոյնորեն ծավալելու քննադատություն ու ինքնաքննադատությունը, դաստիարակելու պրոլետարիատին ու աշխատավորությանը՝ ռևոլյուցիոն մարքսիզմին հավատարմության ոգով, անողոք պայքարի ոգով ընդդեմ մարքսիզմի քշնամիների։ «Իսկրա»-ի խմբագրության կողմից 1901 թվականին լույս է տեսել նաև «Զարյա» ժուռնալը՝ Շտուտգարդում։

«Զարյա»-ն մարքսիստական, գիտական-հանրամատչելի ժուռնալ էր։ Այդ ժուռնալում լույս են տեսել Վ. Ի. Լենինի՝ «Զեմստվոյի հալածանքները և լիբե-

րալիզմի Հանձնիրալներըն, ԷՌուսական սոցիալ-դեմոկրատիայի սպրարային ծրագիրըն և այլն։

Գլեխանովի օժանդակությամբ մենշևիկները գրավեցին «Իսկրա»-ն և դարձրին իրենց ֆրակցիոն օրգանը ու սկսեցին կատաղի պայքար՝ Լենինի ու պարտիայի դեմ։ Վ. Ի. Լենինը 1903 թ. նոյեմբերի 1-ին դուրս եկավ «Իսկրա»-ի խմբագրությունից և սկսեց կազմակերպչական աշխատանքներ տանել, նոր, բոլշևիկյան լրագիր հրատարակելու համար։

Անդրկովկասի իրականության մեջ, Վ. Ի. Լենինի առաջադրած մարտական պահանջը՝ պարտիական ժամուլ ու գրականություն ստեղծելու վերաբերյալ կենսագործում է Թուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի ջոկատը հանդիսացող Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատիան։

Լենինյան-իսկրայական ուղղության առաջին անլեգալ լրագիրն Անդրկովկասում «Բրձոլա»-ն էր («Պայքար»), որ լույս է տեսել 1901—1902 թվականներին, վրացիների լեզվով։ «Բրձոլա»-ն հանդիսանում է Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատների լենինյան-իսկրայական խմբակի օրգանը, այն հիմնադրել են Ի. Վ. Ստալինը և Վ. Զ. Կեցխովելին։ «Բրձոլա»-ն տպագրվում էր Բաքվում, ընդհատակյա տպարանում։ Լույս է տեսել ընդամենը չորս համար։

«Բրձոլա»-ի առաջին համարում, այդ լրագրի դերի և նշանակության մասին խմբագրականում, որ պատկանում է Ի. Վ. Ստալինի գրչին, հետևյալն է գրված. «...վրացիների սոցիալ-դեմոկրատական քերթը պետք է պարզորոշ պատասխան տա բանվորական շարժման հետ կապված բոլոր հարցերին, պարզաբանի սկզբունքային հարցերը, քննադատորեն պարզաբանի բանվոր դասակարգի դերը պայքարում և գիտական սոցիալիզմի լույսով լուսավորի յուրաքանչյուր երևույթ, որին բախվում է բանվորը»։

«Բրձոլա»-ն պաշտպանում էր ռևոլյուցիոն մարքսիզմի տեսական հիմունքները, լրագրի հրատարակած նյութերում աչքի է ընկնում բարձր գաղափարական մակարդակը, նպատակասլացությունը, հոդվածների ակտուալությունը, մարտական ոգին։

Լենինյան «Իսկրա»-ն իր 1901 թ. դեկտեմբեր 20-ի № 13-ում, ջերմորեն ողջունել է «Բրձոլա»-ի հրատարակումը և նշել է իրեն քաղաքական կարևոր դեպք։

Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտներ Ստեփան Շահումյանն ու Սուրեն Սպանդարյանը Անդրկովկասում, հայ իրականության մեջ կենսագործում էին Լենինի առաջադրած պահանջը՝ պարտիական ժամուլ ու գրականություն ստեղծելու վերաբերյալ։

1902 թվին Անդրկովկասում կազմակերպվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների Միությունը», որը նույն թվի հոկտեմբերին հայերեն հրատարակում է «Պրոլետարիատ» քերթը։

Այդ քերթը լույս է տեսել Ստ. Շահումյանի և Բ. Կնունյանցի ջանքերով, 1902 թ. հոկտեմբերի 1-ին։ Քերթը բաղկացած է 24 էջից, վերի մասում կա մարտական լոզունգ՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք», դրա տակ՝ «Թուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը խոսքերը։

«Պրոլետարիատ»-ը լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն

---

* Ի. Վ. Ստալին. Երկեր. հ. 1, էջ 9—10

քերքն էր, որի առաջին համարում տպագրվել է «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության» մանիֆեստը։ Այդ մանիֆեստի նախապատրաստմանը մասնակցել է Ստեփան Շահումյանը։ «Մանիֆեստի մեջ ասված է. «Ձեռնարկելով ներկա սոցիալ-դեմոկրատական օրգանի հրատարակությանը, անհրաժեշտ ենք համարում բացատրել մեր ընթերցողներին այն սկզբունքները, որոնք ծառայելու են իբրև հիմունք մեր ծրագրին։ Մեր «Միությունը» Ռուսիայի ամեն ծայրերում իւր ցանցերը լայն տարածող «Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի — մասնավորապես»։ «Մանիֆեստը» վերջանում է հետևյալ խոսքերով. «Մենք կաշխատենք բանվորական գանազան խմբերի իրենց սերների դեմ մղած մասնակի կռիվները բացատրել պրոլետարիատի ընդհանուր դասակարգային կռվի տեսակետով։ Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»։

«Պրոլետարիատ» քերքը «Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն» համբարական հոդվածում գրում է, որ «...Դասակարգային կռիվը յուրաքանչյուր հասարակության զարգացման հիմնական ու անհրաժեշտ գործոնն է...» և շարունակում է. «Մեր դրոշակի վրա արձանագրված կլինեն այն բոլոր քաղաքական, սոցիալական պահանջները, որոնց ներկայացնում է Ռուսիայի սոցիալ-դեմոկրատիան։ Այդ պահանջներին մենք, իհարկե կավելացնենք այն բոլորը ինչ որ հատուկ է բացառապես Կովկասին...»։

Այդ հոդվածում մերկացվում են նաև դաշնակցական և հնչակյան պարտիաները։

Ղեկավար պարտիական-քաղաքական հոդվածների կողքին, «Իսկրա»-ի օրինակով, «Պրոլետարիատ»-ը իր սյուն էջերում զետեղել է նաև «Դեպի մարտ» արձակ բանաստեղծությունը «Մրրկարեր» ստորագրության տակ։

«Պրոլետարիատ»-ի առաջին համարում կան Թիֆլիսից, Բաքվից, Բուրիայից ուղարկված նամակներ, որ ցույց են տալիս այդ քերքի խմբագրության բոլշևիկյան վերաբերմունքը և կապը գործարանային բանվորության և գյուղի հետ։ Այդ նամակ-թղթակցություններում գրում են Բաքվի բանվորական շարժման, Թիֆլիսի գործադուլների մասին, կոչ է արվում՝ կազմակերպվել սոցիալ-դեմոկրատիայի դրոշակի տակ։ Նամակներում ողջունում և շնորհավորում են ամառազդ լրագրին՝ «Պրոլետարիատ»-ին։ Նամակներից մեկում վառ գույներով նկարագրված է Բուրիայի Օզուրգեթի գավառի գյուղացիության ելույթները։ Այդ նամակը վերջանում է հետևյալ խոսքերով. «Հնուս չէ փառավոր հաղթանակի օրը, երբ մենք էլ կարմիր դրոշը ձեռքներիս կմխանանք մեր բանվոր եղբայրների հետ և միացած ուժերով կտապալենք միապետության գահը։

Կորչի՛ ինքնակալությունը։— Կեցցե՛ սոցիալական ռևոլյուցիան»։

«Պրոլետարիատ»-ը իր «Ներքին տեսության» մեջ նկարագրում է Ռուսաստանի և Կովկասի քաղաքական-տնտեսական կյանքը, բանվորական ու գյուղացիական շարժումների ծավալումը։

Իր վերջին էջում, «Շարժումից» վերնագրի տակ ընդարձակ ինֆորմացիա

---

* «Պրոլետարիատ», 1902, № 1, էջ 1։ Ոճը թողել ենք նույնը։

է դեռևս Պետերբուրգի և Բաքվի բանվորական շարժումից, պարտիական կյանքից։

«Պրոլետարիատ» քերթի այս համառոտ նկարագրությունը վկայում է նրա բարձր արժանիքների, լենինյան-իսկրայական բնույթի մասին։

Վ. Ի. Լենինը արտասահմանում ծանոթանալով հայերեն «Պրոլետարիատ» քերթի բովանդակությանը, «Իսկրա»-ի 1903 թ. փետրվար 1-ի համարում գրում է. «Կովկասում երևան է եկել մի նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների Միությունը»։ Այդ Միությունը, ինչպես մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը և արդեն ունի իր օրգանը հայերեն լեզվով։ Այնուհետև ամանրամասը խոսում է «Պրոլետարիատ»-ի առաջին համարի նյութերի մասին ու եզրափակում. «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության» Մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը։ Եթե ցանկալի կլիներ, որ այդ փորձը հաջողվեր մինչև վերջը»*։

«Պրոլետարիատ» լրագիրը հրատարակել է մի քանի համար «Պրոլետարիատ»-ի քերթիկներից» անունով ութ էջանոց (16×10) սմ. ծավալի փոքրիկ բրոշյուրներ։ «Պրոլետարիատ»-ի քերթիկներից»-ի № 1-ում մարտադրվել ոգով ընդարձակ տեղեկություններ են տրվում Անդրկովկասում տեղի ունեցած բանվորական շարժումների, գյուղացիական հուզումների մասին։ Նկարագրվում է Բաքվի 1903 թ. ապրիլի 27-ի մեծ միտինգը, պատմվում է Թիֆլիսի երկաթգծի և մի շարք գործարանների բանվորության ծանր վիճակի և ծավալվող գործադուլների մասին։ Հետաքրքիր է Խմերիթիայից և Մինգրելիայից նամակը, որտեղ մանրամասը և պատկերավոր կերպով նկարագրված է գյուղացիների կեղեքումը կալվածատերերի կողմից և գյուղացիական հուզումները, կալվածքների հրդեհումները, ցարական իշխանությունների ռևպրեսիաները։

«Պրոլետարիատ»-ի քերթիկներից»-ի № 2-ը ընդարձակ տեղեկություններ է տալիս Թիֆլիսի նահանգի գյուղացիական շարժումների մասին, ահա մի կտոր այդ քերթիկից. «Մեր գյուղացիներն էլ են արթնանում... Մեր բանակալ կառավարության ջանքերի շնորհիվ դատվելով անթափանցելի խավարի մեջ, նրանք բնազդով ճանաչեցին իրենց թշնամուն և հիմա զարեղ կերպով հետ են մղում ծրիակեր-ազնվականների ու նրանց կարգած դավառապետ-պրիստավների, տերտերների ու առնտուրների բոլոր ոտնձգությունները»։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂՈՒՅՈՒՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Բոլշևիկյան մամուլի դերը և նշանակությունը ռուսական առաջին հեղույցիայի ժամանակաշրջանում շատ մեծ է եղել։ Մեր պարտիան մամուլի միջոցով իր ազդեցությունն է ծավալել հեղույցիոն մասսաների վրա, մամուլը հանդիսացել է պարտիայի սկզբունքների, լոզունգների տարածման հզոր զենք, մասսաներին կազմակերպելու կարևոր մի միջոց։ Այդ ժամանակաշրջանին են վերաբերում Վ. Ի. Լենինի խոսքերը. «Ղեկավարել պարտիան շարժման այժ-

* Վ. Ի. Լենին. Երկեր. հա. 6, էջ 411

մյան վիճակում, չտեսնված ամեման պայմաններում, կարելի է միմիայն մասսայի մոջոցով *։

1905—1907 թվերին մեր պարտիայի հրատարակչական գործունեությունը շատ ծավալվեց։ Հրատարակվում էին բրոշյուրներ, թերթիկներ, կոչեր և հանդարավոր օրինակներով տարածվում մասսաների մեջ։ 1905 թվի ամեն մի ամսում, միջին թվով, հրատարակվել է մոտ մեկ միլիոն օրինակ բոլշևիկյան թերթիկներ, կոչեր, բրոշյուրներ։

Մեր պարտիան առանձնապես խոշոր չափերով օգտագործում էր թռուցիկների և թերթիկների հրատարակումը։ Հազարավոր օրինակներով տպագրված թերթիկները, թռուցիկները պարտկազմակերպությունները տարածում էին լայն մասսաների մեջ և այդպիսով ժողովրդին էին հասցնում պարտիայի լոզունգները, պարզաբանում էին ընթացիկ քաղաքական դեպքերը։ Թերթիկները և թռուցիկները, բոլշևիկյան լրագրերի հետ միասին, մասսաների մեջ հակայական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք էին կատարում, մասսաներին կազմակերպում էին պարտիայի շուրջը, զինավարում էին շարժումը։

Խոշոր հրատարակչական աշխատանքներ էին կազմակերպել պարտիական կազմակերպությունները նաև Անդրկովկասում։ Բացի թերթերից Անդրկովկասում լույս են ընծայվել դրքեր, բրոշյուրներ, թերթիկներ, թռուցիկներ, հիմնականում երեք լեզվով՝ վրացերեն, ռուսերեն և հայերեն։

Անդրկովկասում ծավալված հրատարակչական աշխատանքների մասին ՌՍԴԲԿ Կովկասյան Միության Կոմիտեն, «Պրոլետարիա» թերթի № 15-ում հաշվետվություն է տպագրել, որից երևում է, որ 1905 թվի առաջին կիսամյակում հրատարակվել ու մասսայականացվել են 71 000 օրինակ թերթիկներ ու թռուցիկներ և 45 000 օրինակ բրոշյուրներ։

Այժմ անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել մեր պարտիայի կենտրոնական լրագրերի և առանձին՝ Անդրկովկասի ու հայերեն բոլշևիկյան լրագրերի վրա։

Պարտիայի երկրորդ համագումարում, ինչպես հայտնի է, անջատում առաջացավ բոլշևիկների և մենշևիկների միջև ու պայքարը դնալով սրվեց։ «Իսկրա»-ն անցավ մենշևիկների ձեռքը և նրա էջերից մենշևիկները սկսեցին պրոպագանդել իրենց կազմակերպչական ու տակտիկական օպորտունիզմը, հարձակվել Լենինի ու բոլշևիկների վրա։ Լենինյան «Իսկրա»-ի կորուստը մեծ հարված էր բոլշևիկներին։ 1904 թվի ամռանը բոլշևիկները ժենևում կազմակերպում են հրատարակություն և տպագրում են մենշևիկների քայքայիչ գործունեության դեմ ուղղված մի շարք բրոշյուրներ, դրքեր, թերթիկներ։

Բազմաթիվ արգելակներից, մենշևիկների հարուցած խոչընդոտներից հետո, բոլշևիկյան «Պոնչ-Բրուևիչի ու Լենինի խմբակից» նոր հրատարակչությունը գնալով ուժեղացրեց իր կապերը Ռուսաստանի պարտկազմակերպությունների հետ, սկսեց օժանդակություն ստանալ բոլշևիկյան պարտիական կոմիտեներից, նույն թվում նաև Կովկասյան կոմիտեից։

Երբ որոշակի պայմաններ արդեն կային, Վ. Ի. Լենինը սկսեց բոլշևիկյան նոր օրգանի ստեղծման գործը։ Բոլշևիկներին միանգամայն անհրաժեշտ էր լրագիրը, որպեսզի պարտիայի շուրջը համախմբեին ռևոլյուցիոն մասսաներին,

* Վ. Ի. Լենին. Երկեր. հա. 34, էջ 312

լայն ագիտացիա ծավալեն հոգուտ պարտիայի III համագումարի հրավիրման և մերկացնեն մենշևիկների օպորտունիզմը։

Ով ահա, 1904 թ. նոյեմբերի 29-ին (դեկտեմբերի 12) բոլշևիկների խմբակի ժողովում, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, որոշվում է հրատարակել թերթ «Վպերյոդ» անունով։

«Վպերյոդ»-ը հրատարակվում էր Ժնևում, անլեգալ լրագիր էր (շաբաթաթերթ), լույս է տեսել 1904 թվի դեկտեմբերի 22-ից (4 հունվարի 1905 թ.) * մինչև 5 (18) մայիսի 1905 թիվ, ընդամենը 18 համար։ Թերթը գաղտնի կերպով ուղարկվում էր Ռուսաստան և տարածվում էր տեղական պարտկազմակերպություններում։

«Վպերյոդ»-ի խմբագրության կազմում էին՝ Վ. Ի. Լենինը, Վ. Վ. Վորովսկին, Մ. Ս. Օլմինսկին և Ա. Վ. Լունաչարսկին։ Թերթին աշխատակցում էին Ն. Կ. Կրուպսկայան, Ա. Ի. Ելիզարովա-Ուլիանովան, Ս. Ի. Գուսևը և ուրիշներ։ «Վպերյոդ»-ի մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Վպերյոդ լրագրի ուղղությունը դա հին «Իսկրա»-ի ուղղությունն է։ Հանուն հին «Իսկրա»-ի «Վպերյոդ»-ը վճռականապես պայքարում է նոր «Իսկրա»-ի դեմ» **։

Վ. Ի. Լենինը հենց սկզբից աշխատում էր «Վպերյոդ»-ը կապել սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների և առաջավոր բանվորների հետ, ստեղծել թղթակիցների, լայն ակտիվի ցանց։ «Թյուրիմացություն է,— գրում էր Վ. Ի. Լենինը,— թե հենց գրականագետները և միայն գրականագետներն (այս բառի պրոֆեսիոնալ իմաստով) են ընդունակ հաջողությամբ մասնակցելու օրգանում. ընդհակառակը, օրգանը կենդանի կլինի ու կենսունակ այն ժամանակ, երբ մի հինգ դեկավար և շարունակ գրող գրականագետների դիմաց կան հինգ հարյուր և հինգ հազար ոչ-գրականագետ աշխատողներ... Իրոք աշխույժ օրգանը պետք է տպագրի ուղարկվածի մեկ տասներորդը, մնացածն օգտագործելով ինֆորմացիայի և գրականագետներին ցուցումներ տալու համար» ***։

«Վպերյոդ»-ի հրատարակության առթիվ լույս ընծայված խմբագրական ծանուցման մեջ հետևյալ կերպ էին բնորոշվում թերթի նպատակները և խնդիրները. «Պատմական մոմենտի պայմանները նրաշխիք են, որ մենք գտնվում ենք շարժման նոր, ավելի բարձր ձևերի անցման նախօրյակին։ Կայծից արդեն բոց է բռնկվել։ Մոտ է օրը, երբ այդ բոցը ժողովրդական ապստամբության հրդեհի կվառնկի։ Գնալով աճում է սոցիալ-դեմոկրատիայի պատասխանատվությունը պրոլետարիատի հանդեպ։ Ավելի ու ավելի սուր պահանջ է դրվում իրական քաղաքական դեկավարություն ցույց տալ նրա պայքարին։ Այսպիսի մոմենտում պարտիան չի կարող մնալ առանց լրագրի։ Դեկավար օրգանը պետք է լինի սերտ միասնության մեջ պարտիայի հետ, անքակտելի կապ ունենա պրոլետարիատի շարժման հետ, առաջ ընթանա, լուսավորի ուղին, նախազգուշացնի սխալ ու կեղծ քայլերից։ Միայն իրրև պարտիայի կոլեկտիվ ստեղծագործության արդյունք՝ նա կարող է իր կոչումն արդյունավետ կատարել։ Դեկավար, այդպիսի օրգանը պետք է լինի (միաժամանակ) պրոլետարիատի գործիքը։ Նրա խնդիրն է դառնալ պրոլետարիատի միացյալ լուսատուն»։

---

* Փակագծերի մեջ նշած թվերը ցույց են տալիս նոր ոճով

** Վ. Ի. Լենին. Երկեր հ. 8, էջ 169

*** Վ. Ի. Լենին. Երկեր հ. 7, էջ 321

«Վպերյոդ»-ը ուներ հետևյալ մշտական բաժինները՝ «Հասարակական շարժումից», «Քաղաքական շարժումից», «Պարտիայից», «Կռանո և աքսորը», «Փոստ արկղ» և այլն։

Վ. Ի. Լենինի հոդվածները «Վպերյոդ»-ում լուսաբանում էին պրոլետարիատի նպատակները և տակտիկան ռևոլյուցիայում, մերկացնում էին մենշևիկների հակապրոլետարական տակտիկան։ Այս լրագիրը մեծ դեր խաղաց մենշևիկների չլուսաղական հակապարտիական տակտիկան մերկացնելու, նրանցից սահմանազատվելու և պարտիայի III համագումարի հրավիրումը նախապատրաստելու ուղղությամբ։

«Վպերյոդ» լրագրի էջերում Վ. Ի. Լենինը մշակել է բոլշևիկների տակտիկան զինված ապստամբության մասին, ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության մասին, պրոլետարիատի ու գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրայի մասին, սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքի մասին դեպի գյուղացիական և ազգային շարժումները, դեպի լիբերալ բուրժուազիան, դեպի ռուս-ճապոնական պատերազմը։

«Վպերյոդ» լրագիրը հսկայական աշխատանք տարավ պարտիային և պրոլետարիատին նախապատրաստելու համար 1905 թվի վերահաս ռևոլյուցիային։

Մեր պարտիայի III համագումարի որոշումների հիմքում դրվեցին «Վպերյոդ» լրագրում լույս տեսած՝ Վ. Ի. Լենինի դրույթները «Վպերյոդ»-ի տակտիկական գիծը դարձավ պարտիայի III համագումարի տակտիկական գիծ։

Պարտիայի III համագումարը հատուկ բանաձևով նշել է Լենինյան «Վպերյոդ» լրագրի կատարած կարևոր դերը, հավանություն է տվել նրա գործունեությանը։ Պարտիայի III համագումարի որոշմամբ «Վպերյոդ»-ի փոխարեն, իբրև պարտիայի կենտրոնական օրգան սկսեց լույս տեսնել «Պրոլետարի» թերթը։

«Պրոլետարի» թերթը նույնպես հրատարակվել է ժնևում. շաբաթաթերթ էր, լույս է տեսել 1905 թ. մայիսի 14-ից (27) մինչև նոյեմբերի 12-ը (25) ընդամենը 26 համար։ Պարտիայի կենտկոմի կողմից նրա խմբագիր էր նշանակվել Վ. Ի. Լենինը։ «Պրոլետարի»-ի հենց առաջին համարում տպագրվեցին պարտիայի III համագումարի բանաձևերը, պարտիայի կանոնադրությունը և Վ. Ի. Լենինի «Երրորդ համագումարը» հոդվածը։ «Պրոլետարի»-ի էջերում հետագայում սիստեմատիկաբար տպագրվում էին հոդվածներ՝ նվիրված պարտիայի III համագումարի որոշումների մասսայականացմանը։ «Պրոլետարի» լրագիրը ոչնչացնող քննադատություն էր ենթարկում մենշևիկների համաձայնողական տակտիկան և մերկացնում էր լիբերալ բուրժուազիայի կեղծ դեմոկրատիզմը։ «Պրոլետարի»-ի էջերում տպագրվում էին բազմաթիվ թղթակցություններ՝ Ռուսաստանի բանվորական շարժման, ծավալվող գործադուլների, ցույցերի, մխիթնդների մասին։ «Պրոլետարի»-ն իր թղթակցություններում ու բազմաթիվ հոդվածների մեջ լայնորեն լուսաբանել է գյուղացիական շարժումները, 1905 թվի ռևոլյուցիոն ելույթները բանակում և նավատորմում։

Լենինյան «Պրոլետարի» լրագիրը կարևոր դեր է խաղացել ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում՝ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի ղեկավարման գործում, զինված ապստամբության նախապատրաստման գործում, մի հզոր միջոց է եղել բոլշևիկյան տակտիկայի մասսայակա-

նացման աշխատանքներում, մենշևիկների դեմ պայքարելու և ռևոլյուցիայի հաղթանակի համար։

1905 թ. հունիսին «Ռուսոմկինո» պրահանովի ապաստամբության ընթացքի մասին «Պրոլետարիա»-ն ընդարձակ հաղորդագրություններ է տպագրել, քննադատել է սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների թույլ տված սխալները։ Վ. Ի. Լենինը հատուկ առաջնորդող է նվիրել այդ ապստամբությանը՝ «Ռևոլյուցիոն բանակ և ռևոլյուցիոն կառավարություն» վերնագրով։ («Պրոլետարի» № 7)։

«Պրոլետարիյ»-ն վճռականորեն մերկացրել է ցարիզմի խռովանավելու քաղաքականությունը և հետևողականորեն կամպանիա է տարել ակտիվ բոյկոտի ենթարկելու Բուլիգինյան Դուման։ Այդ հարցին են նվիրված Վ. Ի. Լենինի հետևյալ հոդվածները՝ «Բուլիգինյան Դումայի բոյկոտը և ապստամբությունը» («Պրոլետարի» № 12), «Վե՛րջ տակտիկայի մասին, բայց տվե՛ք պարզ լուծումներ», «Պատյամենտարիզմի խաղ» («Պրոլետարի» № 18) և այլն։

Ինչպես հայտնի է, լիբերալ բուրժուազիան վախենալով ռևոլյուցիոն ժողովրդից, ցարիզմի հետ գործարք կնքեց, ստանալով որոշ փշրանքներ։ Ահա «Պրոլետարի»-ում իրար հետևից լույս են տեսնում Վ. Ի. Լենինի հոդվածները՝ «Ռևոլյուցիոն պայքարը և լիբերալ մակլերությունը», «Բուրժուական դավաճանության առաջին քայլերը», «Պրոլետարիատի պայքարը և բուրժուազիայի ստորաքարշությունը», «Բուրժուազիան սակարկում է ինքնակալության հետ, ինքնակալությունը սակարկում է բուրժուազիայի հետ», «Պրոլետարիատը կռվում է, բուրժուազիան գաղտագողի մոտենում է իշխանությանը»։

«Պրոլետարի»-ն անմիջապես մերկացրել է ցարի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը որպես ժողովրդական մասսաների խաբեություն, որպես թակարդ դյուրահավատների և կոչ է արել ժողովրդի ուժերը համախմբել և համաժողովրդական ընտված ապստամբության միջոցով կործանել ցարիզմը։

Այս բոլորը վկայում են, որ «Պրոլետարի» լրագիրը, ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում շատ խոշոր դեր է կատարել բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի ղեկավարման գործում, սուր զենք է հանդիսացել բոլշևիկյան սկզբունքների անցկացման, մենշևիկների դեմ մղված պայքարում։

Այդ ժամանակաշրջանում մեծ աշխատանք էր կատարվում բոլշևիզմի պայքարի ուղղությամբ Կովկասում։ Բոլշևիկյան կազմակերպությունները ծավալել էին ընդարձակ հրատարակչական աշխատանք։ Հրատարակվում էին անլեգալ թերթիկներ, թռուցիկներ, բրոշյուրներ։

ՌՍԴԲԿ Կովկասյան Միության առաջին համագումարը (1903 թ.) որոշեց միացնել վրացական «Բրձոլա» («Պայքար») և հայերեն «Պրոլետարիատ» թերթերը և հրատարակել մեկ ընդհանուր օրգան — երեք լեզվով՝ վրացերեն «Պրոլետարիատիս բրձոլա», ռուսերեն «Բորբա պրոլետարիատա» և հայերեն «Պրոլետարիատի կռիվը»։ Այդ թերթի խմբագրական աշխատանքները 1904 թվականից, աքսորից վերադառնալով, ղեկավարում էր Ի. Վ. Ստալինը, խմբագրական կազմում էին՝ Ա. Գ. Ծուլուկիձեն, Ս. Գ. Շահումյանը, Մ. Ցխակայան և ուրիշներ։

«Պրոլետարիատիս բրձոլա»-ն, հայերեն «Պրոլետարիատի կռիվը» և ռուսերեն լրագիրը լույս էին տեսնում Թիֆլիսում, Հավլաբարի տպարանում։

«Պրոլետարիատի կուիվը» հրատարակվել է 1903 թվականի ապրիլ-մայիսից մինչև 1905 թ. հոկտեմբեր ամիսը, ընդամենը 12 համար։

«Պրոլետարիատի կուիվը» հետևողականորեն պաշտպանում էր պարտիայի լենինյան՝ իդեոլոգիական, կազմակերպական և տակտիկական հիմունքները։ «Պրոլետարիատի կուիվը» քերթի խմբագրությունը սերտ կապ էր պահպանում Վ. Ի. Լենինի և բոլշևիկյան կենտրոնական թերթերի խմբագրությունների հետ։ Երբ 1904 թ. դեկտեմբերին ծանոթանում լույս տեսավ «Վպերյոդ» թերթի հրատարակման մասին, Կովկասյան Միութենական կոմիտեն կազմեց մի գրական խմբակ՝ «Վպերյոդ»-ին աջակցելու համար։

«Պրոլետարիատի կուիվին» աշխատակցելու վերաբերյալ Կովկասյան Միութենական կոմիտեի հրավերին Վ. Ի. Լենինը 1904 թ. դեկտեմբերի 20-ին գրած նամակում պատասխանել է. «Թանկագին ընկերնե՛ր։ Ստացա «Պրոլետարիատի կուիվի» վերաբերյալ ձեր նամակը։ Աշխատում եմ գրել և կհաղորդեմ խմբագրության իմ ընկերներին»։

«Պրոլետարիատի կուիվը» սիստեմատիկորեն, իր էջերում հոդվածներ ու նյութեր էր արտատպում լենինյան «Իսկրա»-ից, հետագայում նաև «Վպերյոդ»-ից և «Պրոլետարի»-ից։ Այդ թերթում տպագրվել են Վ. Ի. Լենինի հետևյալ հոդվածները՝ «Ինքնակալությունը տապանվում է» («Իսկրա», № 35) «Երրորդ համագումարը» («Պրոլետարի» № 1), «Ռևոլյուցիոն պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները» և այլն։

Մի շարք հոդվածներում լրագիրը բացատրում, մասսայականացնում էր լենինյան դրույթները. օրինակ. «Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարությունը և մեր խնդիրները, դա Վ. Ի. Լենինի «Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարություն» հոդվածի վերապատմումն է։

«Պրոլետարիատի կուիվը» թերթում այդ շրջանում տպագրվել են Ի. Վ. Ստալինի հետևյալ հոդվածները՝ 1. «Ինչպես է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» (№ 7) — որտեղ հիմնավորում և բացատրում է մեր պարտիայի ծրագիրը ազգային հարցում, քննադատում է օպորտունիստական տեսակետները և պաշտպանում է պրոլետարիատի դասակարգային կազմակերպությունների կատուգման ինտերնացիոնալ սկզբունքը։ Այդ հոդվածում Ի. Վ. Ստալինը սուր քննադատության է ենթարկում «Հայ սոցիալ դեմոկրատական բանվորական» կազմակերպությանը՝ «սպեցիֆիկներին», նրանց բուրժուական-նացիոնալիստական էությունը։ 2. «Պրոլետարների դասակարգը և պրոլետարների պարտիան» (№ 8) հոդվածում պաշտպանվում է պարտիայի կազմակերպական հիմունքները, որ առաջադրել է Վ. Ի. Լենինը իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» գրքում։ 3. «Զինված ապստամբությունը և մեր տակտիկան» (№ 10) հոդվածում Ի. Վ. Ստալինը շարադրում է մարքս-լենինյան ուսմունքը զինված ապստամբության մասին։ 4. «Պրոլետարիատի կուիվը» լրագրի № 12-ում տպագրված են Ի. Վ. Ստալինի երկու հոդվածները՝ «Ռեակցիան ուժեղանում է» և «Բուրժուազիան քակարդ է դնում» — որոնցում մերկացվում է լիբերալ բուրժուազիայի և նրան օժանդակող մենշևիկների ռևոլյուցիայի հանդեպ դավաճանական գործունեությունը և բացահայտորեն բացատրում է զինված ապստամբության անհրաժեշտությունը։

«Պրոլետարիատի կուիվը» թերթում տպագրված են Ի. Վ. Ստալինի նաև հետևյալ հոդվածները՝ «Ցարի մանիֆեստը և ժողովրդական ռևոլյուցիան», «Պատասխան «Սոցիալ-դեմոկրատ»-ին» և այլն։

1904 թվի ապրիլին Ստեփան Շահումյանը վերադառնալով Բեռլինից, իր շուրջն է համախմբում մի շարք հայ ռևոլյուցիոներների (Ս. Սպանդարյան, Բ. Կնունյանց և ուրիշներ) և հրատարակչական մեծ գործունեություն է ծավալում, Ստ. Շահումյանի թարգմանությամբ (Բեռլում) լույս է ընծայվում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը». նա նաև նախագծում է հրատարակել «Պրոլետարիատի կռիվը» հայերեն թերթի և «Պրոլետարիատի կռվի թերթիկի» հրատարակմանը։

«Պրոլետարիատի կռվի թերթիկ»-ի 1904 թ. № 12—13 վերահրատարակված են Ստ. Շահումյանի «Հայ իրականության» հոդվածը, որտեղ հրաշալի կերպով տրված է հայ իրականության նկարագիրը և անողոք կերպով մերկացված են բուրժուական նացիոնալիստները։

Ստորև բերում ենք «Պրոլետարիատի կռիվը» թերթի մեկ համարի բովանդակությունը, որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի լայն պլանով էր տարվում թերթի խմբագրումը և ինչպիսի մարտական բնույթ ուներ այդ թերթը։

1903 թվի ապրիլ—մայիս № 2—3

— Նախագիծ ծրագրի Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների Միության։

— Կարլ Մարքս։

— Նոքա կարծնանան... (Վ. Հյուգոյից)։

— Նամակ Բինֆլիսից։—Նամակ Բաքվից (2 հատ)։—Նամակ Բաթումից։—Նամակ Քութայիսից։— Նամակ Գուրիայից։— Նամակներ գործարաններից և արհեստանոցներից։

— Միապետությունը տատանվում է։ [Վ. Ի. Լենինի հոդվածն է. արտատպած «Իսկրա»-ի № 35-ից]։

— Աստծո տաճար, թե բանտ։ [Սատրապությունն «Բանտարկյալ բանվորը»]։

— Մանուցումն։ [«Կազմակերպիչ Կոմիտեի կազմելու մասին»]։

— Նամակ խմբագրությանն։ [Կա նաև այդ նամակի պատասխանը]։

— Շարժումից։ [Ընթացիկ ինֆորմացիա]։

«Պրոլետարիատի կռիվը» թերթի մի քանի համարներում կան նաև, արտատպին տեսություններ, ակնարկներ, բանաստեղծություններ, ռևոլյուցիոն երգեր, հատվածներ գեղարվեստական երկերից։

Մեր պարտիայի օրգան «Պրոլետարիա»-ն գրախոսական է տպել «Պրոլետարիատի կռիվը» թերթի ոուսերեն № 3-ի մասին, միանգամայն դրական գնահատական է տվել և ողջունել Կովկասյան Միության հրատարակչական գործունեությունը։

Վ. Ի. Լենինը նշել է «Պրոլետարիատի կռիվը» թերթի մարքսիստական կայունությունը և հրապարակախոսական լավագույն արժանիքները։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԼԵԳԱԼ ԼՐԱԳՐԵՐԸ

1905 թվի պրոլետարական ռևոլյուցիոն շարժումները հզոր ալիքով բարձրացան. գարնանից սկսված գյուղացիական ելույթները ու բանակում սկսված ապստամբությունները, հոկտեմբերին հասան ամենաբարձր լարվածության, երկրում սկսված քաղաքական ընդհանուր գործադուլը նոր հարվածով ցնցեց ինքնակալությունը և ցարիզմը, ստիպված, դիմեց զիջումների։ Ցարը դիմեց

խաբեության, հոկտեմբեր 17-ի մանիֆեստով, թույլատրեց որոշ քաղաքացիական ազատություններ։

Ահա այդ օրերին մեր պարտիան օգտագործեց ժամանակը և Պետերբուրգում հրատարակեց ընովայա ժիզնʼ բոլշևիկյան առաջին ամենօրյա լեգալ լրագիրը։ ընովայա ժիզնʼ-ը լույս է տեսել 1905 թ. հոկտեմբերի 27-ից (նոյեմբ. 9) մինչև 3 դեկտեմբերի (16). ընդամենը 28 համար։

Պայմանները ծանր էին նորից. բոլշևիկներին չէր թույլատրվում լրագիր հրատարակել, ընովայա ժիզնʼ-ի իրավական խմբագիրը բանասաեղծ Մինսկին էր, իսկ փաստորեն լրագիրը հանդիսանում էր պարտիայի կենտրոնական օրգանը (ՙՊրոլետարիʼ-ն դադարել էր), խմբագրում էին բոլշևիկները, Ա. Մ. Գորկին էլ ցույց էր տալիս նյութական և գրական աջակցություն։

ընովայա ժիզնʼ-ը հրատարակվում էր առանց գոյություն ունեցող ցենզուրական թույլտվության, նա մարտական թերթ էր, սկսված ռևոլյուցիայի պայմաններում պաշտպանում էր լենինյան սկզբունքները։ 1905 թ. նոյեմբերին արդեն Պետերբուրգ է գալիս Վ. Ի. Լենինը և անմիջապես իր ձեռքն է վերցնում ընովայա ժիզնʼ լրագրի ղեկավարությունը։

Որպեսզի գաղափար կազմվի այդ թերթի բովանդակության մասին, անհրաժեշտ ենք համարում համառոտակի նկարագրել նրա բաժինները, գործունեությունը։

Լրագիրը ուներ հետևյալ բաժինները՝ ՙՌուսական մամուլʼ, ՙքրոնիկաʼ, ՙմարզային բաժինʼ, ՙպարտիական կյանքիցʼ, ՙբանվորական կյանքիցʼ, ՙքրոֆեսիոնալ միություններʼ, ՙլուսանկական հասատատություններումʼ, ՙարտասահմանյան բաժինʼ։ Թերթում նյութերը տպվում էին նաև հետևյալ ենթավերնագրերի տակ՝ ՙբանակումʼ, ՙնամականեր խմբագրությանʼ, ՙդատական քրոնիկաʼ, ՙթատրոն և երաժշտությունʼ և այլն։

Համախակի տպագրվում էին նաև բանաստեղծություններ, արձակ գործեր, ֆելիետոններ։

ընովայա ժիզնʼ-ում լույս են տեսել Վ. Ի. Լենինի հետևյալ հոդվածները՝ ՙՊարտիայի վերակազմության մասինʼ (№ 9), ՙՊարտիական կազմակերպություն և պարտիական գրականությունʼ (№ 12), ՙՊրոլետարիատը և դյուզացիությունըʼ, ՙՄեր խնդիրները և բանվորների դեպուտատների Սովետըʼ և այլն։

Չնայած հատուկ բաժին չկար, բայց ընովայա ժիզնʼ-ը կանոնավոր կերպով լույս էր ընծայում հոդվածներ, քղթակցություններ գյուղացիական շարժումների, երկրում ծավալվածʼ ագրարային հուզումների մասին, որոնք երբեմն վեր էին աճում գյուղացիական ապստամբություններին։

Թերթում նրած ՙբանվորական դեպուտատների Սովետումʼ վերտառության տակ լուսաբանվել են Պետերբուրգի Սովետի, ինչպես նաև Մոսկվայի, Կիևի, Օդեսայի, Ռոստովի ու այլ քաղաքների Սովետների գործունեությունը։ Թերթում լայնորեն արտացոլվում էին Ռուսաստանում ծփացող ռևոլյուցիոն շարժումները՝ ՙքրոնիկաʼ, ՙքրոֆեսիոնալ միություններʼ, ՙմարզային բաժինʼ և այլ բաժիններում։

ընովայա ժիզնʼ-ում համարյա միշտ տպագրվում էին գրական-գեղարվեստական նյութեր՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, ակնարկներ, ֆելիետոններ, որոնցում արտացոլվում էին 1905 թ. ռևոլյուցիոն անցքերը։

Ցարիզմը ամեն արգելքի դիմում էր, որպեսզի խափանի ընովայա ժիզնʼ-ի

հրատարակությունը. Քերքի 27 համարներից 15-ի վրա արգելք է դրվել, 27-րդ համարի վրա Քերքը փակվել է, 28-րդ համարը լույս է տեսել անլեգալ։

Առաջին լիգալ բոլշևիկյան Քերքը Անդրկովկասում, որ հրատարակվել է Ի. Վ. Ստալինի և Ս. Գ. Շահումյանի ղեկավարությամբ, եկավկազսկի ռաբոչի լիստոկ Քերքն է։

Այդ Քերքը լույս է տեսել 1905 թվի նոյեմբեր 20-ից (դեկտեմբ. 3) մինչև դեկտեմբերի 14-ը (27) — ռուսերեն. հրատարակվել է 17 համար, որից վերջի երկուսը «Ելիզավետոպոլսկի վեստնիկ» անունով։

«Եկավկազսկի ռաբոչի լիստոկ»-ը հանդիսանում էր ՌՍԴԲԿ Կովկասյան Միության օրգանը։

Քերքի № 1-ում խմբագրությունը հայտնում է, որ այդ լրագիրը ռևոլյուցիոն դեմոկրատիայի օրգանն է և «լուսաբանելու է բանվոր դասակարգի կարիքները և շահերը, վերջնական նպատակը և մոտավոր խնդիրները գիտական սոցիալիզմի տեսակետներով, բանվորների և ռևոլյուցիոն ժողովրդի միլուս շերտերում մասսայականացնելու է ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի հերթական լոզունգները...»։

«Եկավկազսկի ռաբոչի լիստոկ»-ը լայնորեն պրոպագանդում էր զինված ապստամբության գաղափարը։ Լրագրի № 10-ում տպված «Բարիկադների մասին» հոդվածում խորհուրդներ են տրվում զինված ապստամբության և բարիկադային կռվի մասին։ № 7-ում տպագրված «Ռևոլյուցիան և բանակը» առաջնորդողում շեշտվում է բանակի և ժողովրդի սերտ կապի անհրաժեշտությունը. «Ժողովուրդը առանց բանակի, բանակը առանց ժողովրդի — անուժ են,— գրում է Քերքը,— ժողովրդի դաշինքը ռևոլյուցիոն բանակի հետ՝ անհաղթելի է»։ Քերքի «Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության մասին» (№ 7) և «Նորից ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության մասին» (№ 10) հոդվածներում լուսաբանվում են ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության խնդիրները, հիմնավորվում է սոցիալ-դեմոկրատիայի մասնակցության հարցը այդ կառավարության կազմում։ Լրագրի № 14-ում տպագրված «Ռևոլյուցիոն ինքնավարությունը և ժամանակավոր կառավարությունը» հոդվածում խստորեն քննադատվում է մենշևիկյան տեսակետները ռևոլյուցիոն ինքնավարության մասին։ «Եկավկազսկի ռաբոչի լիստոկ» լրագիրը լայնորեն պարզաբանում էր բոլշևիկյան տակտիկան, զետեղելով հոդվածներ և ՌՍԴԲԿ Համառուսական և Կովկասյան Միության IV կոնֆերենցիայի որոշումները և բանաձևերը՝ Պետական Դումայի բոյկոտի, գյուղացիության մեջ տարվելիք աշխատանքների, բանվորական դեպուտատների Սովետների, ազգային հարցի և այլնի մասին։ «Եկավկազսկի ռաբոչի լիստոկ» լրագիրը իր «Մամուլի տեսություն» մշտական բաժնում պարբերաբար խիստ քննադատության էր ենթարկում բուրժուանացիոնալիստական՝ «Վոզրոժդենիե», «Ծնորխա Պուրցելիե» և «Մշակ» Քերքերը։

«Եկավկազսկի ռաբոչի լիստոկ»-ում Ստ. Շահումյանը ունի հետևյալ հոդվածները՝ «Ռևոլյուցիայի նոր հաղթությունը» (1905 թ. № 3), «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական զիտության մեջ» (1905 թ. № 6), «Ութժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրումը» (1905 թ. № 8)։ Առաջին հոդվածում Ստ. Շահումյանը գրում է լեհաստանում տեղի ունեցող ռևոլյուցիոն ելույթների մասին. «Ճարակական լծի տակ հեծծող բոլոր ազգությունների, պրոլետարների համերաշխությունը — ռևոլյուցիայի հաղթության գլխավոր գրավականն է։ Ճարական կառավարության նոր ավանտյուրան

միայն ամրապնդեց այդ համերաշխությունը, միայն ավելացրեց ռևոլյուցիայի շանսերը։

Կեցցե՛ ռուսաստանյան պրոլետարիատի ինտերնացիոնալ համերաշխությունը։

«Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ հոդվածում Ստ. Շահումյանը քննադատում է միջազգային օպորտունիզմը, նկատելով մատերիալիստական դիալեկտիկայի դիրքերից, լուսաբանում է էվոլյուցիոնիզմի և ռևոլյուցիոնիզմի էությունը։

Նա գրում է. «Հասարակական պատմության մատերիալիստական ըմբռնման՝ պատմության ա կ ը ն ա կ ա ն, այսպես ասած, շարժիչ ֆակտորը տնտեսական ֆակտորն է։ Մնացած բոլոր, այսպես կոչված, իդեոլոգիական ֆակտորները—կրոն, մորալ, գիտություն, իրավունք—երկրորդային, կամ ածանցիկ ֆակտորներ են։ Այնուհետև նա նշում է վերնաշենքի ազդեցությունը զրագիտ վրա, ասելով. «Միայն գիտակից վերաբերմունքը դեպի պատմական պրոցեսը, պատմական զարգացման օրենքների ճիշտ, դիտական ըմբռնումը, էվոլյուցիոնիզմը ռևոլյուցիոնիզմի հետ համատեղելու ընդունակությունը,— միայն սա է ապահովում մեզ համար խելացի, նպատակահարմար, ճշմարտապես ռևոլյուցիոն գործունեություն, «ընթացիկ բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը» մի մարտաշունչ հոդված է՝ բոլշևիկյան ժուռնալիստիկայի լավագույն նմուշներից։

Իր վերջին համարում, բանվորական դեպուտատների Պետերբուրգի Սովետի ֆինանսական մանիֆեստը հրատարակելու համար լրագիրը փակվեց ցարիզմի կողմից։

1905 թվի Դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո, ցարիզմը դաժան ռեպրեսիաների դիմեց բոլշևիկյան պարտիայի, ռևոլյուցիոն բանվորների, գյուղացիների, զինվորների դեմ։

Ցարիզմը հալածանք սկսեց նաև բանվորական, բոլշևիկյան մամուլի դեմ։ Բայց ռևոլյուցիոն բանվորությունը, գյուղացիությունը միանգամից տեղի չտրվեցին, մարտերով էին նահանջում։ Բոլշևիկները պահպանել էին իրենց անլեգալ պարտիական ապարատը և ամեն կերպ օգտագործում էին թերթերը, լեգալ աշխատանքի հնարավորությունները ժողովրդի հետ իրենց սերտ կապը պահպանելու, ամրապնդելու համար։ Լեգալ բոլշևիկյան թերթեր են լույս տեսել նաև 1906 թվին և 1907 թ. գարնանը։ 1906 թվի փետրվարին հրատարակվել է «Պարտիյնին-իզվեստիա» լրագիրը, որը նախապատրաստեց պարտիայի IV (Ամստերդամի) համագումարը։

1906 թվի ապրիլին Պետերբուրգում լույս է տեսել բոլշևիկյան լեգալ շաբաթաթերթ «Վոլնոե ժիզնի»-ն։

1906 թվի գարնանը մեր պարտիան սկսեց հրատարակել «Վոլնոե լեգալ թերթը։ «Վոլնոե»-ն լույս է տեսնել 1906 թվի ապրիլի 26-ից (մայիս 9) մինչև մայիսի 24-ը (հունիս 6), եղել է ամենօրյա թերթ. հրատարակվել է ընդամենը 25 համար։

«Վոլնոե»-ն խմբագրում էր Վ. Ի. Լենինը. խմբագրության մեջ մասնակցում էին նաև Վ. Վորովսկին և Մ. Օլմինսկին։ «Վոլնոե»-ն ուներ հետևյալ բաժինները՝ «Ներուսական մամուլ», «Քրոնիկա», «Մարզային բաժին», «Պարտիական կյանքից», «Բանվորական կյանքից», «Պրոֆեսիոնալ միություններ», «Ուսումնական հաստատություններում», «Ագրարային բաժին»,

«Պետական Դումա», «Բոլշևիկների շրջանում» և «Լրագրերի, ժուռնալների մասին» այս քերթում բավական մեծ տեղ էր հատկացվում Պետական Դումային և բոլշևիկների վերաբերմունքին դեպի Դուման։ Քերթում տպագրվել են՝ պարապիչի IV համագումարի բոլշևիկյան բանաձևի նախագիծը Դումայի մասին (№ 12), Վ. Ի. Լենինի՝ «Կադետները խանգարում են Դումային դիմելու ժողովրդին», «Վատ խորհուրդներ», «Ոչ հող, ոչ ազատություն և շատ ուրիշ մարտական հոդվածներ։

«Վոլնաո»-ն համերաշխ գնալով կյանքի հետ, իր էջերում, օրը-օրին հաղորդումներ է տպել 1906 թվին ծավալված գյուղացիական հուզումների, ելույթների մասին, անցկացնելով բանվորական շարժման հետ գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները միաձուլելու բոլշևիկյան գիծը։

«Վոլնաո»-ն նույնպես փակվեց ցարական կառավարության կողմից. նրա փոխարեն բոլշևիկները 1906 թ. մայիսի 26-ից (հունիս 8) հրատարակեցին լեգալ ամենօրյա քերթ «Վպերյոդ»-ը, որը լույս ընծայվեց մինչև հունիսի 14 (27)-ը — 17 համար և նորից փակվեց ցարական կառավարության կողմից։ Այս քերթում նույնպես հոդվածների ու նյութերի մեծ մասը նվիրված են I Պետական Դումային։ «Վպերյոդ»-ը հետևողական պայքար է տարել մենշևիկների դեմ, որոնք սիրագնում էին մասսաների գիտակցությունը քարոզելով, որ հնարավոր է խաղաղ ճանապարհով իշխանության անցումը ժողովրդին։ «Վպերյոդ»-ում լայն կերպով լուսաբանվել են՝ գյուղացիական-ագրարային հարցերը տարբեր նահանգներում, գրվել է զինվորների ու նավաստիների ծանր դրության մասին, սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքների մասին բանակում։

«Վպերյոդ»-ի փակվելուց հետո հրատարակվեց ամենօրյա լրագիր «Էխո»-ն։ Այս քերթը գոյություն ունեցավ 1906 թվականի հունիսի 22-ից (հուլիս 5) մինչև հուլիսի 7 (20)-ը — ընդամենը 14 համար։ Լրագիրը խմբագրում էր Վ. Ի. Լենինը։ Նա մի շարք հոդվածներում («Ո՞վքեր են կադետների հետ դաշնակցելու կողմնակիցը, «Կադետների ձայնակիցները», «Դարձյալ դումայական մինիստրության մասին») մերկացրել է մենշևիկներին՝ որպես բուրժուազիայի ու կադետների ագենտուրայի, ռևոլյուցիայի դավաճանների։

«Էխո»-ի փակվելուց հետո անցավ 6—7 ամիս, հետո միայն հաջողվեց բոլշևիկներին 1907 թվականի հունվար-փետրվարին հրատարակել՝ «Ընթերցողի տրուդա», «Պրոստիյե րեչի», և «Զրենիյեա շաբաթաթերթերը։ Այս երեք քերթերը հաջորդել են իրար, որովհետև իրար հետևից փակվել են։ Ընդամենը ութ համար են լույս տեսել այս շաբաթաթերթերը, որոնք հիմնականում նվիրված են II Պետական Դումային։ 1907 թվի փետրվարի 20-ին (մարտ 5) լույս տեսավ բոլշևիկյան լեգալ ամենօրյա «Նովի լուչ» քերթը, որը 7 համարից հետո, 1907 թ. փետրվարի 27-ին (մարտ 12) փակվեց կառավարության կողմից։ Դրանից հետո, 1-ին (14) մարտի 1907 թ. լույս տեսավ «Պարոչայա մոլվա» քերթը, որի առաջին համարը բռնագրավվեց, լրագիրն էլ արգելվեց։ 1907 թվականի ապրիլին լույս են տեսել նաև «Նաշե էխո»-ն և «Տրուդա»-ը, որոնք մեկ-երկու համարից հետո փակվել են ցարական կառավարության կողմից։

Այս բոլոր քերթերում էլ հոդվածների մեծ մասը նվիրված էին II Պետական Դումայի աշխատանքներին, կադետների դեմ տարվող պայքարին, կադետներին ձայնակցող մենշևիկների մերկացմանը։

1906—1907 թվականներին Անդրկովկասի պարապիչական կազմակերպությունները մեծ աշխատանքներ են տարել բոլշևիկյան հրատարակությունների

ուղղությամբ։ Ի. Վ. Ստալինի ղեկավարությամբ լույս են տեսել հետևյալ թերթերը՝ 1. «Ախալի Ծխովրեթաո»-ն («Նոր կյանք»)—1906 թվականի հունիսի 20-ից մինչև հուլիսի 14-ը։ 2. «Ախալի Դրոեթաո» («Նոր ժամանակ») շաբաթաթերթերը. օրգան Թիֆլիսի պրոֆեսիոնալ միությունների խորհրդի։ Այս շաբաթաթերթը լույս է տեսել 1906 թ. նոյեմբերի 14-ից մինչև 1907 թվի հունվարի 8-ը— Թիֆլիսում՝ լեզգալ կարգով, ընդամենը 9 համար։ «Ախալի Դրոեթաո» շաբաթաթերթերը ուներ հետևյալ մշտական բաժինները՝ «Բանվորական շարժում և պրոֆեսիոնալ միություններ», «Կովկասում», «Միություններում», «Ռուսաստանում», «Արտաստահմանում», «Շաբաթվա ընթացքում», «Տելեգրամներ», «Խմբագրությունից։ Շաբաթաթերթում տպագրվում էին նաև բանաստեղծություններ և պատմվածքներ։

Այս շաբաթաթերթը չէր սահմանափակվում միայն արհեստակցական հարցերով, այլ զետեղում էր հոդվածներ նաև գյուղացիական-ագրարային հարցի և գյուղացիության դերի մասին ռևոլյուցիայի մեջ, պայքար էր մղում հակառևոլյուցիոն հոսանքների ու պարտիաների դեմ՝ կադետների ու մենշևիկների դեմ։ Շաբաթաթերթը կանոնավոր կերպով լուսաբանում էր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի գործունեությունը II Պետական Դումայում։

Մեր պարտիայի օրգան «Պրոլետարիա»-ն բարձր է գնահատել «Ախալի Դրոեթաո»-ի աշխատանքը, իր 1907 թ. № 12-ում գրել է. «Հրագիրը շատ լավ է տարվում, ունի բոլոր բաժինները (թերթը լեզգալ է)։ Պրոֆմիությունական բաժնում, համարյա միշտ, զետեղվում են զանազան պրոֆմիությունների կանոնադրություններ, իսկ մյուս բաժիններն էլ տարվում են զուտ սոցիալ-դեմոկրատական և ռևոլյուցիոն ոգով։ «Ախալի Դրոեթաո»-ն փակվեց ցարական կառավարության կողմից։

1907 թվականին լույս են տեսել «Ջվենի Ծխովրեթաո («Մեր կյանքը») և «Դրոեթ («Ժամանակ») ամենօրյա լրագրերը։ Այս լրագրերում տպագրվել է Ի. Վ. Ստալինի «Ննաբխիզմ թե՞ սոցիալիզմ» հոդվածը։

Ստ. Շահումյանի ու Ս. Սպանդարյանի անմիջական ջանքերով այդ տարիներին է, որ հայերեն են թարգմանվում Վ. Ի. Լենինի երկերը՝ «Գյուղական չքավորությանը», «Պրոլետարիատի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրան» և այլն։ Այդ շրջանում է նույնպես թարգմանվել հայերենի Ի. Վ. Ստալինի մի շարք աշխատությունները, ինչպես օրինակ՝ «Համառոտակի պարտիական տարաձայնությունների մասին» և այլն։

Այս բոլոր բրոշյուրները Ստ. Շահումյանի եռանդուն ջանքերով տպագրվել են մեր պարտիայի Հավկազբարի գաղտնի տպարանում և տարածվել են հայ պրոլետարիատի ու աշխատավորության մեջ։

1906 թվի գարունը բոլշևիկյան հայ մամուլի պատմության մեջ մի նոր էջ է բաց անում։ Կովկասյան բոլշևիկյան կենտրոնի առաջարկով Ստ. Շահումյանը Թիֆլիսում սկսում է հրատարակել առաջին հայերեն լեզգալ լրագիրը՝ «Կայծ»-ը։ «Կայծ»-ը լույս է տեսել 1906 թվի ապրիլի 1-ից մինչև օգոստոսի 6-ը, ընդամենը 47 համար։

«Մեր օրգանը» առաջնորդողում (1906 թ. № 1), որ պատկանում է Ստ. Շահումյանի գրչին, լրագրի խնդիրների ու նպատակների մասին հետևյալն է ասված. «Մեր օրգանը պետք է լինի բերան հայ բանվորության, պրոլետարական համաշխարհային բանակի այդ փոքրիկ անբաժան գնդերից մեկի։ Նա պաշտպան ու արտահայտիչ պետք է լինի պրոլետարիատի վսեմ միջազգային իդեալի։ Նա ընկեր և ուսուցիչ պետք է լինի բուրժուական-ազգասիրական իդեոլոգիային տորուն եղած և այդ տորկությունից այժմ ազատվող հայ բանվորնե-

րին։ Ի՞նչ որն է պրոլետարիատի այդ իդեալը և որո՞նք են այն ճանապարհները, որ պետք է բերեն մեզ դեպի այդ իդեալը, որո՞նք են կռվի այն միջոցները, որ համապատասխանում են մեր նպատակներին և այլն և այլն։ Այդ հարցերին նվիրված կլինի ամբողջովին մեր օրգանը և նա կաշխատի իր կարողության չափ ծառայել հայ բանվորության և նրա բնական բարեկամ ու դաշնակից՝ հայ աղքատ գյուղացիության շահերին։ Այնուհետև պրում է, որ ռևոլյուցիոն ժամանակաշրջան է ապրում երկիրը, որը պահանջում է պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության ռևոլյուցիոն ուժերի հսկայական լարում, որ «Կայծը» ինքը ուզում է «...քայլ առ քայլ հետևի հեղափոխական պրոլետարիատին նրա հզոր կռվում, ուզում է արտահայտել և ղեկավարել այդ կռիվը, ուզում է լուսավորել այն փշոտ ու արյունոտ ճանապարհը, որով ընթանում է հեղափոխական պրոլետարիատը։

«Կայծ»-ի խմբագրական կոլեգիայի մեջ 1906 թ. մայիսից աշխատում է Ս. Սպանդարյանը, աշխատակցում են՝ Դեդուշկան (Մ. Մելիքյան), պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանը, բազմաթիվ բոլշևիկ բանվորներ և շատ քղաքակիցներ՝ Քիֆլիսից, Բաքվից, Երևանից, Բաթումից, Գանձակից, Ալավերդուց և գյուղական շրջաններից։

«Կայծ»-ը խոշոր դեր է խաղացել բոլշևիկյան պարտիայի ծրագրային ու տակտիկական հիմունքները պարզաբանելու, հայ ժողովրդի ոխերիմ թշնամիների՝ դաշնակցականների, հնչակյանների, ասպեցիֆիկներին դեմ կռվելու ուղղությամբ և հայ աշխատավորներին է հասցրել մեր պարտիայի ձայնը։

«Կայծ»-ին ոգի ու շունչ տվողը եղել են Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը։ Որպեսզի ընդհանուր գաղափար կազմվի հայ բոլշևիկյան ժուռնալիստիկայի մասին, մենք համառոտակի կխոսենք Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի մի շարք հոդվածների մասին։

«Մեր օրգանը», «ՌՍԴՐ կուսակցության վերջին համագումարը», «Կառավարությունը և Դումանը», «Կադետները և սոցիալ-դեմոկրատիան», «ՌՍԴՐ կուսակցության Միավորիչ համագումարը», «Ագրարային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», «Դաշնակցությունը պրոլետարիատի ղեկավարը», «Ցեներական Դումայի արձակումը», «Ջինվորական դիկտատուրայի ուրվականը», «Մատուլիպինը գործում էր և այլ հոդվածներ * պատկանում են Ստ. Շահումյանի գրչին։ «Կայծ»-ում Ս. Սպանդարյանը 60-ից ավել մարտաշունչ հոդվածներ ունի, որոնց թվում «Բուրժուական մամուլը և սոցիալ-դեմոկրատիայի հաղթանակը», «Բանվորական պրոֆեսիոնալ միությունների մասին», «Հեղափոխության ալիքը բարձրանում է», «Ամերիկյան պրոլետարիների մասին», «Սոցիալիստ դաշնակցությունը և նրա բանվորները», «Ինքնակալությունը ու գյուղացիությունը», «Պրոլետարիատը և արտաքին քաղաքականությունը», «Հեղափոխություն մի քիչ շրում», «Ուժու կառավարության բացատրությունը Եվրոպական բորսային» և այլն **։

«Կայծ»-ում լույս տեսած հոդվածները նվիրված են ռևոլյուցիայի մեջ բոլշևիկյան պարտիայի կազմակերպական, տակտիկական հիմունքների պաշտպանությանը, մենշևիզմի, դաշնակցության, հնչակյանների ասպեցիֆիկների ու այլ հակառևոլյուցիոն պարտիաների մերկացմանը։

* Մանրամասը բիբլիոգրաֆիան տես մեր կազմած՝ «Հայ գրականության բիբլիոգրաֆիա (XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը)», Ե., Պետհրատարակչություն, 1953. էջ 212—13

** Նույն գրքում, էջ 270—71

«Կայծ»-ում տպագրվել են բոլշևիկ բանաստեղծ Հակոբ Հակոբյանի մի շարք ոգեշնչող բանաստեղծություններ և նրա թարգմանած ռևոլյուցիոն երգերը («Վարշավյանկա», «Մարսելյոզ» և այլն)։ Այդ բանաստեղծություններ շնչում են ռևոլյուցիոն պաթոսով և ունեն իդեական նպատակասլացություն։

«Կայծ»-ը փակվեց 1906 թ. օգոստոսին, Թիֆլիսի նահանգապետի հրամանով։

Մի քանի օր հետո Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ջանքերով, 1906 թ. օգոստոսի 18-ից լույս է տեսնել «Նոր խոսք» բոլշևիկյան օրաթերթը, որը շարունակեց «Կայծ»-ի գիծը։ «Նոր խոսք»-ը լույս տեսավ մինչև սեպտեմբեր 20-ը, ընդամենը 15 համար։ Որպեսզի գաղափար տանք այս թերթի բազմակողմանի բովանդակության մասին, ներքևում բերում ենք 1906 թ. օգոստոս 23-ի № 3-ի նյութերի վերնագրերը.

— Ագրարային հարցը և կառավարությունը։ [Առաջնորդող]։
— Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան։ [Ստորագր.՝ «Տ»]։
— Մամուլ։ [«Նովոյա պուտ» և «Սորանաց» թերթերի մասին]։
— Թիֆլիսի կյանք։ [Ինֆորմացիա]։
— Բանվորյան, Ս. Դասախոսություն դաշնակցության մասին։
— Կովկասյան կյանք։ [Ինֆորմացիա]։
— «Սոցիալիստ» դաշնակցությունը գյուղում։ (Թղթակցություն Երևանից)։
— Միջազգային կյանք։ [Ինֆորմացիա]։
— Կարապետյան, Ա. Նամակ խմբագրության։

Ստ. Շահումյանը «Նոր խոսք»-ում գրել է հետևյալ հոդվածները՝ «Դաշնակցական համագումարը էջմիածնում», որտեղ գրում է՝ դաշնակների սարքած «էջմիածնի ազգային հիմնադիր ժողովի» մասին և դաշնակներին որակում է որպես հայ ժողովրդի թշնամիների, ռևոլյուցիայի ու սոցիալիզմի դավաճանների։ «Ապարդյուն ջանքեր» հոդվածը նվիրված է գյուղացիական և հողային հարցին Ռուսաստանում։ Մերկացնում է ցարիզմի ապարդյուն ջանքերը՝ կանգնեցնելու միլիոնավոր գյուղացիության ռևոլյուցիոն ելույթները։ Ստ. Շահումյանը «Նոր խոսք»-ում ունի նաև «Ներկա մոմենտը և մեր տակտիկան» առաջնորդողը և «Օրվա խնդիրներ» բաժնում՝ «Գուչկովի նամակը» հոդվածները *։

Ս. Սպանդարյանը «Նոր խոսք»-ում գրել է՝ «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» երեք համարում շարունակվող, խորը և իմաստալից հոդվածը նաև «Մեր դերը գյուղերում» (2 համարում) և այլ հոդվածներ **։

«Նոր խոսք»-ում հետաքրքիր ու գրավիչ փոքրիկ տեսություններ էին տպագրվում «Օրվա խնդիրներ» և «Մամուլ» բաժիններում, լայն քաղաքական ինֆորմացիա էր տրվում՝ «Թիֆլիսի կյանք», «Կովկասյան կյանք», «Ռուսաստան», «Միջազգային կյանք» ենթաբաժիններում։ «Նոր խոսք»-ը շարունակելով «Կայծ»-ի տրադիցիան սերտ կապ էր պահպանում գործարանային ու գյուղական բազմաթիվ թղթակիցների հետ։

1906 թվի գարնանը Բաքվում լույս է տեսնում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի Բաքվի կազմակերպության օրգան «Բանվորի ձայն» լրագիրը։ Այդ լրագրի առաջին համարի առաջնորդողում լրագրի նպատակների ու խնդիրների մասին գրված է. «Բանվոր դասակարգի կա-

---

* Մանրամասն բիբլիոգրաֆիան տես մեր կազմած «Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն (XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը)։ Երևան, Պետհրատպարատ, 1953, էջ 213։

** Նույն գրքում, էջ 271։

նոնավոր կազմակերպության համար անհրաժեշտ է դեկավար օրգան, այդպիսի մի կուսակցական լրագիր ունենալու պահանջը, մանավանդ հայերեն լեզվով, այնքան մեծ է, տեղական կարիքները այնքան բազմատեսակ և այդպիսի մի հրատարակության երևան գալը այնքան կարևոր է, որ անպայման հավատում ենք նրա հաջողությանը... Կանգնած լինելով հեղափոխական մարքսիզմի տեսակետի վրա «Բանվորը»* պիտի լինի միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ամենահետևողական արտահայտողը, հենվելով այն ճշմարտության վրա, որ բանվորների ազատագրությունը հենց իրենց բանվորների գործն է։ ...«Բանվորը» անշեղ կերպով պիտի պաշտպանի բոլոր ազգությունների բանվորների շահերի համերաշխությունը, կապիտալիստական անարխիայի դեմ կռվելու համար։ Ուստի «Բանվորը» կոչ պիտի անի բոլոր ազգությունների բանվորներին համախմբել Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության դրոշի տակ։ Այնուհետև գրում է. «Պաշտպանելով կազմակերպչական կենտրոնացման սիստեմը, «Բանվորը» ընդունում է, որ Ռուսաստանի Սոց.-դեմ. բան. կուսակցության ծրագիրը լիովին ապահովում է ենթված ազգությունների ազատագրական ձգտումները, վերապահելով, իհարկե, յուրաքանչյուր ազգության ինքնորոշման ազատությունը։

Ստորև գետեղում ենք «Բանվորը» թերթի № 1-ի բովանդակությունը.

— «Համբագրություններից» (Առաջնորդող՝ թերթի նպատակների ու խնդիրների մասին)։

— Վ. Ենթկու ազգ հոդվածում մանրամասն շարադրվում է սոցիալ-դեմոկրատական պարտիայի ազգային ծրագիրը։

— ՌՍԴԲ կուսակցության երկու տակտիկան Պետական Դումայի վերաբերյալ։

— Աշխատանքի և կապիտալի խնամումը կառավարչական սենատում։ Անստորագիր հոդված է, որտեղ բերվում է Սենատի 1906 թ. հունվար 10-ի որոշումը, որով կապիտալիստներին իրավունք է տրվում՝ ընդհանուր գործադուլի ժամանակ չաշխատած օրերի համար աշխատավարձ չվճարել։

— Հետաքրքիր, ընդարձակ ինֆորմացիա է՝ 1) Բաքվում կատարված առաջավոր բանվորների ցուցակագրության մասին, որպեսզի ոստիկանությունը նրանց բանտարկի ու մեկուսացնի Պետական Դումայի ընտրություններից և 2) Դորթիսի խնձորենակ գյուղում տեղի ունեցած դաշնակցականների ու հնչակյանների պատերազմի մասին։

«Ռուսաստանում և «Արտասահմանում բաժիններում ընդարձակ ինֆորմացիա է տրվում քաղաքական կարևոր անցուդարձի մասին։

1906 թվի մայիսի 26-ին, Բաքվում լույս է տեսել հայ-ադրբեջանական լիգայի օրգան «Կոչ-դեվեթը» թերթը։

Հայ-թուրքական ընդհարումների հրդեհի թոցերում, որ վառել էին ցարական կառավարությունը և բուրժուական նացիոնալիստները, որպեսզի Անդրկովկասի հայ և ադրբեջանական աշխատավորությանը հեռու պահեն Ռուսաստանի 1905—1907 թ.թ. ռևոլյուցիոն շարժումներից, հրապարակ է իջել «Կոչ-դեվեթը»՝ ինտերնացիոնալիզմի դրոշի տակ համախմբելու հայ և ադրբեջանական աշխատավորներին, բոլշևիկյան պարտիայի կողմից՝ եղբայրության ոգով դաստիարակելու լայն մասսաներին։

* Այս թերթի անունը և նյութերի մի մասը շարված են եղել, երբ սպեցիֆիկները լույս են ընծայել իրենց «Բանվորի ձայն» թերթը. խմբագրությունը սխալված առաջնորդողում թերթը կոչում է «Բանվոր»։

«Կայծ»-ի 1906 № 21-ում «Կոչ-դեվիքթ»-ը անվանվում է հայ և ադրբեջանական ժողովրդների դրոշակակիր. «Հրապարակ է նկել «Կոչ-դեվիքթ»-ը իր խաղաղության կոչով, հրապարակ է նկել... խաղաղության և համերաշխության նշանաբանով»։ Այնուհետև «Կայծ»-ը գրում է. «Կոչ-դեվիքթ»-ը հրապարակ է նկել աշխատավոր մասսաների սրտից, նա նրանց բազմաչարչար տառապանքների արդյունքն է, նա հրապարակ է նկել ժողովրդի միջից, պաշտպանելու նրա շահերը, ով ավելի է շահագործվում, ով ավելի է շահագրգռված խաղաղության համար, ով խաղաղության իսկական դրոշակակիրն է, բոլոր բանվորների և բոլոր աղքատ գյուղացիների շահերը նույնպես միանում են՝ բոլորովին անկախ նրանից՝ հայեր են նրանք թե ադրբեջանցիներ։ «Կոչ-դեվիքթ»-ը տպագրվել է երկու լեզվով՝ ադրբեջաներեն և հայերեն։ «Կոչ-դեվիքթ»-ը փակվել է Բաքվի նահանգապետի կարգադրությամբ՝ իբրև ավնասակար ուղղության թերթ։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՆԼԵԳԱԼ «ՊՐՈԼԵՏԱՐԻ» ԼՐԱԳԻՐԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԱՅԼ ԼՐԱԳՐԵՐ

Իբրև կարևոր մի երևույթի մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել Վ. Ի. Լենինի խմբագրությամբ 1906 թվականի վերջերին լույս տեսնող «Պրոլետարի» լրագրի վրա։

Այդ լրագիրը սկսել է լույս տեսնել 1906 թ. օգոստոսի 21-ից (սեպտեմբ. 3)։ Լրագիրն սկզբում լույս էր տեսնում Ֆինլանդիայում, ապա հրատարակությունը փոխադրվեց արտասահման։ «Պրոլետարի»-ն ՌՍԴԲԿ Մոսկվայի, Պետերբուրգի և այլ կոմիտեների օրգանն էր, լույս էր տեսնում ամիսը 2—3 համար՝ անկանոն։ Այդ թերթում Վ. Ի. Լենինը գրել է բազմաթիվ հոդվածներ, որոնց թվում՝ «Փոթորկից առաջ» (№ 1), «Քաղաքական կրեդիսը և օպորտունիստական տակտիկայի տապալումը», «Մոսկվայի ապստամբության դասերը» (№ 2), «Բոյկոտի մասինն» և այլն։ «Պրոլետարի» թերթում ընդարձակ նյութեր, կարևոր հոդվածներ են տպագրվել մեր պարտիայի V համագումարի նախապատրաստմանը նվիրված։

1905—1907 թվականների ռևոլյուցիայի շրջանում բոլշևիկյան թերթեր են հրատարակվել ոչ միայն Պետերբուրգում, Քրիլիստում, Բաքվում, այլև Ռուսաստանի այլ խոշոր քաղաքներում։ Այսպես. 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության նախօրյակին, նոյեմբերի 27-ից (դեկտեմբ. 10) Մոսկվայում սկսել է լույս տեսնել ՌՍԴԲԿ Մոսկվայի կոմիտեի օրգան «Բորբա»-ն։ Այդ թերթը բոլշևիկյան թերթ էր։ Նա շատ գնահատելի նյութեր է տպագրել Մոսկվայում կատարված ռևոլյուցիոն ելույթների և ապստամբության մասին, Մոսկվայի բանվորական դեպուտատների Սովետի գործունեության մասին։ Այդ թերթը փակվեց ցարական ոստիկանության կողմից 1905 թ. դեկտեմբերի 20-ին, 9-րդ համարից հետո։

«Բորբա»-ից մի քանի օր ուշ, 1905 թ. դեկտեմբեր 15-ից լույս է տեսել նույնպես Մոսկվայի կոմիտեի օրգանը հանդիսացող «Վպերյոդ» թերթը։ Այդ թերթը իր չորս համարներում հրաշալի կերպով լուսաբանել է Ռուսաստանում կատարվող ռևոլյուցիոն շարժումները, բոլշևիկյան պարտիայի գործունեությունը, արհեստակցական շարժումը և բանվորական դեպուտատների Սովետների աշխատանքները։ Չորրորդ համարից հետո «Վպերյոդ»-ը փակվեց։

Ցարիզմի հետ ռևոլյուցիոն գոտեմարտի օրերին, 1905 թ. հոկտեմբերյան

ընդհանուր գործադուլի ժամանակից սկսած, երկրի խոշոր արդյունաբերական շրջաններում կազմակերպված բանվորական պատգամավորների Սովետները նույնպես ընդարձակ հրատարակչական գործունեություն են ունեցել. տպագրել են թերթիկներ, թռուցիկներ, կոչեր և հրատարակել են իրենց օրգանները՝ «Իզվեստիա Սովետա ռաբոչիխ դեպուտատով». Ներքևում բերում ենք Մոսկվայի Սովետի օրգանի, «Իզվեստիա Մոսկովսկովո Սովետա ռաբոչիխ դեպուտատով»-ի 6-րդ համարի մի քանի նյութերի նկարագրությունը, որպեսզի գաղափար կազմվի առաջին Սովետների թերթերի մասին։ Առաջին համարում տպված է խոշոր տառերով —Մոսկվայի Սովետի և պարտիական կազմակերպության որոշումը՝ «...Հոկտեմբերի 7-ին, ցերեկվա ժամը 12-ից հայտարարել ընդհանուր քաղաքական գործադուլ և ձգտել այն վերածել զինված ապստամբության։ Այնուհետև տպագրված է Սովետի և պարտիական կազմակերպության դիմումը՝ «Բոլոր բանվորներին, զինվորներին և քաղաքացիներին», որով կոչ է արվում դիմել զինված ապստամբության։ Թերթում ընդարձակ ինֆորմացիա կա Մոսկվայի, Պետերբուրգի և մյուս քաղաքներում տեղի ունեցած ռևոլյուցիոն նյութերի ու Սովետների աշխատանքների մասին։ «Քրոնիկա» բաժնում տպված են լուրեր կազակների բունթերի մասին, ոստիկանների կողմից կատարված ծեծի, բանտարկությունների մասին։

«Պայքարի երգերը վերնագրի տակ տեղեկություններ են տեղված փողոցային կռիվների, զորքերի ու բանվորների ընդհարումների մասին։

«Իզվեստիա»-ի № 6-ում տեղեկություններ են տեղված Մոսկվայի բարիկադային կռիվների և գործադուլների ծավալման մասին։

Բացի Սովետների օրգանը հանդիսացող «Իզվեստիա»-ից, 1905—1907 թվերին մեր բոլշևիկյան պարտիան բանակի համար հրատարակել է մեծ քանակով թերթիկներ, թռուցիկներ, բրոշյուրներ և հաղարավոր օրինակներով տարածել է զինվորների ու նավաստիների մեջ։ Հրատարակվել են նաև 50-ից ավելի լրագրեր։ Բոլշևիկյան զինվորական թերթերի թվին են պատկանում՝ «Կազարմա Պետերբուրգում, «Սոլդատսկայա ժիզնը և «Սոլդատսկայա միսլը Մոսկվայում, «Բյադովոյ Բաքվում և այլ թերթեր։

Որպեսզի ավարտենք 1905—1907 թվականների բոլշևիկյան մամուլի տարեգրության մեր համառոտ տեսությունը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել 1907 թվականի փետրվարին լույս տեսած բոլշևիկյան լեգալ լրագիր «Օրեր»-ի վրա։

«Օրեր»-ը լույս է տեսել 1907 թ. փետրվար 2-ից (15-ից) մինչև փետրվարի 10-ը (փետրվարի 23) — ընդամենը ութ համար։ Այդ թերթը հիմնադրել է Ս. Սպանդարյանը, խմբագրել են Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանը։ «Օրեր»-ի հրատարակումը համընկավ III Պետական Դումայի ընտրությունների կամպանիային։ Ահա «Օրեր» թերթի առաջին համարի բովանդակությունը.

— Մեր թերթը և այժմյան մոմենտը։ [Առաջնորդող]։

— Օրվա խնդիրներ։— Ի՞նչ են ասում ընտրությունները։ [«Ս. Ս-յանց ստորագրությամբ։ Ս. Սպանդարյանն է, որ գրում է Դումայի ընտրությունների արդյունքների մասին Կովկասում]։

— Պետական Դումայի ընտրությունների շուրջը։ [Ընդարձակ ինֆորմացիա է]։

— Մամուլի շուրջը [կադետական թերթերի անաւելյուն է]։

— Կուսակցական կյանք [Ինֆորմացիա]։

— Գավկասյան կյանք [Ինֆորմացիա]։

— Մխիթարվենք... [Երկու հոդվածում նկարագրվում է Թիֆլիսում, Պետական Դումայի ընտրությունների ժամանակ դաշնակցության կրած խայտառակ պարտությունը]։

— Ռուսաստանի կյանք [Ինֆորմացիա]։

— Կապիտալը հարձակողական դերի մեջ [Այս հոդվածում նկարագրվում են կապիտալիստների լոկաուտները, կոչ է արվում «կազմակերպել բանվորական ամրակուռ միություններ», «վերջ կապիտալի դեմ»]։

— Միջազգային կյանք [Ինֆորմացիա]։

«Օրեր» լրագրում Ս. Ապանդարյանը մի շարք հոդվածներում պաշտպանում է II Պետական Դումայի ընտրություններում բոլշևիկյան տակտիկան, մերկացնում է կադետների, մենշևիկների հակաժողովրդական գործելակերպը։ Ս. Ապանդարյանի «Կազմակերպությո՞ւն, թե բռնի ուժ» [«Տ» առորագրությամբ. «Օրեր» № 4-ում] հոդվածում կոչ է արվում բանվորներին անողոք պայքար մղել անարխիստների դեմ, որոնք օգտվելով ռևոլյուցիայից հետո երկրում տիրող քաղաքական ու տնտեսական ճգնաժամից, տեռորի ու կողոպուտի իրենց ագիտացիայով, մասսաներին շեղում էին իսկական դասակարգային կռվի ուղուց։

«Օրեր»-ը ութ համարից հետո փակվեց Բաքվի քաղաքապետի կարգադրությամբ։ Նա բավական խոշոր դրոշ կատարեց Բաքվի և Անդրկովկասի հայ աշխատավորությանը քաղաքական-գաղափարական ոգով դաստիարակելու ուղղությամբ։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼԸ (1907—1912 թ.թ.) ՌԵԱԿՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռեակցիայի տարիները (1907—1912 թ.թ.) շատ ծանր էին բոլշևիկյան պարտիայի և նրա մամուլի համար։ Ամբողջ Ռուսաստանում մոլեգնում էր սևհարյուրյակային տեռորը, որը առաջին հերթին ոչնչացնում էր պրոլետարական քաղաքական, տնտեսական կազմակերպությունները, բոլշևիկյան կազմակերպությունները և մամուլը։ Ոստիկանական հալածանքների հետ միաժամանակ սկսվեց սևհարյուրյակային-ստոլիպինյան մամուլի և բուրժուական-կադետական ու իրենց «անպարտիական» հայտարարող քերթերի հարձակումը ռևոլյուցիոն հերոսական պրոլետարիատի ու նրա բոլշևիկյան պարտիայի վրա, գովերգում էին «նոր, հաստատուն կարգերը», «ձևանդես եկավ մոդայական գրողների մի ամբողջ բազմություն, որոնք «քննադատում» և «զարդուփշուր» էին անում մարքսիզմը, թուք ու մուր էին թափում ռևոլյուցիայի վրա, ծաղրում էին ռևոլյուցիան, գովերգում էին դավաճանությունը, «անձնավորության կուլտ» անվան տակ գովերգում էին սեռական անառակությունը։ Փիլիսոփայության բնագավառում ուժեղացան մարքսիզմը «քննադատելու», ռևիզիայի ենթարկելու փորձերը, ինչպես և առաջ եկան ամեն տեսակ կրոնական հոսանքներ, որոնք քողարկված էին իբրև թե «գիտական» փաստարկներով, մարքսիզմի «քննադատումը» մոդա դարձավ։ Այդ բոլոր պարոնները, չնայած նրանց ամբողջ խայ-

տարբերությանը, հետապնդում էին մի ընդհանուր նպատակ՝ մասսաներին ևս քաշել ռևոլյուցիայիցը *։

Աշխատելով Ռուսաստանի բանվորական շարժումը տանել ռեֆորմիստական ուղիով և հարմարվել սոցիալիստական սահմանադրությանը շրջանակներին, մենշևիկները իրենց քերթերում և բուրժուական օրգաններում վատաբանում, քննադատում էին ռևոլյուցիայի սխալները, ռևոլյուցիոն պատրանքները և բոլշևիկներին, գովերգում էին զրկական սահմանադրական աշխատանքը։

Բայց բոլշևիկները ունեին ընդհատակյա աշխատանքի մեծ փորձ։ Բոլշևիկները միշտ պայքարել են հանուն պարտիական անլեգալ կազմակերպությունների և մամուլի պահպանման։ Մենք վերը նկարագրեցինք, որ դեռ 1906 թվին Վ. Ի. Լենինի խմբագրությամբ, արտասահմանում հրատարակվում էր «Պրոլետարի» քերթը։ Չնայած սոսկալի հալածանքներին, տեռորին, բոլշևիկները ստեղծեցին անլեգալ հրատարակություններ ցանց, արտասահմանից բավական դժվար ու կոնսպիրատիվ միջոցներով, ռևոլյուցիոն գրականությունը և քերթերը փոխադրվում էին Ռուսաստան և տարածվում պարտիական ընդհատակյա կազմակերպություններում։ Վ. Ի. Լենինը «Ուղիղ ճանապարհի վրա» հոդվածում գրում է, որ 1908 թ. սկզբներին, բացի արտասահմանում լույս տեսնող բոլշևիկյան անլեգալ քերթերից («Պրոլետարի» և «Սոցիալ-դեմոկրատ»), Ռուսաստանում հրատարակվում էին ութ ընդհատակյա քերթեր՝ Ուրալում, Ղրիմում, Պետերբուրգում, Կովկասում և այլուր։

Այդ շրջանում Վ. Ի. Լենինի ջանքերով «Պրոլետարի»-ն դարձել էր ղեկավարող օրգան, կանոնավոր կերպով լույս էր տեսնում։ Լենինի գլխավորած «Պրոլետարի»-ն պարտիական կազմակերպություններին ղեկավարում էր պայքարի՝ լիկվիդատորների, օտզովիստների և ցենտրիզմով քողարկված նենգ Տրոցկու դեմ։

Հայտնի է, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ 1909 թվականին կայացած «Պրոլետարի» լրագրի ընդլայնած խմբագրության խորհրդակցությունը, որը քննեց օտզովիստների վարքագիծը, վճռականորեն դատապարտեց օտզովիստներին և ըլտիմատիզմը, նույնպես «աստվածաշինարարությունը» («богостроительство»), «աստված որոնողներին» («богоискатели»)։ Այդ կարևոր խորհրդակցության մասին Վ. Ի. Լենինը «Պրոլետարի» № 46-ում գրել է «Լիկվիդատորների լիկվիդացիան» հոդվածը։

«Պրոլետարի»-ն հետևողականորեն պոլեմիկա է մղել մենշևիկյան «Գոլոս սոցիալ-դեմոկրատա» և Տրոցկու քերթուկ «Պրավդա»-ի դեմ։

Ստոլիպինյան ռեակցիայի այդ ծանր շրջանում, երբ ամեն գույնի հակառևոլյուցիոն տարերը լիկվիդատորների հետ միասին վարկաբեկում, աղավաղում էին մարքսիզմը, բոլշևիկյան պարտիականության դիրքերից Վ. Ի. Լենինը հուժկու կրակ է բաց անում [«Զվեզդա» հրատ. միջոցով]. 1909 թվին լույս է ընծայում «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը, որտեղ ոչնչացնող քննադատության է ենթարկում մախիստների, վեխովցիների իդեալիստական ռեակցիոն փիլիսոփայությունը, պաշտպանում է և զարգացնում ռևոլյուցիոն պրոլետարիատի փիլիսոփայությունը՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը։

«Պրոլետարի» լրագրի էջերից Վ. Ի. Լենինը հետևողական պայքար է

* Համկ(բ)Կ պատմություն։ Համառոտ դասընթաց։ Երևան 1950, Հայպետհրատ, էջ 136։

մղում օպորտունիստների դեմ, որոնք ռևիզիայի էին ենթարկում մարքսիզմը, աղավաղում էին նրա էությունը։

«Պրոլետարի»-ի կողմից տարվող պարտիական պայքարը պաշտպանել է Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը՝ Ի. Վ. Ստալինի ղեկավարությամբ, քննարկելով և հատուկ բանաձևում արձանագրելով, որ Վ. Ի. Լենինի դիրքը «Պրոլետարի»-ի խմբագրությունում ճիշտ է, որ պիտի վճռական պայքար մղել լիկվիդատորների դեմ, օտզովիզմի, ուլտիմատիզմի, «աստվածաշինարարության» դեմ։

Այդ տարիներին է, որ Բաքվի բոլշևիկները հիմք են դնում՝ «Բակինսկի պրոլետարի», «Գուդոկ» և «Բակինսկի ռաբոչի» թերթերին։

«Բակինսկի պրոլետարի»-ն անլեգալ բոլշևիկյան թերթ էր։ Նրա առաջին համարը լույս տեսավ 1907 թ. հունիսի 20-ին որպես ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության Բալախանի ռայոնի օրգան, երկրորդ համարը որպես օրգան՝ ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության Բալախանի և Սև Քաղաքի ռայոնների։ Թերթը խմբագրում էր Ի. Վ. Ստալինը, մշտապես աշխատակցում էին Ա. Ջափարիձեն, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և ուրիշներ։

«Բակինսկի պրոլետարի» թերթում տպագրվել են Ի. Վ. Ստալինի հետևյալ հոդվածները. «Դումայի ցրումը և պրոլետարիատի խնդիրները» (№ 1), որտեղ նա տալիս է բանվոր դասակարգի պայքարի հեռանկարները, պրոպագանդա է մղում վերահաս revolյուցիայի մասին, կոչ է անում պրոլետարական մասսաներին կազմակերպվել, ամրապնդել դաշինքը գյուղացիական մասսաների հետ, պատրաստվել նոր, ահեղ մարտերի։

«Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիայի Լոնդոնի համագումարը (Դելեգատի նոթեր) հոդվածում (№№ 1, 2) Ի. Վ. Ստալինը տալիս է այդ համագումարի պատմական ու կարևոր նշանակությունը, գրում է revolյուցիայի հեռանկարների մասին։ «Համագումարը վերջացավ օրոշևիզմի հաղթությամբ, revolյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի հաղթությամբ ընդդեմ մեր պարտիայի օպորտունիստական թևի, ընդդեմ «մենշևիզմի»... Ամբողջ Ռուսաստանի առաջավոր բանվորների փաստական միավորումը որպես մի միասնական համառուսաստանյան պարտիա revolյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի դրոշի ներքո,— այս է Լոնդոնի համագումարի իմաստը, այս է նրա ընդհանուր բնույթը *։

«Բակինսկի պրոլետարի» թերթում [1908 թ. մայիս 15-ի № 4] տպագրվել է Ստ. Շահումյանի հոդվածը՝ «Դասակարգային պայքարը և տնտեսական տեորը» [«Ս» առորագրությամբ], որտեղ նա բացատրում է դասակարգային կռվի էությունը, ցույց է տալիս տնտեսական տեորի անմիտ լինելը։ Նա գրում է. «Մենք դատապարտում ենք անհատական տեորը ոչ թե նրա համար, որ չենք ուզում ճահաբեկելը, այսինքն վախեցնել, սարսափեցնել բուրժուազիային։ Ընդհակառակը, մենք մերժում ենք անհատական տեորը հատկապես իրրև միջոց, որը բավականաչափ չի վախեցնում բուրժուազիային, այլ միայն կազմալուծում է պրոլետարիատին։ Մենք անհատական տեորը մերժում ենք, հանուն մասսայական revolյուցիոն տեորիա **։

Ս. Սպանդարյանը «Բակինսկի պրոլետարի» թերթի 1907 թ. մի շարք համարներում ունի չափազանց հետաքրքիր հոդվածներ։ «Քաղաքական ակնարկ-

---

* Ի. Վ. Ստալին. Երկեր. հտ. 2. էջ 59—60։

** Շահումյան. Ստ. Ընտիր երկեր. Երևան, Հայպետհրատ, 1948, էջ 264։

ներ» վերաառուքյան տակ նա գրել է՝ «Հաագա և Մոսկվա» հոդվածը, որտեղ վերլուծուքյան է ենթարկում ցարական կառավարուքյան ներքին և արտաքին քաղաքականուքյունը, ցույց է տալիս իմպերիալիստական պետուքյուններին գիշատիչ դեմքը։ Նա պարզաբանում է, որ Հաագայի «խաղաղարար» կոնֆերենցիան գումարել են նրա համար, որպեսզի «կառավարուքյուններ մի կերպ հարթեն փոխադարձ կոնֆլիկտները և այսպիսով ազատ ձեռքեր ունենան իրենց երկրների ներսում, տանը՝ ժողովրդի դեմ, գլխավորապես սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատի դեմ՝ պայքարելու համար»*։

«Քաղաքական ակնարկներ» վերնագրով երկրորդ հոդվածը [«Բակինսկի պրոլետարի» 1907, № 2] նվիրված է III Պետական Դումայի ընտրական կամպանիային։ «Բակինսկի պրոլետարի» քերթում 1907 թվի ապրիլ-մայիս ամիսների համարներում (№№ 3, 4) տպագրված՝ «Բաքվի կազմակերպուքյան պատասխանատու առքիվ», «Միավորողներըդ և մյուս հոդվածներում Ս. Սպանդարյանը փաստերի բերելով բացվի մենշևիկների պատասխանատու գործունեուքյունը, փաստեր բերելով Բաքվի մենշևիկների քայքայիչ աշխատանքներից նա ասում է. «...Պատասխանատուքյունը ձեռնտու էր մենշևիկներին և հանդիսանում էր նրանց ֆրակցիոն շահերի քնչազրանքը, քանի որ նրանք պարզ գիտակցում էին, որ ընդհանուր կազմակերպուքյան մեջ նրանք կաշկանդված կլինեն կարգապահուքյամբ և ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի կամքով, որը կազմում է ս.-դ. պարտիայի մեջ կազմակերպված՝ Բաքվի պրոլետարիատի բացարձակ մեծամասնուքյունը։ Հինգերորդ համարից հետո «Բակինսկի պրոլետարի» լրագրի հրատարակուքյունը ընդհատվեց և վերսկսվեց միայն 1909 թ. օգոստոսի 1-ին։ «Բակինսկի պրոլետարի» լրագիրը ունեցել է յոթ համար, 7-րդ համարը լույս է տեսել 1909 թ. օգոստոսի 27-ին, որից հետո քերթը փակվել է։

1907—1908 թվականներին լույս է տեսնում Բաքվի Նավթարդյունաբերական բանվորների Միուքյան օրգան «Գուդոկ» բոլշևիկյան լեգալ քերթը (շաբաթաքերթ)։

«Գուդոկ»-ի առաջին համարը լույս է տեսել 1907 թվի օգոստոսի 12-ին, որտեղ քերթի նպատակների մասին հետևյալն է ասված. «Որպեսզի իրենց դասակարգային ուժեղ հակառակորդների դեմ պայքարեն հաջողուքյամբ, որպեսզի չխաչախեն՝ նորահայտ բարեկամների քղամիտ հաղած՝ կապիտալի ապատարկունների խորամանկ պլաններըդ, բանվորներին անհրաժեշտ է իրենց բանվորական օրգանը ունենալ, իրենց «Գուդոկ»-ը, որ բոլորին կոչեր դեպի միահամուռ աշխատանք, հնչեր իբրև մի երգ, որը միացնում է բոլոր բանվորների ձայները և կազմում աշխատանքի հզոր բանակի մի հզոր խմբերգ... Եքե մեր «Գուդոկ»-ով մենք հաջողվի արքնացնել պրոլետարիատի հետամնաց խավերը՝ դեպի միահամուռ աշխատանք մղել, եքե մենք հաջողվի քնքնացնել արհեստակցական միուքյունների բազմաշխատ գործունեուքյունը՝ տպագիր խոսքով օգնուքյան հասնել նրանց,— մենք մեր խնդիրը կատարած կլինենք։ Մենք կհնչեցնե՞նք ու կհնչեցնե՞նք մեր շչակը»**։

«Գուդոկ»-ի 1907 թ. սեպտեմբերի 20-ի № 4-ում լույս է տեսել Ի. վ. Ստալինի «Քոյկոտել խորհրդակցուքյունը» հոդվածը, որտեղ լուսաբանվում էր բոլշևիկյան տակտիկան, նավթարդյունաբերողների և բանվորների միջև տեղի ունե-

---

* «Բակինսկի պրոլետարի», 1907, № 1։

** «Գուդոկ», օգոստոս, 1907, № 1։

ցող խորհրդակցական կամպանիայում, կոչ էր արվում նավթարդյունաբերական բանվորներին գործարանային ժողովներում մշակել իրենց պահանջները, ընտրել լիազորներ և նրանց հանձնարարել ձևակերպել ընդհանուր պահանջներ, մասսաներին կազմակերպել՝ վճռականորեն պայքարելու այդ պահանջների իրականացման համար։ Ի. Վ. Ստալինը «Խորհրդակցությունը և բանվորները» հոդվածում գրում է թե ինչ պայմաններ պիտի առաջադրեն բանվորները։ Ի. Վ. Ստալինը «Գուդոկ» լրագրի միջոցով մերկացրեց մենշևիկների, էսէռների, դաշնակների դավաճանական գործելակերպը։

Ստ. Շահումյանը «Գուդոկ»-ում խմբագրական աշխատանքների հետ գրել է նաև հետևյալ հոդվածները «Բոյկոտահատները և լիազորների խորհրդակցությունը» [առորագր. «Ստ». «Գուդոկ» 1908, № 31], որտեղ բանվորական մասսային բացատրում է, որ պայքարի հաջողությունը՝ բանվորների միասնության և կազմակերպվածության մեջ է։ «Միրղուկյան գործադուլը վերջանալու շուրջը» հոդվածում [«Գուդոկ» 1908, № 31] Ստ. Շահումյանը շեշտում է գործադուլավոր բանվորների սխալը, որ դիմել են «Հնչակ» ազգայնական պարտիային՝ խնդրելով ազդել ադմինիստրացիայի վրա և ընդգծում է կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը. «Բանվորները պետք է ունենան իրենց կազմակերպությունը, իրենցից իսկ անրաժան, մշտական, սալնդ, հնարավոր կազմակերպություն, որը մշտապես ղեկավարեր նրանց պայքարը։ Բանվորների տնտեսական պայքարը ղեկավարելու համար այդպիսի կազմակերպություն կարող է լինել միասնական, բոլորի համար ընդհանուր նավթարդյունաբերական բանվորների պրոֆմիությունը»*։

Ս. Սպանդարյանը ղեկավար մասնակցություն ուներ Բաքվի նավթարդյունաբերական բանվորների պրոֆմիությունների աշխատանքներին, մի շարք արժեքավոր հոդվածներ է գրել «Փուդոկ» թերթում։ «Զարանենգ անզորություն» հոդվածում (մարտի 16 1908 № 23) գրել է. «...Բաքվի բանվորների կենսական շահերը թելադրում են ունենալ մի կազմակերպություն, որը տնտեսական պայքարում համախմբի մազութային այս ամբողջ բանակը՝ առանց ազգային խտրության, առանց քաղաքական հավատո հանգանակի տարբերության։ Հենց այդպիսի կազմակերպություն է հանդիսանում ահա Նավթարդյունաբերական բանվորների միությունը»։ Այդ հոդվածում Ս. Սպանդարյանը մերկացնում է դաշնակներին, նավթարդյունաբերական բանվորների միության դեմ նրանց բարձրացրած հարայ-հրոցը որակում է որպես «զարանենգ անզորություն», որովհետև դաշնակներին չի հաջողվել քայքայել բանվորական ինտերնացիոնալ պրոֆմիությունը։ «Հավիտ ընկած միության վերածնունդը» (մարտի 30 1908, № 25) և «Մազութի արտադուրը» (ապրիլ 6 № 26) հոդվածներում Ս. Սպանդարյանը վճռականորեն քննադատում է մենշևիկների ձեռնարկումները՝ առանձին պրոֆմիություններ կազմակերպելու ուղղությամբ, ցույց տալիս նրանց համքարային բնույթը, մերկացնում է Բաքվի նավթարդյունաբերողների օրգան «Նեֆտյանոյե դելո» թերթի հակաբանվորական տակտիկան։ «Կուլտուրտրեգերական աշխատանքը» հոդվածում (մայիս 12. 1908. № 31) Ս. Սպանդարյանը պարզաբանում է նավթարդյունաբերական բանվորների պրոֆմիության կուլտ-կրթական աշխատանքների անհրաժեշտությունը և գաղափարական բովանդակությունը։ Նա գրում է. «Անհրաժեշտ է կուլտուր-լուսավորական աշ-

* Շահումյան. Ստ. Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1948, էջ 254։

խաւտանքը, նրա արդյունքները լուսաւորել քնորհական գիտակցության լույսով, անհրաժեշտ է դրանք ընդհանրացնել և արմատավորել բանվորական մասսայի մեջ։ Մեզ մոտ, մազութային թագավորության մեջ, կան պայմաններ այդպիսի աշխատանքի համար և Միությունը պետք է անհապաղ ձեռնամուխ լինի, որպեսզի բանվորների դասակարգային ինքնագիտակցության զարգացման գործը դրվի ամենալուրջ հիմքերի վրա։ Հակառակ դեպքում Միության ամբողջ աշխատանքը կարող է ապարդյուն անցնել, նրա կրկնում ենք, այն շամբապնդվի պրոպագանդայի միջոցով։ Ս. Սպանդարյանը նավթարդյունաբերողների պրոֆմիության առաջ գործնական խնդիր է դնում Միության անդամների կուլտուր-լուսավորական ամբողջ աշխատանքները՝ բանվորական գրադարանները, բանվորական համալսարանը, ժողովրդական տները կենտրոնացնել իր ձեռքում և համարել ամենակարևոր աշխատանքներից մեկը։

1908 թվի № 34-ից հետո, մենշևիկները օգտվելով այն հանգամանքներից, որ մի շարք ականավոր բոլշևիկ գործավարներ բանտարկվել էին Բաքվում, «Գուդոկ» թերթը (№ 35-ից) դրավճցին, և այդ օրվանից թերթը դադարից լինել ռևոլյուցիոն, մարտնչող օրգան ու շուտով վերջնականապես՝ դադարեց։

Ի. Վ. Ստալինի, Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Ջապարիձեի, Ս. Սարատովեցի, Ս. Ցակուշինի, Ա. Նյուշինի ջանքերով, Բաքվում, 1908 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերից վերսկսվում է բոլշևիկյան լեգալ լրագիր «Բակինսկի րաբոչի»-ի հրատարակությունը (առաջին անգամ լույս է տեսել 1906 թ.)։ «Բակինսկի րաբոչի» լրագրի պատասխանատու խմբագիրն էր Նոբելի գործարանի տոկարտագործ բանվոր-բոլշևիկ Ս. Ցակուշինը։

Լրագրի նպատակների ու խնդիրների մասին առաջին համարում հետևյալն է գրված. «Ընկերներ ընթերցողներ. մենք նորից հնարավորություն ստացանք, երկար ընդհատումից հետո նորից ձեզ հետ շփման մեջ մտնել՝ տպագիր խոսքի միջոցով։ Մենք հարկադրված էինք լռել նավթարդյունաբերողների դեմ մղած մեր պայքարի ամենաուշ մոմենտին, երբ տպագիր խոսքը, հերթի դրված հարցերի քննարկումը, մտքերի փոխանակումը առանձնապես անհրաժեշտ էին... Մեզ հարկ չկա երկար խոսելու մեր ծրագրի մասին, այն ուղիների մասին, որոնցով ընթանալու ենք, որոնցով ընթանալու կոչ պիտի անենք Բաքվի պրոլետարիատին։ Մենք Բաքվի բանվորության հին ծանոթներն ենք և իրար լավ գիտենք։ ...Ընկեր բանվորներ. «Բակինսկի րաբոչի»-ն կլինի ձեր լրագիրը, ինչպիսին ձեզ էր նախկին «Գուդոկ»-ը, և դրա համար, մեծ հետաքրքրությամբ վերաբերնք այդ թերթին, որքան ավելի ակտիվ մասնակցություն ունենաք նրան, նա ավելի լրիվ կարտացոլի ձեր կարիքներն ու ցանկությունները...»։

«Բակինսկի րաբոչի» թերթի խմբագրական աշխատանքները ղեկավարել է Ստ. Շահումյանը, նա իր ռևոլյուցիոն ժուռնալիստիկան ի սպաս է դրել լրագրին և գրել է շատ ղեկավար հոդվածներ, պրոպագանդել է մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, պրոլետարական-աշխատավորական մասսաները համախմբել է բոլշևիզմի դրոշի տակ։

Ստ. Շահումյանը խմբագրել է «Բակինսկի րաբոչի» թերթը նաև տասնմեկ տարի անց, 1917—1918 թվերին։ Այդ շրջանի «Բակինսկի րաբոչի» թերթում Ստ. Շահումյանը գրել է հետևյալ հոդվածները՝ «Ռևոլյուցիայի նոր բռնկումը Պետրոգրադում» (1917 թ. հուլիս 7, № 23), «Մի անգամ ևս զրպարտիչների մասին» (հուլիս 9 № 24), «Պետրոգրադի իրադարձությունները» (հուլիս 12 № 25), «Հայտարարություն» (հուլիս 14, № 26), «Պետական Դումայի եմ-

ռնչներըն» (հուլիս 23, № 30), «Կադետական համադրամարի մասին (հուլիս 4 № 35), «Փոքր գործերի քաղաքականություն (անատորագիր. օգոստոս 6, № 36), «Արդի մոմենտը» (օգոստոս 11, № 38), «Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը և ազգությունները» (օգոստոս 23, № 40), «Մի խանգարենք ընկվորներին քաղաքացիներ լինելու» (սեպտեմբեր 9, № 49), «Ընկեր զինվորներ» (նոյեմբեր 1, № 73), «Բաքվի ռայոնի բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետի կոչը» (նոյեմբեր 4, № 76), «Կովկասյան բանակի երկրորդին Ը-րդ համագումարը» (դեկտեմբեր 30, № 116), «Կովկասյան երկրամասի բանվորների դեպուտատների Սովետների համագումարը» (1918 թ. հունվար 1, № 1 (117), «Ժողովրդական Կոմիսարների Սովետի զորքերը Կովկասում դինադադարելու առթիվ» (փետրվար 6, № 28), «Ճշմարտությունը ելիզավետոպոլի իրադարձությունների մասին» (փետրվար 21, 22. №№ 30, 31), «Անդրկովկասի կոմիսարիատը և ռևոլյուցիան Անդրկովկասում» (փետրվար 24, № 44), «Մեր մի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին» (հունիս 1 և 2, №№ 101, 102), «Կոմունայի մասին» (հունիս 4 և 5, №№ 103, 104), «Անազնիվ դրպարտիչներ» (օգոստոս), «Զեկուցում Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքական և ռազմական դրության մասին» (սեպտեմբեր 20, № 214) և այլն *։

Այդ հոդվածները նվիրված են Բաքվի Կոմունային, շնչում են նրա հրաշալի պայքարով։ Հոդվածների մեջ Ստ. Շահումյանը վճռաբար մերկացնում է Կոմունայի թշնամիներին՝ մենշևիկներին, էսեռներին, դաշնակցականներին, մուսաֆաթիստներին և արտաքին իմպերիալիստական դավերը։

«Բաքինսկի ռաբոչի» լրագրում Ս. Սպանդարյանը նույնպես ունի բազմաթիվ քաղաքագրություններ, հոդվածներ։ «Ազնիվ գայլուլթե» հոդվածում 1908 թ. սեպտեմբեր 27, № 7) լենինյան դիրքերից քննադատում է կադետների փորձերը Լ. Ն. Տոլստոյի ջարին չընդդիմանալուն ուսմունքը պրոլետարիատին քարոզելու առթիվ և բացատրում է բոլշևիկյան տեսակետը մեծ գրողի մասին։ «Էքթեքական խնդիրները» (1908, հոկտեմբեր 4, № 9) հոդվածում նա նկարագրում է նավթաշխարհի բանվորության ծանր վիճակը, առաջարկում է սահմանել պրոֆմիութենական գործադուլային ֆոնդեր, մերկացնում է մենշևիկներին և բուրժուական նացիոնալիստներին։

«Բանվորների ինքնակրթության ընկերությունները» հոդվածում (1908, հոկտեմբեր 10, № 11) Ս. Սպանդարյանը նորից կուլտ-կրթական աշխատանքներին է անդրադառնում, բանվորներին առաջարկում է հրաժարվել կապիտալիստների կազմակերպած ինքնակրթության ընկերություններից, ուժեղացնել պայքարը բուրժուական գաղափարախոսության, նրանց ազդեցության մենշևիկների դեմ և հիմնել իրեն՝ պրոլետարական կուլտուր-լուսավորական ընկերությունները **։

Ադրբեջանում սովետական կարգերի հաստատելուց հետո, 1920 թ. հունիսի 25-ից «Բաքինսկի ռաբոչի»-ն լույս տեսավ, սկզբում «Ազերբեջանական բեղնատառ, իսկ 1920 թ. նոյեմբերի 7-ից սկսած նորից «Բաքինսկի ռաբոչի» անունով։

Ադրբեջանում սովետական կարգերի ամեջմման և ամրապնդման գործում խոշորագույն դեր է կատարել «Բաքինսկի ռաբոչի» թերթը։ Նրա հերոսական աշխատանքը հայտնի է նաև Բաքվի Կոմունայի շրջանում։ «Բաքինսկի ռաբո-

---

* Մանրամասը բիբլիոգրաֆիան տես մեր կազմած «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» (XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը)։ Երևան, 1953, էջ 214—217։

** Մանրամասնությունները տես վերը նշված գրքում, էջ 272։

Բիբլիոգրաֆիա

չիզ-ն այժմ եղբայրական Ապրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի և Բաքվի կոմիտեի օրգանն է։

Շարունակվող ռեակցիայի տարիներին, 1908 թվի փետրվարից ՌՍԴԲԿ կենտրոնական օրգանն էր «Սոցիալ-դեմոկրատ» անլեգալ թերթը, որի գլխավոր խմբագիրն էր Վ. Ի. Լենինը։

«Սոցիալ-դեմոկրատ»-ի առաջին համարը լույս է տեսել Ռուսաստանում, երկրորդը՝ Փարիզում — 1909 թվի հունվարին, 1914 թվի նոյեմբերից (№33—58) —հրատարակվել է Ժնևում։

Սկզբնական շրջանում «Սոցիալ-դեմոկրատ»-ի խմբագրական կազմում կային նաև մենշևիկներ ու լիկվիդատորական սոցիալ-դեմոկրատներ, որոնք աշխատում էին իրենց լիկվիդատորական գիծն անցկացնել։ Վ. Ի. Լենինը մերկացնում էր մենշևիկների դեմքը, որոնք աշխատում էին ներսից պայթեցնել պարտիան։ Այդ մերկացումների հետևանքով մենշևիկները 1911 թվի հունիսից դուրս եկան թերթի խմբագրությունից և «Սոցիալ-դեմոկրատ»-ը խմբագրում էր միայն Վ. Ի. Լենինը։ Պրագայի կոնֆերենցիայից հետո «Սոցիալ-դեմոկրատ»-ը դարձավ բոլշևիկների պարտիայի կենտրոնական օրգանն։ Վ. Ի. Լենինը «Սոցիալ-դեմոկրատ»-ում գրել է բազմաթիվ հոդվածներ՝ մենշևիկների դեմ, հետևողականորեն հակահարվածներ է հասցրել մենշևիկների ֆրակցիոն օրգան «Գոլոս սոցիալ-դեմոկրատ»-ին, որին սրամտորեն անվանում էր «Գոլոս լիկվիդատորով» («Լիկվիդատորների ձայնը»)։

Այդ ժամանակաշրջանի հոդվածներից են՝ «Ճանապարհի վրա» (№ 2) «Պրոլետարիատի պայքարի նպատակը մեր ռևոլյուցիայի մեջ» (№№ 3—4) և այլն։

Այդ ժամանակաշրջանում էր, որ «Սոցիալ-դեմոկրատ»-ում տպագրվեց Ի. Վ. Ստալինի «Նամականի Կովկասից» հոդվածները։

«Սոցիալ-դեմոկրատ»-ում Վ. Ի. Լենինը մի շարք հոդվածներ է գրել II Ինտերնացիոնալի և նրա պարտիաների օպորտունիստական հայացքների ու տակտիկայի դեմ։ Այդ հոդվածների թվին են պատկանում «Միջազգային սոցիալիստական բյուրոյի տասնմեկերորդ սեսիան», «Կոոպերատիվների հարցը Կոպենհագենի Միջազգային սոցիալիստական կոնգրեսում», «Երկու աշխարհ» և այլն։ «Սոցիալ-դեմոկրատ»-ում շատ նյութեր են տպագրվել Գետական Դումայի ընտրությունների վերաբերյալ և սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի գործունեության մասին։

1910 թվականի հոկտեմբերին, լիկվիդատորների դեմ մղվող պայքարի նոր շրջանում հիմք դրվեց բոլշևիկյան անլեգալ լրագրին՝ «Ռաբոչայա գազետա»-ին և Պետերբուրգում լեգալ շաբաթաթերթին՝ «Զվեզդա»-ին։ «Ռաբոչայա գազետա»-ն Լենինյան կազմակերպչական ձեռնարկումներից մեկն էր, որ նպատակ ուներ օգնել, որպեսզի բոլշևիկները կարողանան կազմակերպվել իրենց մի նոր տիպի պրոլետարական մասսայական պարտիա։

«Ռաբոչայա գազետա»-ի հրատարակման առթիվ գրված հայտարարության մեջ, որ պատկանում է Վ. Ի. Լենինի գրչին, ասված է, որ բոլշևիկյան այդ լրագիրը պետք է օգնի պարտիական կադրերին, բանվորական ակտիվին, որպեսզի նրանք «...հասկանան այս պայքարի էությունն ու նշանակությունը և տեղերում աշխատանքն այնպես դնեն, որ սոցիալիստական պրոպագանդայի, քաղաքական ագիտացիայի, պրոֆեսիոնալ շարժման, կոոպերատիվ աշխատանքի և այլն և այլն յուրաքանչյուր հարցի վերաբերյալ որոշեն այն սահմանը, որից դենը շեղումն է սկսում սոցիալ-դեմոկրատիայից դեպի լիբերալ լիկվի-

դատորությունը կամ կիսաանարխիստական օպորտունիզմ, ուլտիմատիզմ և այլն, պարտիական գործը տանել ճիշտ գծով, որն այս սահմաններով է որոշվում։ «Պրոլետարսկայա գազետա»-ի գլխավոր խնդիրներից մեկը մենք համարում ենք — օգնել բանվորներին այս սահմանների որոշման գործում՝ ժամանակակից ռուսական իրականության կարևորագույն կ ո ն կ ր ե տ հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ»*։

«Պրոլետարսկայա գազետա» թերթի առաջին համարում (նոյեմբերի 12-ին, 1910 թ.) «Ռևոլյուցիայի դասերը» հոդվածում տրվում է ռուսական ռևոլյուցիայի հնգամյակի հանրագումարները։ 1912 թվի հունվարին, բոլշևիկների Պրագայի կոնֆերենցիան բարձր գնահատական տվեց «Պրոլետարսկայա գազետա»-ի գործունեությանը և որոշեց այն դարձնել պաշտոնական օրգան մեր պարտիայի Կենտրոնական Կոմիտեի։ Այդ լրագրի №№ 8 և 9-ը լույս տեսան հետևյալ վերնագրի տակ՝ «Պրոլետարսկայա գազետա։ Պաշտոնական օրգան ՌՍԴԲԿ բոլշևիկների Կոմիտեի»։

1910 թվականի օգոստոսին Վ. Ի. Լենինը օգտագործում է Միջազգային VIII սոցիալիստական կոնգրեսին Կոպենհագեն մեկնած Պետական Դումայի դեպուտատների (Ն. Գ. Պոլետաև-բոլշևիկ և Ի. Գ. Պոկրովսկի — այն ժամանակ համակրող) հետ կապվելու հնարավորությունը և նրանց ներգրավելով գործի, հաղթահարելով շատ դժվարություններ, Պետերբուրգում հիմք է դնում՝ «Զվեզդա» լրագրին։ Չնայած ստոլիպինյան սև ռեակցիայի հալածանքներին, «Զվեզդա»-ն սկզբում հրատարակվում էր շաբաթը մեկ անգամ, հետո սկսեց լույս տեսնել շաբաթը 2—3 համար։ «Զվեզդա»-ի առաջին համարը լույս է տեսնել 1910 թ. դեկտեմբեր 16 (29)-ին Պետերբուրգում։ Հենց այդ ժամանակամիջոցում, Մոսկվայում սկսեց հրատարակվել բոլշևիկյան «Միսլ» ընդարձակ ժուռնալը։ Այս ժուռնալի հրատարակումը նույնպես կատարվել է Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ և առանցքում՝ «Զվեզդա» թերթը այդ ժամանակ ամբողջովին՝ մերը չէր, լրագրի խմբագրությունում, սկզբի շրջանում, կային նաև պլեխանովականներ։ Պլեխանովականները այդ ժամանակ հայտնի է, որ պարտիայի հարցում կողմնակից էին բոլշևիկներին, այսինքն կողմ էին պարտիայի անընդհատ պահպանմանը, բայց մնացած բոլոր հարցերում մենշևիկյան դիրքերում էին։ Վ. Ի. Լենինը չնայած գտնվում էր արտասահմանում, բայց իր նամակներով, հոդվածներով, խորհուրդներով օգնում էր թերթին, որպեսզի նա դառնա բոլշևիկյան մարտնչող լրագիր։

1911 թվականի աշնանը «Զվեզդա»-ն արդեն բոլշևիկյան էր, խմբագրվում էր բոլշևիկյան կուլտուրվի կողմից։

Կարճ ժամանակամիջոցում ընդլայնեց իր կապերը բանվորական մասսաների հետ, աշխատակիցների, թղթակիցների թիվը օրավուր աճեց, բարձրացավ թերթի հեղինակությունը, աճեց տիրաժը, ֆաբրիկաներից ու գործարաններից անընդհատ ստացվող նվիրաբերությունները հնարավորություն տվեցին 1912 թվի հունվար 21-ից (փետրվար 3) «Զվեզդա»-ին շաբաթական մեկի փոխարեն հրատարակել երկու համար։ «Զվեզդա»-ն հատկապես իր գոյության երկրորդ շրջանում իսկական բանվորական թերթ էր։ Նրա էջերում մեծ տեղ էր տրվում «բանվորական կյանքին»։ Թերթում բավական մեծ քանակով նյութեր, թղթակցություններ էին տպագրվում՝ ֆաբրիկաներից, գործարաններից, արհեստակցական կազմակերպություններից։ Թերթում հարուստ ինֆորմացիա, նյութեր էին

* Վ. Ի. Լենին. Երկեր. հա. 16, էջ 381

տպագրվում՝ բանվորական լեգալ կազմակերպությունների աշխատանքների մասին (ապահովագրական, հիվանդանոցային գանձարկղները, փոխօգնության գանձարկղները, բանվորական կոոպերատիվներ, բանվորական ակումբներ, ժողովրդական տներ և այլն)։ «Զվեզդա»-ում լայնորեն բացատրվում էր Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի գործունեությունը։ Հատկապես մեծ էր «Զվեզդա»-ի ազդեցությունը Լենայի օրերին։ Նրա հուժկու ձայնը մեծապես նպաստեց բանվորական շարժման վերելքին, գործադուլների ծավալմանը։

Այդ ժամանակաշրջանում էր, որ Ի. Վ. Ստալինը, անլեգալ կերպով, գտնվում էր Պետերբուրգում և մի շարք մարտական հոդվածներում վերլուծեց քաղաքական դրությունը և գրում էր, որ Ռուսաստանի բանվորական շարժումը նոր փուլ է մտնում՝ ռևոլյուցիոն վերելքի փուլ։

Ի. Վ. Ստալինը գրել է. «Լենայի կրակոցները կոտրեցին լռության սառույցը,— շարժվեց ժողովրդական շարժման գետը։

Շարժվե՛ց։

Ամեն բան, ինչ շար էր ու կործանարար ժամանակակից ռեժիմում, ամեն, բան, ինչով հիվանդ էր բազմաչարչար Ռուսաստանը — այդ ամենը հավաքվեց մեկ փաստի մեջ, Լենայում կատարված դեպքերի մեջ։ Ահա թե ինչո՞ւ, համապատասխան Լենայի կրակոցները գործադուլների ու ցույցերի ազդանշան ծառայեցին *։

Ընկեր Վ. Մ. Մոլոտովը, որ այդ տարիներին «Զվեզդա»-ի ակտիվ գործիչներից էր իր հիշողություններում գրում է, որ «Զվեզդա»-ն ամուր քայլերով և հաստատուն ընթացում էր բարձրացող բանվոր դասակարգի հետ, որի առաջավոր շարքերում ավելի ու ավելի բարձր էին լսվում ապստամբության կոչերը։

«Զվեզդա»-ում գրել է նաև անվանի բոլշևիկ-հրապարակախոս Ս. Սպանդարյանը։ «Նամակ Կովկասից» (1912 թ. փետրվար 19, № 11) հոդվածում նա մերկացնում է բուրժուազիայի կադետական պարտիայի ղեկավարներին (Շինգարյով և Ռոդիչև), որոնք գալով Թիֆլիս աշխատել են ամեն կերպ հաշտեցնել, որ Կովկասից Դումայի դեպուտատ ընտրվի՝ կադետ։ Ս. Սպանդարյանը դատապարտում է նաև Թիֆլիսի մենշևիկներին, որոնք կադետների հետ բլոկ կազմելով, օգնել են նրանց։ «IV դումայի ընտրությունների առթիվ» հոդվածում (1912 թ. մարտի 4, № 4) գրում է կադետների նախընտրական պայքարի մասին, թե ինչպես նրանք բլոկ են կազմել՝ ընդդեմ բանվորադեմոկրատական դեմոկրատիայի։

«Զվեզդա» բոլշևիկյան լրագիրը մեծապես նպաստեց պրոլետարական ակտիվի համախմբմանը մեր բոլշևիկյան պարտիայի շուրջը։

Այժմ անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել այդ ժամանակաշրջանում Անդրկովկասում հրատարակվող բոլշևիկյան մամուլի աշխատանքների վրա։

1909 թվականին Ի. Վ. Ստալինի նախաձեռնությամբ, Թիֆլիսում հրատարակվում է բոլշևիկյան անլեգալ «Տիֆլիսսկի պրոլետարիյ» լրագիրը, որի առաջնորդող հոդվածում ասվում է, որ Ռուսաստանի մեծ ռևոլյուցիան կենդանի է, բանվոր դասակարգը ուժեր է հավաքում, նորից ոտքի կանգնելու և տապալելու ցարիզմը, ընկեր Ի. Վ. Ստալինը շեշտում է բանվորական շարժման վերահաս վերելքը, գրում է, որ ամեն կերպ պիտի պահպանել և ամրապնդել

---

* Ի. Վ. Ստալին. Երկեր. հա. 2. էջ 280

անլեգալ պարտիական կազմակերպություններըւ Հոդվածը վերջանում է հետևյալ խոսքերով. «...Անցննենք միահամուռ աշխատանքի՝ Բիֆլիսի պրոլետարիատի ուժերը վերահաս վճռական ելույթներին նախապատրաստելու համարե»

Անհրաժեշտ ենք համարում գրել ռեակցիայի տարիներին Ստ. Շահումյանի խմբագրությամբ հրատարակված «Սոցիալ-Դեմոկրատ ժիզնь» բոլշևիկյան շարաթաթերթի մասին։

Այս շաբաթաթերթը լույս է տեսել Բաքվում 1911 թվի մարտի 26-ից Ստ. Շահումյանի խմբագրությամբ և փակվել է ցարական կառավարության կողմից՝ երրորդ համարից հետո՝ ապրիլի 22-ին։ «Սոցիալ-Դեմոկրատ ժիզնь»-ի № 3-ում առաջին անգամ տպագրվել է Վ. Ի. Լենինի «Մարքսիզմը և ընաշրջ Ջարյաե»-նե վերնագրով հոդվածը։ Շաբաթաթերթի առաջին համարում «Խմբագրություն»-ից հոդվածում (Ստ. Շահումյանի գրածն է) հետևյալն է գրված թերթի նպատակների ու խնդիրների մասին. «Բացատրել երկրի հասարակական կյանքի պայմանները, նրանցում մասնակցել քաղաքական-հասարակական կյանքին, օգնել արհեստակցական, կուլտուր-կրթական և բանվորական այլ կազմակերպությունների աշխատանքներին, լուսաբանել, մասսայականացնել պրոլետարական շարժման թեորիան և պրակտիկ հարցերը։

Այնուհետև խմբագրությունը դիմում է ընթերցողներին, ըստ հնարավորության գործուն մասնակցություն ունենալ թերթի «...ինչպես գաղափարական մասի դրմանը, այնպես էլ նրա տարածման գործում։ Բանվորների հոդվածները և նամակները, ինչպես նաև նավթահանքերից, գործարաններից և առևտրա-արդյունաբերական հաստատություններից ստացվող խրոնիկանները մեր կողմից ընդունվելու են մեծ շնորհակալությամբ։ Ընթերցողի նման մասնակցությունը իր օրգանի բախտին, մենք համարում ենք նրա գոյության և հաջողության նախապայմանը։

Որպեսզի գաղափար տանք այս շաբաթաթերթի բովանդակության մասին, ներքևում զետեղում ենք երկրորդ համարի հոդվածների նկարագրությունը՝

— Պետական խորհուրդը և Գ. Ա. Ստոլիպինը։ [Առաջնորդող. Ստ. Շահումյանինն է]։

— Ստիվին. Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին։ [Ստ. Շահումյանի հոդվածն է]։

— 27 Միլիոնանոց տենդ։ [Բաքվի քաղաքային դումայի ձայնավորների ընտրության մասին]։

— Ռևակարանային հարց։

— Գիտական զրույցներ։ [Գիտական սոցիալիզմի մասին]։

— Նավթարդյունաբերական բանվորների Միության վերածնունդը։

— Փոքրիկ ֆելիետոնի փոխարեն։— Քրիստոֆոր Հովակիմովիչը ցենզորի դերում։ [«Բաքուե ռուսերեն թերթի խմբագրի մասին։ Ստորագրություն «Ռնմի-

— Գ. Ն. Արդյունաբերության վերելքը և բանվորական շարժումը։

— Անցնողների բանակում։ [Ռեակցիայի շրջանի մասին]։

— Մամուլի տեսություն։— Մամուլը Պետական Դումային ուղղված բանվորական պետիցիաների մասին։

— Մարգանեցի արդյունաբերությունը և բանվորությունը Չիաթուրում։ (Սեփական թղթակցից)։

— Պրոֆմիություններում և հասարակական կազմակերպություններում։— Նավթարդյունաբերական բանվորների Միությունում։ [Ինֆորմացիա]։

— Բանվորական կյանք [Սուրախանում, Բալախանում, Ջիխում]։

Ստ. Շահումյանը «Սովրեմեննայա ժիզնի» շաբաթաթերթում ունի հետևյալ հոդվածները. «Գորկու մասին» («Աստիվինա ստորագրությամբ, 1911 մարտի 26-ի № 1-ում), «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին» (ապրիլի 8-ին, № 2), «Մայիսյան տոնն արտասահմանում» (ապրիլի 22-ին, № 3), «Բաքվի նավթարդյունաբերության դրության մասին» (ապրիլի 22-ին, № 3) և այլն։

1911 թվի ապրիլի 22-ին (մայիսի 5) «Սովրեմեննայա ժիզնի» շաբաթաթերթը ցարական կառավարությունը փակեց։

Մի քանի ամիս հետո, 1911 թվի հոկտեմբերից Ստ. Շահումյանի խմբագրությամբ, Բաքվում լույս է տեսել մարքսիստական «Նոր խոսք» հրկշաբաթաթերթը։

Ստոլիպինյան ռեակցիայի դաժան պայմաններում Ստ. Շահումյանը իր քաղաքական-պարտիական մեծածավալ գործունեության հետ, շարունակում է բոլշևիկ ժուռնալիստ-հրապարակախոսի եռանդուն աշխատանքները, նա «Նոր խոսք»-ում գրում է՝ «Տիեզերական թութակը», որտեղ անողոք կերպով մերկացնում է դաշնակ «տեսաբան» Միքայել Վարանդյանի նացիոնալիստական դատարկ ֆրազեոլոգիան, «Մատենախոսության» հոդվածում պաշտպանում է Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության դրույթները։

Բանվորական շարժման սկսվող վերելքը, հասարակական-քաղաքական կյանքի արթնացումը, բերեց բոլշևիկյան «Պրոսվեշչենիե» ամսագրի և «Պրավդա» լրագրի հրատարակում։

«Պրոսվեշչենիե»-ն քաղաքական-հասարակական և գրական ամսագիր էր, որ լույս էր տեսնում 1911 թվականից Պետերբուրգում։ Ամսագիրը ղեկավարում էր արտասահմանից Վ. Ի. Լենինը։ Այդ ժուռնալում են տպագրվել Վ. Ի. Լենինի՝ «Մարքսիզմի երեք աղբյուրները և երեք բաղկացուցիչ մասերը» (1913), «Ինտերնացիոնալական դիտողություններ ազգային հարցի մասին» (1913 թ.), «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» (1914 թ.) և այլ հոդվածները։ Այդ ժուռնալում է տպագրվել նաև Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատությունը։

1912 թվի ապրիլի 22-ին (մայիսի 5-ի ն. տ.) Պետերբուրգում սկսեց լույս տեսնել բոլշևիկյան համենօրյա լրագիրը՝ «Պրավդա»-ն։ «Պրավդա»-ն ծնվեց Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի հետ միասին։ Նրա հրատարակման օրը մի տոն էր. ի պատիվ հարուցած թերթի, որոշվեց մայիսի 5-ը համարել բանվորական մամուլի տոնի օր։ Վ. Ի. Լենինը շատ մեծ նշանակություն էր տալիս «Պրավդա»-ի հրատարակմանը։ Թերթի լույս տեսնելու առթիվ Վ. Ի. Լենինը գրել է. «Բանվորական օրաթերթի հիմնելով, Պետերբուրգի բանվորները խոշոր, առանց չափազանցության կարելի է ասել, պատմական գործ կատարեցին»*։

«Պրավդա»-ի առաջին համարի խմբագրականում, որ պատկանում է Ի. Վ. Ստալինի գրչին, հետևյալն է ասված այդ թերթի նպատակների ու անելիքների մասին. «Ով կարդում է «Ջվեզդա»-ն և գիտե նրա աշխատակիցներին, որոնք նաև «Պրավդա»-ի աշխատակիցներն են, նրա համար դժվար չէ հասկանալ, թե ինչ ուղղությամբ է աշխատելու «Պրավդա»-ն։ Լուսավորել ռուսական բանվո-

* Վ. Ի. Լենին, Երկեր, հտ. 18, էջ 227։

բական շարժման ուղին միջազգային սոցիալ-դեմոկրատիայի լույսով, ճշմարտություն սերմանել բանվորների մեջ բանվոր դասակարգի բարեկամների և թշնամիների մասին, պահապան կանգնել բանվորական գործի շահերին,— ահա ինչ նպատակներ է հետապնդում «Պրավդա-ն *»։

Իրոք, «Պրավդա»-ի դերը շատ մեծ էր։ Նա բոլշևիզմի կողմն էր նվաճում բանվորական մասսաների։

Ցարական կառավարության հալածանքների, տուգանքների, թերթի համարները բռնագրավելու ժամը պայմաններում «Պրավդա»-ն իր գոյությունը շարունակում էր միայն բանվորական լայն ակտիվի աջակցության շնորհիվ։ «Հրապարակային դրամական տուգանքները «Պրավդա»-ն կարող էր վճարել բանվորների շրջանում լայն չափերով կատարվող հանգանակությունների շնորհիվ միայն։ «Պրավդա»-ի գրավված համարների տիրաժի մի զգալի մասը հաճախ, այնուամենայնիվ, ընթերցողների ձեռքն էր ընկնում, որովհետև առաջավոր բանվորները դեռ գիշերով տպարան էին գալիս ու իրենց հետ կապոցներով լրագրեր էին տանում **»։

Ոստիկանությունը ութ անգամ փակել է «Պրավդա»-ն (երկու և կես տարվա ընթացքում) և միշտ էլ բանվորական ակտիվի օգնությամբ սկսել է լույս տեսնել լրագիրը՝ փոխված անունով։

1913 թվի հուլիսին ցարիզմը փակեց «Պրավդա»-ն, բայց լույս տեսավ նոր անունով՝ «Ռաբոչայա Պրավդա», սա էլ փակվեց, փոխարինը լույս տեսավ՝ «Սևեռնայա Պրավդա»։ 1913 թ. սեպտեմբերին փակվեց «Սևեռնայա Պրավդա»-ն, բոլշևիկների պարտիան հրատարակեց՝ «Պրավդա Տրուդա»։ Այնուհետև իրար հետևից ոստիկանությունը հալածում, տուգանում, փակում էր թերթը, իսկ մեր պարտիան լույս էր ընծայում նորանոր անուններով՝ «Ջա Պրավդա», «Պրոլետարսկայա Պրավդա», «Ռաբոչի», «Ռաբոչիյ», «Տրուդովայա Պրավդա» լրագրերը։

Բանվորները «Պրավդա»-ն իրենց հարազատ թերթն էին համարում, վրա-տահում էին նրան, ունկնդրում էին նրա ձայնին, խորհուրդներին։ Այդ շրջանում «Պրավդա»-ն տարածվում էր, միջին հաշվով, 40 հազար տիրաժով, սմեն մի համարը տասնյակ ընթերցողների էր ապասարկում, ռևոլյուցիոն-մարքսիզմի ոգով էր դաստիարակում պրոլետարիատին, կազմակերպում էր, նախապատրաստում ապագա մարտերի համար։

«Պրավդա»-ի բոլոր համարներում տպվում էին բանվորական բազմաթիվ թղթակցություններ՝ ֆաբրիկաններից և գործարաններից։ Այդ թղթակցություններում վառ գույներով նկարագրվում էր պրոլետարական մասսաների շահագործումը, քննադատվում, մերկացվում էր կապիտալիզմը։ «Պրավդա»-ն գրում էր կոնկրետ, այս կամ այն գործարանի բանվորների ծանր շահագործման, նրանց գործադուլների մասին։ Խոշոր գործադուլների ժամանակ «Պրավդա»-ն կազմակերպում էր մյուս արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների օգնությունը, համերաշխությունը։ «Պրավդա»-ն հետևողականորեն լուսաբանում էր ներքին ու արտաքին քաղաքական անցուդարձը՝ բոլշևիկյան տեսակետից։ «Պրավդա»-ն հսկայական աշխատանք տարավ IV Պետական Դումայի ընտրությունների ժամանակ, նա մերկացրեց լիբերալ բուրժուազիային և նրանց հետ՝ համաձայնողական մենշևիկներին։

---

* Ստալին, Ի. Վ. Երկեր, հտ. 2, էջ 291։

** ՀամԿ(բ)Կ պատմություն։ Համառոտ դասընթաց։ Երևան, 1950. էջ 202

«Պրավդա»-ն խոշոր աշխատանքներ տարավ նաև աշխատավոր գյուղացիության կյանքը, շահագործումը, ստոլիպինյան «ռեֆորմի» հետևանքները լուսաբանելու գործում։

«Պրավդա»-ն պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը պարզաբանում էր, որ 1905 թ. Ռուսաստանի առաջին ռևոլյուցիայի խնդիրները չեն լուծվել, որ նոր ռևոլյուցիա է լինելու, որ այդ նոր ռևոլյուցիայում պրոլետարիատը պիտի հանդես գա որպես առաջնորդ և նա կունենա այնպիսի հզոր դաշնակից, ինչպիսին ռևոլյուցիոն գյուղացիությունն է։ «Պրավդա»-ն բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ հետևողականորեն պայքար էր մղում մենշևիկների ազդեցությունից հանելու, նվաճելու բանվորական լեգալ կազմակերպությունները՝ արհմիությունները, ապահովագրական և փոխօգնության գանձարկղները, մամուլը և այլն։ Բոլշևիկներին այն ժամանակ անվանում էին «պրավդիստներ»։ «Պրավդա»-ի հետ աճում էր ռևոլյուցիոն պրոլետարիատի մի ամբողջ սերունդ, որը հետո կատարեց Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիան։ «Պրավդա»-ի հետևում տասնյակ և հարյուր հազարավոր բանվորներ էին կանգնած։ Ռևոլյուցիոն վերելքի տարիներին (1912—1914) դրվեց մասսայական բոլշևիկյան պարտիայի ամուր հիմքը, որը «քանդել չկարողացան ցարիզմի բոլոր հալածանքները իմպերիալիստական պատերազմի շրջանում»*։

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց մի քանի օր առաջ, ցարական կառավարությունը բռնագրավեց «Պրավդա»-ի խմբագրությունը, բանտ նետեց բոլշևիկյան պարտիայի ղեկավարներին և հետո աքսորեց նրանց։

1914 թվի ապրիլի 19-ին Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսնում ընդհատ ժիզնի բոլշևիկյան լրագիրը, որի երկրորդ համարը բռնագրավվում է ոստիկանության կողմից և լրագրի հրատարակումն էլ արգելվում։

«Ընդհատ ժիզնի» լրագրի առաջին համարում տպագրված է Ստ. Շահումյանի «Բանվորական մամուլի օրը» հոդվածը, որտեղ ասված է հետևյալը. «...Դա բանվորական մամուլի բարոյական հատուցման օրն է, մամուլի այն աշխատողների համար, որոնք լցված են զնդաններում, գտնվում են հեռու Սիբիրում, զրկված են վաստակից, աքսորվում են քաղաքներից բանվորական թերթին մասնակցելու, այն խմբագրելու և տարածելու համար։ Դա այն օրն է, երբ Ռուսաստանի բանվոր դասակարգը պետք է տպացուցի, որ ուժեղ ու անդրդվելի է սեփական բանվորական մամուլ ունենալու իր ցանկությունը, իր կամքը»**։

Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին լույս են տեսել բոլշևիկյան հետևյալ թերթերը։ 1914 թվի նոյեմբեր 1-ից, ժնևում, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ վերսկսվել է «Սոցիալ-դեմոկրատ» թերթը։ Այդ թերթի առաջին համարում տպագրվել է Վ. Ի. Լենինի գրած՝ ՌՍԴԲԿ կենտկոմի մանիֆեստը, «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան», «Սոցիալիստական Ինտերնացիոնալի դրությունը և խնդիրները» հոդվածները։ «Սոցիալ-դեմոկրատ» թերթում ծավալվեց վճռական պայքար Երկրորդ Ինտերնացիոնալի օպորտունիզմի, սոցիալ-շովինիստական քաղաքականության դեմ։

«Սոցիալ-դեմոկրատիա»-ի էջերում մերկացվեցին տրոցկիզմի և բուխարինյան-պյատակովյան խմբակի դավաճանական տակտիկան։

1915 թվին ժնևում, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ լույս տեսավ «Կոմունիստ» ժուռնալը։ Այդ ժուռնալում տպագրվել են Վ. Ի. Լենինի՝ «II Ինտեր-

* Համկ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ
** Շահումյան, Ստ. Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 365

նացիոնալի կրախը», «Քրանսիական սոցիալիստի ազնիվ ձայնը», «Իմպերիալիզմը և սոցիալիզմը Իտալիայում» հոդվածները։

Բոլշևիկյան կազմակերպությունները իմպերիալիստական առաջին պատերազմի տարիներին արդյունաբերական կենտրոններում. հրատարակել են բավական մեծ քանակությամբ թերթիկներ, թռուցիկներ և թերթեր։

Տարբեր ժամանակներում լույս են տեսել հետևյալ լրագրերը՝ Պետերբուրգում «Պրոլետարսկի գոլոս», Սամարայում «Ջարյա Պովոլժյա» ժուռնալը, Եկատերինոդարում «Պրի կուբանսկին ստեպի» ժուռնալը, Իրկուտսկում «Տովարիշչ Պրոլետարեև» լրագիրը, Սարատովում «Նաշա գազետա», Խարկովում «Գոլոս սոցիալ-դեմոկրատա», Դոնեցկում՝ «Պրավդա Տրուդա» և այլն։

Սակավ բացառությամբ, այս լրագրերի, հանդեսների մեծ մասը կարճատև կյանք են ունեցել, մեկ-երկու համարից հետո փակվել են ցարական կառավարության կողմից։ Համեմատաբար երկար կյանք է ունեցել «Վոլգրսկի Սոցիալ-դեմոկրատ» բանվորական ժուռնալը, որ ստեղծել էր «Պրավդա»-ն և որը հետևողականորեն տանում էր ռևոլյուցիոն գիծ ու պաշտպանում էր պրոլետարիատի շահերը։

1917 թվի փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո, մեր պարտիայի Կենտրոնական Կոմիտեն որոշեց վերսկսել «Պրավդա»-ի հրատարակությունը։

Երեք տարվա ընդհատումից հետո «Պրավդա»-ն նորից հնչեցրեց բոլշևիկյան իր մարտական խոսքը։ 1917 թ. մարտի 5-ի (18 ն.տ.) համարում, խմբագրությունը հետևյալ կերպ է բնորոշել թերթի նպատակները և խնդիրները. «Պետերբուրգի և Ռուսաստանի պրոլետարիատը հիշում է «Պրավդա» լրագիրը։ Մեր բանվորական թերթը երկու տարի բարձր է պահել պրոլետարական դրոշակը, այն առաջ է տարել, ցարական ռեժիմի փուշ ու տատասկի միջով մինչև պատերազմի օրերը... Ինքնակալության ռեժիմի ծանր պայմաններում բանվորական լրագիր «Պրավդա»-ն հանդիսացել է ռևոլյուցիոն բանվոր դասակարգի օրգանը։ Բանվորական լրագիր «Պրավդա»-ն ռևոլյուցիայի և ազատության օրերին կծառայի բանվոր դասակարգին *։

Ապրիլի 7 (20)-ին «Պրավդա»-ում տպագրվեցին Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսները («Պրոլետարիատի խնդիրները մեր ռևոլյուցիայում»)։

Այդ ժամանակաշրջանում, բացի «Պրավդա»-ից, որ լույս էր տեսնում Պետրոգրադում, Մոսկվայում հրատարակվում էր «Սոցիալ-դեմոկրատ»-ը և բազմաթիվ բոլշևիկյան թերթեր՝ Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում. օրինակ՝ «Գոլոս սոցիալ-դեմոկրատա — Կիևում, «Պրոլետարիե — Խարկովում, «Դոնեցկի Պրոլետարիե»—Լուգանսկում, «Ծուծմեի Ռաբոչեյ»—Օդեսայում, «Զվեզդա — Մինսկում, «Սիբիրսկայա Պրավդա — Ուրալում, «Սիբիրսկայա Պրավդա — Կրասնոյարսկում և այլն, և այլն։ Այս և տեղական այլ տասնյակ լրագրեր իրենց ամենօրյա պրոպագանդայով և կազմակերպչական աշխատանքներով աշխատավորական լայն մասսաներին համախմբում էին բոլշևիկյան պարտիայի դրոշի տակ։ 1917 թվին, մեր պարտիան մի շարք թերթեր էր հրատարակում գյուղացիության և ինովերների համար. այսպես օրինակ՝ «Սոլդատսկայա Պրավդա (Պետերբուրգում), «Օկոպնայա Պրավդա — Ռիգայում,

* Большевитск. печать. Сб. материалов.1940. стр. 237—238.

«Պրոլետարսկոյե դելո» — կրոնշտադտում. հրատարակվում էր նաև «Ռևոլյուցիոնայա բիբլիոտեկա գյուղացիական քերթը։

1915—1917 թվականներին Անդրկովկասում հրատարակվել են՝ «Կովկազսկի ռաբոչի» — Թիֆլիսում, «Բակինսկի ռաբոչի» — Բաքվում, «Բրծոլա»—Թիֆլիսում և հայերեն մի շարք բոլշևիկյան թերթեր։

Հայերեն թերթերը հետևյալներն են. «Պայքար» — լույս է տեսել Թիֆլիսում 1915 թվի դեկտեմբերի 6 (19)-ից մինչև 1919 թիվը։ Այդ լրագրին մինչև 1917 թվականը, ակտիվ աշխատակցում էին բոլշևիկները։ ՌՍԴԲԿ ապրիլյան կոնֆերենցիայից հետո՝ 1917 թվականի մայիսի 10-ից (թերթի 100-րդ համարից) բոլշևիկները դադարեցին «Պայքար»-ին աշխատակցելուց, դուրս եկան խմբագրությունից և հիմնեցին իրենց «Բանվորի կռիվը» բոլշևիկյան լրագիրը։

«Պայքար»-ի 1916 թվականի համարներում են տպագրվել Ստ. Շահումյանի՝ «Մեր Սուրենը», «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը (ժամանակակից ինտելիգենցիայի հասարակական դերը), «Հայ գրականության ժողովածուի մասին» [Сборник армянской литературы. Под ред. М. Горького. 1916], «Լուսոպիա» լրագրի մասին և այլն հոդվածները։ 1917 թվի մայիսի 1-ից (ն. տ.) Բաքվում լույս է տեսել «Սոցիալ-դեմոկրատ» բոլշևիկյան թերթը՝ Ստ. Շահումյանի և Ա. Միկոյանի խմբագրությամբ։ «Սոցիալ-դեմոկրատ»-ում տպագրվել են Ստ. Շահումյանի՝ «Մինիստրական կրիզիսի առթիվ» (1917 մայիս 7, № 2), «Կոալիցիոն մինիստրությունը» (1917 մայիս 14, № 3), «Քաղաքական ճգնաժամը» (1917 մայիս 28, № 4) և այլ հոդվածները։

Ա. Ի. Միկոյանը «Սոցիալ-դեմոկրատ»-ում տպագրել է բազմաթիվ հոդվածներ, որոնց թվում՝ «Քաղաքական կրիզիսը և կոալիցիոն մինիստրությունը» (1917, մայիս 14, № 3), «Ժողովրդի պաշտպաններ» (1917 հունիս 4, № 5, «Դաշնակցականները ազատատավորության պաշտպաններ» (1917, հունիս 11, № 6), «Ի՞նչ է նշանակում հաշտություն առանց աննեքսիայի և կոնտրիբուցիայի» (1917, հունիս 17, № 7), «Ներելի տգիտություն, թե՞ աններելի դրպարտություն» [Սպեցիֆիկյան «Բանվոր» թերթի դրպարտությունների մասին] (1917, հունիսի 25, № 8), «Ովքեր են մենշևիկները և բոլշևիկները» (1917, հուլիս 2, № 9), «Ռաբոչիները քաղաքին միացնելու հարցը» (19 17, հուլիս 9, № 10), «Ժրոնսի ճեղքումը» (1917, հուլիս 16, № 11), «Կռիվ հակահեղափոխության դեմ» [Կերենսկու կառավարության կողմից՝ «Պրավդա» և «Սոլդատսկայա պրավդա» թերթերը փակելու մասին] (1917, հուլիս 23, № 12), «Մարքսիզմի ռենեգատներին»— Պատերազմը և սոցիալ-դեմոկրատիան» [Սպեցիֆիկների և նրանց օրգան «Բանվոր» թերթի մասին]։

1917 թվի հունիսի 29-ից մինչև 1918 թ. փետրվար ամիսը հրատարակվել է ՌՍԴԲԿ (Բոլշևիկների Թիֆլիսի Կոմիտեի օրգան) «Բանվորի կռիվը» թերթը։ Թերթի բովանդակության մասին ընդհանուր գաղափար տալու համար, ներքևում տրվում է 1918 թվի հունվար 11-ի № 5-ի բովանդակությունը.

— Աշխարհագներն ու հիմնադիր ժողովը։ [Առաջնորդող]։

— Դուանցի։ Ի՞նչ է դաշնակցությունը։

— Բեզրաբոտնի, Ի. Երկու հեղափոխություն։ [Փետրվարյան և Հոկտեմբերյան սոցիալիստականը]։

— Մամուլ։ [«Պայքար»-ի մասին]։

— Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն։ [Կոչ Անդրկովկասի քաղաքական դրության մասին, պրոլետարիատի անելիքները]։

1917 թ. հունիսի 22-ին Ալեքսանդրապոլում (ներկայիս Լենինական) լույս է տեսել «Նոր կյանք» բոլշևիկյան թերթը։ Այդ թերթի № 1-ի առաջնորդողում հետևյալն է գրված թերթի նպատակների ու խնդիրների մասին. «Ալեքսանդրապոլի հայ իրականության մեջ առաջին սոցիալիստ թերթն է, որ գալիս է պաշտպանելու բանվորության և աղքատ գյուղացիության շահերը... Հեղափոխության այս ծանր շրջանում հրապարակ է գալիս «Նոր կյանք»-ը՝ համախմբելու հայ դիտակից ուժերը և միացնելու նրանց Սոցիալ-դեմոկրատիայի մեծ ընտանիքին, առաջնորդելու նրանց դեպի նորանոր հաղթանակներ։

...Պարզելով դասակարգային կռվի դրոշը, հավաքելով իր շուրջը աշխատավոր մասսաներին, «Նոր կյանք»-ը նրանց կարիքների ու ցավերի բերանը, նրանց ճանապարհը լուսավորող ուղեցույց աստղն է լինելու։

«Նոր կյանք»-ը լայն ագիտացիա է ծավալել բոլշևիկյան լոզունգների շուրջը, գրել է բանվորագյուղացիական մասսաների ծանր վիճակի, դասակարգային պայքարի մասին։ Ջերմ ընդունելության է արժանացել «Նոր կյանք»-ը Բաքվի «Սոցիալ-դեմոկրատ» լրագրի կողմից, որը իր ողջույնի մեջ գրել է. «Սրտի անհուն բերկրանքով և հոգևոկան մեծ հաճույքով կարդացինք առաջին 5 համարները։ Ի՜նչքան դեղեցիկ, որքան անհրաժեշտ գործ են սկսել մեր ընկերները Ալեքսանդրապոլում, ցույց են տալիս՝ բանվորների, գյուղացիների և զինվորների այն բազմաթիվ շնորհակալական նամակները ու դրամական նվիրատվությունները, որոնց պատահում ենք թերթում... Ստացված 5 համարները մի շատ մխիթարական և ոգևորիչ բան են հաղորդում մեզ։ Որ մեր գավառի ընկերները, կռվելով դաշնակցության նենգ շովինիզմի և կեղծ սոցիալիզմի դեմ և դասակարգային գիտակցության բերելով հայ բանվորությանը, իրենք կանգնած են և անշեղ կերպով ընթանում են միջազգային սոցիալիզմի ուղիով, հավատարիմ կերպով և հետևողականորեն պաշտպանում են ինտերնացիոնալի վնհ գաղափարները։ «Նոր կյանք»-ը գավառի բանվորության առաջնորդող փարոսն է։ «Նոր կյանք»-ը նորածագ մի լույս է... Այդ լույսը պիտի մնծանա, պիտի ուռճանա։ Մեր ընկերական ողջույնն ենք ուղարկում այդ լույսին, «Նոր կյանք»-ին և նրա շուրջը աշխատող բոլոր ընկերներին։

Ճանկանում ենք հաջողություն։

Խոստանում ենք օժանդակություն»*։

1917 թվականի օգոստոսից ՌՍԴԲԿ (բոլշևիկների) Ալեքսանդրապոլի կոմիտեն հրատարակել «Պրավդա ժիզնիո շաբաթաթերթը, որը խմբագրում էին՝ Պ. Արվելաձեն և Բ. Ղարիբջանյանը։

«Պրավդա ժիզնիո»-ն շատ մեծ գործ է կատարել Ալեքսանդրապոլի, Սարիղամշի, Ղարսի բանվորությանը և զինվորական մասսաներին բոլշևիկյան պարտիայի շուրջը համախմբելու ուղղությամբ։

Այդ լրագիրը լույս է տեսել բանվորների, զինվորների բարոյական ու նյութական աջակցությամբ, լայնորեն տարածվել է Կովկասյան ռազմաճակատի զորամասերում։ «Պրավդա ժիզնիո»-ում արտատպվել են Վ. Ի. Լենինի հոդվածները, կան բանվորական ու զինվորների թղթակցություններ, Ալեքսանդրապոլի բոլշևիկների հոդվածներ։

1917 թվականի օգոստոսի 18-ին, Շուշում, բոլշևիկների կազմակերպությունը լույս է ընծայել «Նեցուկ» թերթը։

---

* Սոցիալ-դեմոկրատ, 1917, № 11

Ստորև բերում ենք այդ թերթի 1917 թ. սեպտեմբեր 14-ի № 5-ի բովանդակությունը, որպեսզի որոշ գաղափար տանք թերթի մասին.

— Երեկ, 14 սեպտեմբերին, [Առաջնորդող՝ Ընդհանուր քաղաքական տեսություն է ռեակցիայի օրավուր աճման մասին]։

— Երեկվա Բ. և Զ. ներկայացուցիչների [դեպուտատների] նոր խորհուրդը։

— Կամարի, Հ. Բանվորությունը և գյուղացիական չքավորությունը։

— Լենին, Ն. Լոզունգների մասին։ [Թարգմանական]։

— Կուսակցական կյանք։ [Ինֆորմացիա]։

Հուլիսյան օրերին հայտնի է, որ մեր բոլշևիկյան պարտիան ստիպված՝ նորից ընդհատակ անցավ։

«Պրավդա»-ի խմբագրությունը հուլիսյան օրերին կոնտրռևոլյուցիոն ժամանակավոր կառավարության կողմից քարուքանդ արվեց, լրագրի հրատարակությունը արգելվեց։

Վ. Ի. Լենինը ընդհատակում էր, Ի. Վ. Ստալինն էր ղեկավարում Կենտկոմի աշխատանքները և նրա օրգանը հանդիսացող «Պրոլետարի» լրագիրը։ «Պրոլետարի»-ն այդ ժամանակ խոշոր աշխատանք է կատարել ՌՍԴԲԿ(բ) վեցերորդ համագումարի որոշումները մասսայականացնելու, ռևոլյուցիայի շինամիներին մերկացնելու գործում, դաստիարակել է մասսաներին բոլշևիկյան ոգով։ Հակառևոլյուցիոն-կոռնիլովյան օրերին «Պրոլետարի»-ն կոչ է արել պաշտպանել Պիտերը։

Թե «Պրոլետարի»-ն և թե «Ռաբոչի պուտ» բոլշևիկյան օրգանները պրոլետարական մասսաների զինված ապստամբության նախապատրաստման ժամանակաշրջանում հսկայական աշխատանք են ծավալել։ «Ռաբոչի պուտ»-ում է տպագրվել Վ. Ի. Լենինի «Նամակ ընկերներին» հոդվածը, որտեղ անարգանքի սյունին է գամել ռևոլյուցիայի շորթչրրեներ և դավաճաններ Կամենևին և Զինովևին։ «Ռաբոչի պուտ» թերթում լույս են տեսել Ի. Վ. Ստալինի «Սովետների իշխանությունը», «Ճգնաժամ են կոփում», «Աշխատանքի բաժանումը սոցիալիստ-ռևոլյուցիոներների պարտիայում» և այլ հոդվածներ, որոնց միջոցով նա մասսաներին կոչ էր անում՝ վճռական կռվի դուրս գալ Սովետների իշխանության համար, մերկացնում էր մենշևիկների ու էսէռների դավաճանությունը ռևոլյուցիային։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նախօրյակին Վ. Ի. Լենինը Ֆինլանդիայից անլեգալ կերպով եկավ Պետրոգրադ և ղեկավարեց զինված ապստամբության նախապատրաստման գործը։

Ժամանակավոր կառավարության օրերը հաշված էին, սկսվել էր սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթական երթը։

1917 թ. հոկտեմբեր 24-ին, կեսգիշերին հրամայեց բոլշևիկյան «Ռաբոչի պուտ» լրագիրը գրավել և վաղ առավոտյան գրահապատ ավտոներ ուղարկեց, որպեսզի խմբագրությունը և լրագրի տպարանը գրավեն։

Բայց Ի. Վ. Ստալինի ցուցումով, կարմիր գվարդիականներն ու ռևոլյուցիոն զինվորները հետ մղեցին գրահապատ ավտոները, խմբագրատան և տպարանի մոտ ուժեղացրած պահպանություն նշանակեցին և առավոտյան ժ. 11-ին «Ռաբոչի պուտ» թերթը լույս տեսավ՝ առաջին էջի վրա տպած ժամանակավոր կառավարությունը տապալելու կոչը։

26-ին հոկտեմբերի բոլշևիկյան պարտիայի Կենտկոմի օրգան «Ռաբոչի պուտ»-ը հրատարակեց Վ. Ի. Լենինի գրած «Ռուսաստանի քաղաքացիներին»

դիմումը, որը ամբողջ աշխարհին հայտարարեց Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը։

Հենց առաջին օրերից Հոկտեմբերյան ռևոլյուցիայի, բոլշևիկյան պարտիան և Սովետական կառավարությունը կենտրոնում և տեղերում հիմք են դնում հրատարակչական գործին։ Շուտով լույս են տեսնում «Պրավդա»-ն և «Իզվեստիա»-ն, խոշոր քաղաքներում և գավառային կենտրոններում մեծ թափով ծավալվում է տեղական մամուլի հրատարակման գործը։ Վ. Ի. Լենինը ծանրաբեռնված լինելով հսկայական չափերի պարտիական-քաղաքական և Սովետական պետության հարցերով մեծ ուշադրություն է նվիրում մամուլի և հրատարակչության խնդիրներին։

1918 թվին Վ. Ի. Լենինը գրում է իր հայտնի հոդվածը. «Մեր քերթերի բնույթի մասինն, որտեղ ասված է. «Մեզանում չկա գործնական, անխնա, ճշմարիտ-ռևոլյուցիոն պատերազմ չարիքի կոնկրետ կրողների դեմ։ Մեզանում պահպանում է մասսաների դաստիարակությունը կենդանի, կոնկրետ օրինակներով և նմուշներով կյանքի բոլոր բնագավառներից, իսկ այդ — մամուլի գլխավոր խնդիրն է կապիտալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակ։ Մեզանում քիչ է ուշադրությունը դեպի այն նորյա կողմը գործարանային, գյուղական, գնդի ներքին կյանքի, որտեղ ամենից ավելի կառուցվում է նորը, որտեղ հարկավոր է ամենից ավելի ուշադրություն, հրապարակայնություն, հասարակական քննադատություն, անպետքի խարազանում, լավից սովորելու կոչ։ Ավելի քիչ քաղաքական ճառամաքանություն։ Ավելի քիչ ինտելիգենտական դատողություն։ Ավելի մոտ կյանքին։ Ավելի շատ ուշադրություն այն բանին, թե ինչպես բանվորական և գյուղացիական մասսան իրականում կառուցում է մի նոր բան իր առօրյա աշխատանքում։ Ավելի շատ ստուգում այն բանի, թե որքան կոմունիստական է այն նորը *։

1918 թվին, երբ քաղաքացիական պատերազմ էր Ռուսաստանում, Անդրկովկասը կտրված էր Ռուսաստանից։ Հյուսիսային Կովկասում գեներալներ Կորնիլովը, Ալեքսեևը, Դենիկինը անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիզմի օգնությամբ կազմակերպում էին իրենց սպիտակ-գվարդիական բանակները, երբ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները ազգային կառավարություններ էին կազմակերպում Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում, 1918—1919 թվականներին հետևյալ բոլշևիկյան թերթերն են հրատարակվել։

1918 թվի հունվար 19-ից, Բաքվում լույս է տեսել «Բանվորի խոսք» շաբաթաթերթը։ Այդ թերթի բովանդակության մասին գաղափար է տալիս 1918 թ. հունվար 27-ի № 2-ի նյութերի հետևյալ ցանկը.

— Համաշխարհային հեղափոխությունը։ [Առաջնորդող]։

— Ամիրան։ Գանձակի դեպքերը և հայ նացիոնալիստների քաղաքականությունը։

— Մ. Գ. Կռվի մի չարամիտ եղանակ։ [Պրովոկացիա Վ. Ի. Լենինի և բոլշևիկների դեմ]։

— Ներհակ։ Մենք և դուք։ [Բոլշևիկների և հակառևոլյուցիոն լագերի մասին]։

— Կարինյան, Ա. Մանր ազգությունները և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան։

---

* Վ. Ի. Լենին. Երկեր. հա. 28, էջ 169

— Տերյան, Վ. Ի՞նչ է ասել Լենինը գյուղացիներին։ [3 համարում շարունակվել է]։

— Մարքս, Կ. Ի՞նչ պիտի դուրս գա Եվրոպական Թուրքիայից։ [Գերմ. թարգմ.]։

— Հեղափոխական շարժումը Ռուսաստանում։ [Ինֆորմացիա]։

— Հեղափոխական շարժումը Եվրոպայում։ [Ինֆորմացիա]։

— Բանվորական կյանք։ Ընդարձակ [ինֆորմացիա]։

1918 թվի փետրվարի 27-ից, Քիշինևում լույս է տեսել ՌՍԴԲԿ (բոլշևիկների) Կովկասյան երկրային և Քիշինևի կոմիտեների օրգան «Բանվոր» ամենօրյա լրագիրը։ Թերթի բովանդակության մասին գաղափար տալու նպատակով, ստորև դնում ենք՝ 1918 թ. մարտի 3-ի № 3-ի նյութերի ցանկը.

— Մենշևիկյան-ընկկական բլոկը քանդվում է։ [Առաջնորդող]։

— Բեչանյան, Հ. Փորձության ժամին։ [Իմպերիալիզմը և Հոկտեմբերը]։

— Հրահանգ գյուղացիական ռայոնական խորհուրդներին։ Խորհուրդների աշխարհից։ [Ինֆորմացիա]։

— Բանվորական կյանք։ [Կովկաս, արտասահման]։

— Գյուղացիական կյանք։ [Ագրարային շարժման ծավալումը]։

— Ժիրայր։ Հայ գյուղը և գաշնակցությունը։

1918 թ. ապրիլի 14-ից Քիշինևում հրատարակվել է «Կարմիր Դրոշակ» ամենօրյա լրագիրը։

Թերթի առաջին էջում, խոշոր տառերով տպված է. «Բանվորներ, զինվորներ և գյուղացիներ. Ռուսաստանի Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության ալիքները ծավալվում են Անդրկովկասում. Կարմիր Բաքուն տվել է աղդանշանը։ Հեղափոխության մութ ուժերը համախմբվել են այսօր և կատաղի կռիվ են մղում՝ կասեցնելու սոցիալիստական հեղափոխության հաղթական արշավը։ Ընկերնե՛ր. հակահեղափոխական այդ մութ ուժերին օգնության են գալիս բյուրգական ֆեոդալիզմի արյունարբու հորդաները. հասել է ժամը, Անդրկովկասի հեղափոխական դեմոկրատիան կուռ շարքերով պետք է ծառանա հարձակահարված և արյունաքամ ժողովուրդների բոլոր թշնամիների դեմ ու հաղթական կռվով խորտակի նրանց վերջին կայանները...»։

1918 թվի հունիսի 22-ին, Մոսկվայում լույս է տեսել «Կոմունիստ» շաբաթաթերթը։ «Կոմունիստ»-ը հանդիսանում էր օրգան Ազգերի Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի Հայկական Գործերի Կոմիսարիատի։ «Կոմունիստ»-ը սովետական առաջին շրջանի կենտրոնական թերթերից է։ «Կոմունիստ»-ում տպագրվում էին Սովետական կառավարության դեկրետները, որոշումները և պետական ակտերը։ Միաժամանակ տպագրվել են Վ. Ի. Լենինի հոդվածները, ճառերը, զեկուցումները և Ազգժողկոմատի որոշումները։ «Կոմունիստ»-ը վճռական պայքար է տարել Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար։ Նա մերկացնում էր հայ ժողովրդի անարգ թշնամիներին, դիմակազերծ էր անում գերմանա-թուրքական իմպերիալիզմի հայաջինջ քաղաքականությունը և Անտանտի պետությունների ստոր, դիվային մեքենայություններ։ «Կոմունիստ»-ը հետևողականորեն պայքար էր մղում՝ հայ ժողովրդի շահերը անգլո-ամերիկյան իմպերիալիստներին վաճառող դաշնակցության դեմ, մերկացնում էր անում գերմանա-թուրքական իմպերիալիզմի հայաջինջ քաղաքականությունը «Կոմունիստ»-ում տպագրվել է Հայկական Գործերի Կոմիսարիատի՝ ընդմիշտ հայ գյուղացիներին ու բանվորներին կոչը, որի հեղինակն էր Վ. Տերյանը։

Այդ նամակում ասված է. «Մենք միշտ քարոզել ենք և այժմ էլ անդադար պիտի քարոզենք, որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության հզորության մեջ է և ով դեմ է խորհուրդների իշխանությանը, նա դավաճան է, նա ժողովրդի թշնամի է և ահա մենք, հայ կոմունիստ բոլշևիկներս, կոչ ենք անում Ձեզ, հայ գյուղացիներ և հայ բանվորնե՛ր, միացե՛ք Ռուսաստանի խորհուրդների Կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական Ռուսաստանի Սոցիալիստական Կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր հեքյրաթական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված, մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին։ Միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության Կարմիր գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել աշխատավոր երկրին...»։

Որպեսզի գաղափար կազմվի «Կոմունիստ»-ի բովանդակության մասին, ներքևում դնում ենք նրա 1918 թ. դեկտեմբեր 7-ի, № 9-ի նյութերի ցանկը.

— Գերմանական հեղափոխությունը։ [Խմբագրական]։

— Կ. Անգլիական իմպերիալիզմը և Արևելքը։

— Արևյան, Ա. «Դաշնակցությունը» և ազգային խորհուրդները։

— Լազարյան ճեմարանի անցյալն ու ապագան։

— Գորկի, Մ. Դիմում ժողովրդին և աշխատավոր ինտելիգենցիային։

— Բաքվի անկումը։ [Հոդված]։

— Բանակցություններ Բաքվի շուրջը։ (Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատից)։

— Կովկաս։ [Ինֆորմացիա]։

— Հայկական Գործերի Կոմիսարիատում։ [Ինֆորմացիա հրատարակչական և մյուս աշխատանքների մասին]։

1919 թվի մայիսի 1-ին Մոսկվայում լույս է տևսել «Կարմիր դրոշակ» թերթը։ Այդ լրագիրը, զգալի աշխատանք է կատարել կոմունիստական ագիտացիայի ու պրոպագանդի ուղղությամբ, անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը՝ Անդրկովկասում և Հայաստանում մերկացնելու և հայ աշխատավորությանը Կոմունիստական պարտիայի ու սովետական իշխանության շուրջը համախմբելու համար։

1919 թվին, 11 համարից հետո, դադարել է այդ թերթը։

Այդ ժամանակաշրջանում կարևոր դեր է խաղացել նաև «Նոսք»-ը։

«Նոսք»-ը հրատարակվել է 1913—14 ապա 1918—19 թվականներին — Երևանում։ 1913—14 թվականների «Նոսք»-ը բոլշևիկյան բնույթ չունի, բայց կարևոր աղբյուր է Երևանի նահանգի այդ տարիների մամուլը և քաղաքական կյանքը ուսումնասիրողների համար։ 1918—19 թվականների «Նոսք»-ը բոլշևիկյան թերթ է եղել, նա խոշոր գործ է կատարել՝ մերկացնելով դաշնակների հակառևոլյուցիոն, հակաժողովրդական գործունեությունը, անգլո-ամերիկյան և մյուս իմպերիալիստական պետությունների գաղութարարական քաղաքականությունն Անդրկովկասում և Հայաստանում, պրոպագանդելով մարքսիզմ-լենինիզմի գաղափարները։

1919 թվի մայիսին, Երևանում, լույս է տևսել «Երիտասարդ սոցիալիստ — ինտերնացիոնալիստների «Սպարտակ» Միության օրգան «Սպարտակ»-ը։

«Սպարտակ» Միության ծրագրի նախաբանում, որ տպված է թերթի առաջին էջում, ասված է. «...Պրոլետարիատի շարժմանը օժանդակիչ դեր կարող է

կատարել նաև այն երիտասարդությունը, որ դուրս գալով պրոլետարիատի և կիսապրոլետարիատի ծոցից, պետք է մտնի նրա շարքերը։ Այդ երիտասարդությունը խտացնելով սոցիալիզմի և մարտական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, կկազմի այն հզոր ռեզերվը, որ պատրաստ կլինի անհրաժեշտ րոպեին լրացնելու պրոլետարիատի շարքերը, որ հաճախ նոսրանում է անհավասար կռվում։

Սոցիալիստ ինտերնացիոնալիստների «Ապարատակ» Միությունը պրոլետարիատի ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի նշանաբաններով, աշխատելու է ունենալ կարելի եղածի չափ գործոն մասնակցություն այն ազատարար պայքարի մեջ, որը ոչնչացնելով կապիտալիզմի բրոնզե ընթացքը, կտանի մարդկությունը դեպի սոցիալիստական հասարակարգը։ Որքան էլ որ թույլ լինի այս դժբախտ երկրում սոցիալիստական շարժումը, որքան էլ շարունակեն տոն տալ մեր հանրապետությունների ներքին կյանքին պիշատիչ իմպերիալիզմի նենգ ներկայացուցիչները, քող շարունակեն մեր քաղաքագետները մաշել իմպերիալիզմի խախուտ պալատների կեղտոտ շեմքերը, քող թագավորի այսուհետ ևս ռեակցիան, քող վերացնեն մենք մյուսի ետևից հեղափոխության նվաճումները, քող շղթայեն ազատ խոսքը,— մենք, մոտավոր ապագայի հաղթանակի հավատքով, հայացքներս սևեռած ծագող նոր արշալույսին, ինտերնացիոնալի այս մեծ, նվիրական տոնին, միացնում ենք մեր ձայնը միջազգային հեղափոխական պրոլետարիատի ձայնին՝ գոչելով՝ կեցցե սոցիալիստական հեղափոխու-

Ես, աշխատելով Երևանի կոմունիստական կազմակերպության շարքերում, անդրադ եմ «Ապարատակ» կոմունիստական երիտասարդական կազմակերպության գործունեությանը։ Գիտեմ, որ բացի վերը նշված «Ապարատակ» քերթից, այդ կազմակերպությունը հրատարակել է նաև մի շարք կոչեր՝ ուղղված Հայաստանի բանվորներին, չքավոր գյուղացիությանը և զինվորներին։

Ահա 1919 թվականին հրատարակված կոչերից մեկից մի քաղվածք.

«...Ընկեր բանվորներ, զինվորներ և չքավոր գյուղացիներ։ Ձեր վերջնական նպատակին հասնելու համար ամբողջ աշխարհի պրոլետարիատը կազմակերպվում է Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշակի տակ։ Կոմունիստական կուսակցությունն է նրա իսկական պաշտպանը։

Ահա թե ինչու, այսօր, երբ ձեր թշնամիները աշխատում են խաբել ձեզ ու ոգևորել «անկախությունների» և «պատվամենաների», մենք կոչ ենք անում ձեզ, խտացնել կոմունիստական շարքերը, խմբվել մեր կազմակերպության դրոշակի շուրջը, ձգտել դեպի Ռուսաստանն և հեղափոխական մարքսիզմի ու մարտական ինտերնացիոնալիզմի ճանապարհով հաղթանակորեն ընթանալ դեպի մեր լուսավոր ապագան, սոցիալիզմը։

Կոչը վերջանում է հետևյալ լոզունգներով.

«Կորչի իմպերիալիզմը։

«Կորչի պատերազմը։

«Կենցցե խորհրդային իշխանությունը։

«Կենցցե կոմունիզմը։

1919 թվականի օգոստոսին, Երևանի կոմունիստական երիտասարդական «Ապարատակ» կազմակերպության հրատարակած մի ուրիշ կոչի մեջ խոսորեն մերկացվում է անգլո-ամերիկյան իմպերիալիստների և փաստորեն նրանց գործակալները հանդիսացող՝ դաշնակցականների հակահեղափոխական, հակաժողովրդական քաղաքականությունը։

Ահա թե ինչ է գրում Բաքվում լույս տեսնող «Փարոշի պատա» բոլշևիկյան թերթը այդ կոչի ուժի և հետևանքների մասին. «Մոտ օրերս «Սպարտակ» խումբը բաց թողեց մի կոչ, որը խարազանում է անգլիացիների քաղաքականությունը, կոչ է անում տապալել «դաշնակիների» կառավարությունը և կազմակերպել բանվորա-գյուղացիական իշխանություն, որը և միայն ընդունակ է լուծելու ազգային հարցը և վերջ տալու ներկայումս տեղի ունեցող սպանդին։ Բաց թողնված կոչի համար, բոլոր քաղաքներում, կատարվել են ռևոլյուցիոն շարժման ղեկավարների ձերբակալություններ։ Երևանում ձերբակալվել է 30 մարդ, նրանց մեջ կան կանայք։ Ալեքսանդրապոլում գնդակահարված է վեց մարդ»*։

❊❊❊

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սովետական կարգերը Ռուսաստանում ամրապնդվում են, Կարմիր Բանակը ջախջախում է Դենիկինին և հաղթական երթով առաջանում է դեպի Անդրկովկաս։

Մասսայական հուզումները, բանվորական գործադուլները, գյուղացիական ելույթները Հայաստանում 1920 թվականի սկզբներից գնալով ծավալվում և սրվում են։

Ահա ռևոլյուցիոն շարժման վերելքի այս պայմաններում, Ալեքսանդրապոլում լույս են տեսնում «Ալիք» և Լոռի-Ուզունլարում՝ «Լոռվա գյուղացիության ձայնը» բոլշևիկյան լրագրերը։

«Ալիք»-ի № 1-ը լույս է տեսել 1920 թ. հունվարի 11-ին։ Լրագրի առաջին համարի առաջնորդողում կարդում ենք. «...Միջազգային իմպերիալիզմի ու հեղափոխական պրոլետարիատի միջև տեղի ունեցող քաղաքացիական կռիվը լայնանում է ու խորանում։— Այսօր, հեղափոխական ամանդարդ Խորհրդային Ռուսաստանը երկու և կես տարի համառ կռիվ մղելուց հետո բռնել է վերջնական հաղթանակի ուղին։ Միջազգային իմպերիալիզմը գալարվում է և իր վերջին ճիգերը թափում, օրհասական վախճանի րոպեն ուշացնելու համար իզուր»։

Այնուհետև առաջնորդողը գրում է Կոմունիստական պարտիայի ու Սովետական իշխանության նպատակների մասին. «...Ազատել մարդկությունը կապիտալիզմի կեղեքման ճիրաններից և նրան ազատագրել հանուն սոցիալիստական կուլտուրական ստեղծագործ աշխատանքի... Համոզված ենք, որ հեղափոխական Արևելքը, մյուս՝ իմպերիալիզմի կատաղի քշնամիների հետ կողք-կողքի հասցնելու է վերջնական հարվածը Անտանտային՝ Եվրոպական այն «Աերոպագինը», որից այնքան ակնածում են, մասնավորապես Հայաստանի ցավով ետանշվողները»։ Այդ կռիվն անխուսափելի է. հեղափոխության հաղթանակը ապահովված։ Այս անդրանիկ համարից հետո, դաշնակները փակում են «Ալիք» լրագիրը։

1920 թվականի հունվար 20-ից լույս է տեսել «Լոռվա գյուղացիության ձայնը» լրագիրը։ Այդ թերթի № 1-ի առաջնորդողում ասված է, որ Լոռվա ազգաստ ու չքավոր գյուղացիության ազատագրական կռվի արտահայտիչն է լինելու լրագիրը։ Այդ լրագրում ընդհանուր քաղաքական առաջնորդողների հետ միասին, հետաքրքիր հոդվածներ կան՝ «Ջեզդոք գոնայում» անգլո-ամերիկյան գործակալների մասին, Լոռվա գյուղացիության ծանր վիճակի, մենշևիկների ու դաշնակների հակաժողովրդական, հակահեղափոխական գործերի մասին։

* «Փարոշի պատա», 1919, № 4։

Այս համառոտ ակնարկով մենք փորձեցինք տալ նախահեղափոխական հայ բոլշևիկյան մամուլի պատկերը, անցած պայքարի ուղին։ Հայ պարբերական մամուլի պատմության մեջ մի նոր էտապ է սկսվում 1920 թ. նոյեմբեր 29-ից հետո, երբ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության դրոշը հաղթանակում է նաև Հայաստանում։ Այժմ մենք անցնում ենք սովետահայ պարբերական մամուլի համառոտագրի նկարագրությանը։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Կոմունիստական պարտիայի ազգային իմաստուն քաղաքականությունը բոլոր պայմաններն ստեղծել է բազմազգ Սովետական Միության ժողովուրդների տնտեսության և կուլտուրայի զարգացման համար։

Սովետական Միության Կոմունիստական Պարտիայի Կենտկոմի ղեկավարությամբ, ռուսական մեծ ժողովրդի բազմակողմանի օգնությամբ, հայ ժողովուրդը, պատմական կարճ ժամանակամիջոցում, հսկայական հաջողություններ է հասել, ստեղծելով իր ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։

Սոցիալիզմի հզոր պետության, ՍՍՌՄ-ի եղբայրական ընտանիքում, Հայաստանը դարձել է առաջավոր ինդուստրիայի և սոցիալիստական գյուղատնտեսության, ծաղկող գիտության ու կուլտուրայի երկիր։

Սովետական կարգերի հաստատման մոտ 35 տարում, Հայկական ՍՍՌ-ում տեղի է ունեցել իսկական կուլտուրական ռևոլյուցիա։ Գիտությունը, գրականությունը դարձել են ժողովրդի սեփականությունն։ Հայկական ՍՍՌ ծածկվել է միջնակարգ ու բարձրագույն դպրոցների խիտ ցանցով, գիտահետազոտական ինստիտուտներով, կուլտուրայի տներով, ակումբներով, գրադարաններով։

Հայ ժողովրդի պատմության մեջ աննախընթաց չափերով զարգացել է գրքի և պարբերական մամուլի հրատարակման գործը։ Գլխավորն այն է, որ լույս ընծայված գրքերը, ժուռնալները, լրագրերը իրենց գաղափարական բովանդակությամբ՝ ծառայում են ժողովրդին, նրա քաղաքական, կուլտուրական շահերին ու պահանջներին։

Բերում ենք մի քանի տվյալներ, որ ցույց են տալիս սովետահայ գրքի վերապրած զարգացումը և ապա կանցնենք պարբերական մամուլին։

1913	թվին	լույս	են տեսել	55	անուն գիրք	80 հազար ընդհանուր տիրաժով
1918—19	»	»		24	»	տիրաժները անհայտ է
1928	»	»		372	»	1 միլիոն 70 հազար տիրաժով
1932	»	»		672	»	2 միլիոն 782 հազար »
1937	»	»		610	»	4 միլիոն 377 հազար »
1950	»	»		805	»	4 միլիոն 900 հազար »
1953	»	»		850	»	6 միլիոն 271 հազար »

Սովետական Հայաստանում երեսուն և չորս տարվա ընթացքում (1920—1954) հրատարակվել է 16330 անուն գիրք, 88 միլիոն ընդհանուր տիրաժով։

Հրատարակված բազմահազար գրականության մեջ, առաջին տեղը բռնում են՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական բովանդակությամբ գրքերը։ Հասարակական-քաղաքական և տնտեսական գիտությունների գծով կատարված այդ հրատարակությունների մեջ էլ առաջնակարգ տեղը բռնում են՝ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի հրատարակությունները։ Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի աշխատություններից սովետական մարդիկ քաղում են

իրենց ստեղծագործ աշխատանքի ուղին լուսավորող հանճարեղ ցուցումներ, համոզվում կոմունիզմի հաղթանակի նկատմամբ։ Ընկեր Ա. Ա. Ժդանովն իրավամբ ասել է. «Երբ կարդում ու նորից կարդում ես մեր առաջնորդների աշխատությունները, նրանց երկերը և ճառերը, ապա մեր պրակտիկայի լույսի տակ, այս ու այն կողմը, այս ու այն ցուցումը կամ դրույթը, այս կամ այն թեզը ստանում է միշտ նոր ու նոր նշանակություն։ Ինչպես երկրաբանը չի կարող ապառաժ մեր երկրի ընդերքում նշած բոլոր գանձերը, այնպես էլ մենք յուրաքանչյուր անգամ մտքի նորանոր հարստություններ ենք գտնում մեր մեծ ուսուցիչների աշխատություններում»։

Բերում ենք մի քանի տվյալներ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի հրատարակությունների մասին։ 1920—1954 թթ. Կ. Մարքսի երկերից հրատարակվել է՝ 27 անուն գիրք, 178 հազար տիրաժով, Ֆ. Էնգելսից՝ 42 անուն, 253 հազար տիրաժով, Վ. Ի. Լենինի երկերից՝ 245 անուն, 1 միլիոն 326 հազար տիրաժով, Ի. Վ. Ստալինի երկերից՝ 246 անուն, 3 միլիոն 750 հազար տիրաժով։

Նրեսնչորս տարվա ընթացքում, ընդամենը հրատարակվել և վերահրատարակվել է մարքսիզմի կլասիկների 581 անուն գիրք, 5 միլիոն 740 հազար ընդհանուր տիրաժով։

Մարքսիզմի կլասիկների երկերից բացի, Հայկական ՍՍՌ-ում, տարբեր տարի հրատարակվել են մեծաքանակ տիրաժներով՝ գիտական և տեխնիկական, գյուղատնտեսական, ուսումնական, գեղարվեստական և մանկական գրականություն։

Կոմունիստական պարտիայի գաղափարական դինամոցում գիտական պրոպագանդան շատ կարևոր տեղ է գրավում։ 1928—32 թվերին հրատարակվել է 111 անուն գիրք, 488 հազար տիրաժով. 1933—37 թվերին՝ 231 անուն գիրք, 2 միլիոն 725 հազար տիրաժով, 1938—48 թվերին՝ 441 անուն գիրք, 4 միլիոն 973 հազար տիրաժով։

Միանգամայն նոր է Հայաստանի համար տեխնիկական գրականության հրատարակումը։ Մինչև սովետական կարգերի հաստատումը ոչինչ չի եղել։ Հայաստանը դառնալով զարգացած արդյունաբերություն և կոլխոզային առաջավոր գյուղատնտեսության երկիր, պարզ է, որ իր ընդհանուր կուլտուրական առաջընթացի հետ, պիտի հրատարակեր նաև տեխնիկական գրականություն։ Վերջընթաց քսան տարվա ընթացքում հրատարակվել է 308 անուն գիրք, 524 հազար ընդհանուր տիրաժով։

Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսության խոշոր հաջողությունների գործում իր դերն է ունեցել նաև գյուղատնտեսական, ագրոտեխնիկական գրականության հրատարակումը և մասսայականացումը։ 1928—32 թվերին հրատարակվել է 177 անուն գիրք, 522 հազար տիրաժով, 1933—37 թվերին՝ 373 անուն գիրք, 658 հազար տիրաժով, 1938—48 թվերին՝ 415 անուն գիրք, 908 հազար տիրաժով։ Ընդամենը վերջընթաց քսան տարում 965 անուն գիրք, 2 միլիոն 108 հազար տիրաժով։ Հարյուր-հազարավոր օրինակներով Սովետական Հայաստանի գյուղին տրված այս գրականությունը գիտական-հանրամատչելի բովանդակություն ունի և մեր կոլխոզային լայն մասսաներին օգնում է տնտեսական-արտադրական աշխատանքում։ Այնքան հարուստ և բազմակողմանի է Հայկական ՍՍՌ-ի գյուղատնտեսական գրականությունը, որ ընթերցող լայն

մասսաներին օգնելու համար, մենք կազմել և հրատարակել ենք ընդարձակ բիբլիոգրաֆիա *։

Մեր ընթերցող մասսաները բարձր են գնահատում սովետական գեղարվեստական գրականության գաղափարական ուժը։ «Հերոսական գործը պահանջում է հերոսական խոսք... որի մեջ իր ամբողջ հնարավոր ուժով արտացոլվի նոր հասարակության կառուցողը, բանվոր դասակարգի հերոսությամբ լի փառքը» (Մ. Գորկի)։

Ռուսական սովետական գրականությունը ներծծել է ռուս կլասիկ գրականության լավագույն տրադիցիաները՝ բացավառ հայրենասիրությունը, ազատատենչ ոգին, դեմոկրատիզմը, մարդասիրությունը, որոնք առավելապես զարգացվել և նոր որակ են դարձել։

Այսօր հայ ընթերցողը մեծ սիրով է կարդում ռուս կլասիկների գործերից թարգմանված՝ Ա. Ս. Պուշկինի, Ն. Վ. Գոգոլի, Ի. Ա. Գոնչարովի, Ա. Մ. Գորկու, Ա. Ս. Գրիբոեդովի, Ի. Ա. Կռիլովի, Մ. Յու. Լերմոնտովի, Վ. Վ. Մայակովսկու, Ն. Ա. Նեկրասովի, Լ. Ն. Տոլստոյի, Ա. Ն. Օստրովսկու, Մ. Սալտիկով-Շչեդրինի, Ա. Պ. Չեխովի և մյուսների գործերը։

Բազմահազար տիրաժներով տպագրվել են նաև հայ կլասիկների առեղծագործությունները. այսպես՝ Ե. Աբովյանի—Ընտիր երկերը 3 հատորով, Երկերի լիակատար ժողովածուն 5 հատորով, Ղ. Ալշայանի — Երկեր 4 հատորով, Հովհ. Թումանյանի — Երկերի ժողովածուն 5 հատորով, Հովհ. Հովհաննիսյանի — Բանաստեղծությունները, Մ.Թ. Նալբանդյանի—Երկերի լիակատար ժողովածուն 4 հատորով, Նար-Դոսի — Երկերի լիակատար ժողովածուն 8 հատորով, Երիվանդազնի — Երկերի լիակատար ժողովածուն 8 հատորով, Հակոբ Պարոնյանի—Երկերի լիակատար ժողովածուն 11 հատորով, Հակոբ Հակոբյանի—Բանաստեղծությունները, Ավ. Իսահակյանի—Երկերի ժողովածուն 4 հատորով։ Շնորհիվ տարեցտարի կատարվող բազմաթիվ հրատարակությունների, այսօր հայ ընթերցողը լիապես հնարավորություն ունի կարդալու ռուսական և եղբայրական ժողովուրդների, սովետական հեղինակների, ստալինյան լաուրեատների գործերը։

Հարուստ և բեղմնավոր է նաև հայ գեղարվեստական գրականությունը։ Սովետահայ հեղինակների երկերը հազարավոր տիրաժներով տպագրվում և տարածվում են։ 1928—32 թ.թ. հրատարակվել են 405 անուն գիրք, մեկ միլիոն 269 հազար օրինակ, 1933—37 թվերին՝ 539 անուն գիրք, երկու միլիոն 458 հազար օրինակ, 1938—1948 թվերին՝ 1176 անուն, չորս միլիոն 827 հազար օրինակով։

Սովետահայ գեղարվեստական գրականության մեջ իր արժանի տեղն ունի նաև մանկական գրականությունը։ Միայն 1928—48 թվերին (20 տարում), Հայկական ՍՍՌ-ում հրատարակվել է 665 անուն մանկական գիրք, երեք միլիոն 20 հազար ընդհանուր տիրաժով։

Հայկական ՍՍՌ-ի հազարից ավել (1200) տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցներում սովորող աշակերտության, ռեսպուբլիկայի բազմաթիվ տեխնիկումների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողության դասագրքերով ապահովելու համար, հրատարակվել են նույնպես բազմահազար տիրաժներով (20. 30. 50. 100 հազար) զանազան դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ։

* Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գրականության բիբլիոգրաֆիա։ Երևան, Կուլտուրա-հրատ, 1950, 536 էջ։

Սովետահայ գրքի մասին, որ կազմում է մեր մամուլի մի կարևոր մասը, այս համառոտ ակնարկից հետո, անցնում ենք մեր պարբերական մամուլի անցած ուղու քննությանը։

Ներկա ներածության հենց սկզբից երևում է, որ բոլշևիկյան մամուլի պատմությունը անխզելիորեն կապված է մեր պարտիայի պատմության հետ։

Քաղաքացիական կռիվների տարիներին բոլշևիկյան մամուլը մեր պարտիայի ղեկավարությամբ՝ պրոլետարիատին և աշխատավոր լայն մասսաներին մոբիլիզացիայի ենթարկեց՝ իմպերիալիստական ոհմակի դեմ, ներքին հակահեղափոխությունն ուժերը չախչախելու, սովի ու փլուզման դեմ պայքարելու։

ՌԿ(բ)Կ տասնմեկերորդ համագումարը (1922 թ.) «Մամուլի և պրոպագանդայի մասին» իր որոշման մեջ ընդգծել է սովետական մամուլի դերը, արձանագրելով, որ «...Մասսաների վրա պարտիայի ազդեցության, նրանց կոմունիստական լուսավորության և կազմակերպման գործում շատ մեծ է սովետական մամուլի դերը»։

Մեր պարտիայի XII համագումարում Ի. Վ. Ստալինը Կենտկոմի հաշվետվության մեջ նորից շեշտել է մամուլի կարևոր դերը, ասելով. «Մամուլը պետք է աճի ոչ թե օրերով, այլ ժամ առ ժամ. դա մեր պարտիայի ամենաուժեղ և ամենաուժեղ զենքն է»։ Պարտիայի XII համագումարը (1922 թ.) իր որոշումների մեջ նշել է. «Մամուլը հանդիսանում է ագիտացիայի ու պրոպագանդայի կարևորագույն գործիքներից մեկը, միաժամանակ, պարտիայի ու բանվոր դասակարգի միջև հաղորդիչ ապարատի դեր է խաղում»*։ Համագումարը միաժամանակ որոշեց. «Ընթերցողների յուրաքանչյուր առանձին շերտի համար, անհրաժեշտ է ստեղծել լրագրի առանձին տիպ։ Ունենալով լրագրերի մի ամբողջ սիստեմ, պարտիան պետք է ավելի ճիշտ բաշխի նրանց գործունեության սահմանները, որպեսզի յուրաքանչյուր լրագիր առավելապես կողմնորոշվի ընթերցողների մասսայի որոշակի շերտի ուղղությամբ»**։

Լայն մասսաների հետ պարտիայի կապը ամրապնդելու և մեր մամուլի ուժեղացման նպատակով պարտիայի XII համագումարը և հետագա համագումարները մի շարք որոշումներ ունեն սովետական հրապարակախոսության նորանոր գնդերի, բանվորական և գյուղացիական թղթակիցների շարժմանը օգնելու, նրանց լայնորեն երկրի քաղաքական-հասարակական կյանքին ներգրավելու և քաղաքական դաստիարակություն տալու վերաբերյալ։

Նախապատերազմական խաղաղ շինարարության տարիներին, մեր սովետական մամուլը, ոգեշնչում, կազմակերպում էր մասսաներին՝ կենսագործելու մեր մեծ Հայրենիքի ինդուստրալիզացիայի, գյուղատնտեսության կոլեկտիվիզացիայի մեծ գաղափարները։

Սովետական մամուլը լայնորեն պրոպագանդել է լենինյան-ստալինյան ուսմունքը սոցիալիզմի հաղթանակի մասին մեկ երկրում, վճռական պայքար է մղել տրոցկիստական-ռիկովական հակահեղափոխության և ժողովրդի այլ թշնամիների դեմ, ոգեշնչել է միլիոնավոր մասսաներին սոցիալիզմի շինարարության լուսաշող ապագայով։ Կենտրոնական, հանրապետական և շրջանական թերթերը երկար տարիներից ի վեր լուսաբանում են մեր սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերը ամրապնդելու, կուտակումները ավելացնելու, կապիտալ շինարարության ներդրումները աճեցնելու, հզոր ինդուստրիալ ձեռ-

* ВКП(б) в резолюциях, ч. I, 6 изд. 1941, стр. 509.

** Նույն տեղում, էջ 509—510։

նարկությունների, գյուղատնտեսության մեխանիզացիայի բազմաթիվ և բազմատեսակ կոնկրետ հարցեր։

Սովետական մամուլը հետաքրքրական պայքար է մղում քննադատությունը և ինքնաքննադատությունը երկրում ծավալելու, այդ հզոր զենքի միջոցով, վերհանելու անտեսական, սովետական, կուլտուրական և բոլոր աշխատանքների թերությունները և վերացնելու այն։

Հոշոր դեր խաղաց սովետական մամուլը հիտլերյան Գերմանիայի և իմպերիալիստական Ճապոնիայի դեմ մղված Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։ Կրակի առաջին գծում կարմիր բանակային թերթերը սովետական մարտիկներին ոգևորում էին ջերմ հայրենասիրությամբ։

«Ամեն ինչ ռազմաճակատին, ամեն ինչ հաղթանակի համար»—այս մարտական նշանաբանն էր հիմնականը սովետական մամուլի աշխատանքներում Հայրենական պատերազմի տարիներին։ Թիկունքում մեր մամուլը ժողովրդի մեջ բացատրում էր՝ անձնվեր, հերոսական աշխատանքի ոգին, դնպի թշնամին ունեցած անսահման ատելությունը։

Հայրենական պատերազմի տարիներին, կենտրոնական և ռազմական մամուլում մեծ աշխատանք կատարեցին մեր սովետական գրողները։ Գտնվելով գործող բանակում, կրակի առաջավոր գծում, մեր սովետական գրողները գրում էին սովետական մարդկանց հերոսության մասին, մերկացնում էին ֆաշիզմի գազանությունները, նորանոր սխրագործությունների էին կոչում մեր հերոս ժողովրդին, լրագրերի միջոցով ռազմաճակատի և թիկունքի միջև հայրենասիրական կապ էր պահպանվում։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտումից հետո մեր սովետական մամուլը, այդ թվում նաև սովետահայ մամուլը, պարտիայի ղեկավարությամբ, մոբիլիզացիայի է ենթարկում ժողովրդական լայն մասսաներին՝ ժամկետից շուտ կատարելու հետպատերազմյան հնգամյակը։

Բոլշևիկյան մամուլը նոր տիպի մամուլ է, նա ծառայում է ժողովրդի շահերին։ Մեր սովետական մամուլը, ամեն օր, միլիոնավոր օրինակներով մասսայականացնում է Կոմունիստական պարտիայի և Սովետական Կառավարության ձեռնարկումները՝ կոմունիզմի հաղթական կառուցման բոլոր բնագավառներում։ Թե միութենական և թե Հայկական ՍՍՌ-ի թերթերը, ժուռնալները պարբերաբար լուսաբանում են մեր՝ հասարակական-քաղաքական կյանքի, կուլտուրայի, գիտության հիմնական հարցերը, մեր նվաճումները, մեր լուսաշող ապագան։

Միայն մեր կոմունիստական մամուլին է հատուկ բարձր գաղափարականությունը, սկզբունքայնությունը, հեղհեղուկությունը, ժողովրդին նվիրվածությունը։

Մեր մամուլի հզորությունը, ուժը՝ ժողովրդի հետ ունեցած սերտ կապի մեջ է, լայն մասսաների պահանջներին ու կարիքներին ունկնդրելու և արձագանքելու մեջ է։ Դրա համար էլ անընդհատ աճում է մեր մամուլը։

Այժմ Սովետական Միությունում կա 7700-ից ավելի լրագիր և 1400 ժուռնալ։ Հայկական ՍՍՌ-ում կա 8 հանրապուբլիկական, 2 քաղաքային, 33 շրջանային, 9 ֆաբրիկա-գործարանային թերթեր և 33 ժուռնալներ, գիտական, հասարակական-քաղաքական տեղեկագրեր, բյուլետեններ և այլն։

Սովետական Միությունում մամուլը ազատ է, մամուլը ժողովրդի մըտքերի ու ձգտումների ազատ արտահայտիչն է։ Կապիտալիստական աշխարհում,

ընդհակառակը, մամուլը ստի և զրպարտության, մարդատյացության և նոր պատերազմի նախապատրաստման գործիք է։

Կոմունիստական պարտիայի հոգատարությամբ ահռելի սովետահայ մամուլի զարգացումը ցույց տալու համար բերում ենք թվական տվյալներ։

Լրագրերի հրատարակումը Հայկական ՍՍՌ-ում (1920—1954)

Տարիներ	Անուն	Համարների հանգիսը	Միանվագ տիրաժ (հազ. օր.)	Տարեկան տիրաժ (հազ. օր.)
1920	1	—	—	Տվյալներ չկան
1923	9	917	40	6337
1933	40	3623	213	Տվյալներ չկան
1938	47	4935	242	41272
1948	54	3937	15990	27671
1953	54	5227	25035	48427

Այս թվերը պարզում են, որ առաջին հնգամյակի տարիներին սովետահայ լրագրերի թիվը և տիրաժները չորս անգամից ավել աճել էին։ Երկրորդ հնգամյակում աճումը շարունակվել է. 40 անուն թերթերը դառել են 47 անուն, 3623 համարի փոխարեն լույս է տեսել 4935 համար։ Հետագա տասնամյակում, 1938—1948 թ. թ. չնայած Հայրենական պատերազմի ծանր պայմաններին, լրագրերի անունների թիվը չի իջել, միայն տիրաժներն են ցածր՝ թղթի և այլ պատճառներով։ 1953 թվին լրագրերի տիրաժները՝ միանվագ տիրաժները և տարեկան տիրաժները մեծ չափերով անցել են նախապատերազմականից։

Լրագրերը ըստ տիպերի

1927	5	658	23.5	Տվյալներ չկան
Հանրապետական	3	506	22 3	» »
Շաբաթական	2	152	4.2	» »
1933	40	3623	Տվյալներ չկան	21 296
Հանրապետական	12	1657	» »	16.700
Քաղաքային և շաբաթական	16	1338	» »	4.231
Մասրին	12	508	» »	365
1938	47	4935	242	41.272
Հանրապետական	12	1775	151	34,380
Քաղաքային և շաբաթական	29	2344	5	6.557
Մասրին	6	316	6	355
1948	54	3937	159.90	27 517
Հանրապետական	9	1182	111.43	24.076
Քաղաքային	2	520	5.0	1 2.2
Շաբաթական	38	2.557	40.16	2 0.3
Մասրին և ժամանակավոր	5	178	3,5	120.0
1953	54	5227	250.65	48.427
Հանրապետական	8	1302	171.4	30.553
Օկրուգային	2*	156	20.0	1.560
Քաղաքային	2	238	10.0	1.180
Շաբաթական	33	3034	38.55	3,620 2
Մասրին	9	407	10,7	4 2 6

Այս թվերը պարզում են հետևյալը. 1) որ երկրորդ հնգամյակի ընթացքում է, որ Հայկական ՍՍՌ շրջանները ունենում են իրենց լրագրերը և որ 1939—40 թվականներից արդեն ոչ մի շրջան չկա, որ չունենա իր թերթը։ 2) Հետագա տասնամյակում (1938—1948 թ.թ.) և ներկայումս (1954 թիվ) թե շրջանային և թե հանրապետական ու մյուս թերթերի տիրաժները աճել են։

* Օկրուգային թերթերը ժամանակ փակվել են՝ օկրուգների վերացման հետևանքով։

Անհրաժեշտ ենք համարում ցույց տալ Սովետական Հայաստանի թերթերի պատկերը նաև ըստ լեզուների։

Տարիներ	Անուն	Համարների քանակը	Միանվագ տիրաժը (հազար օր.)	Տարեկան տիրաժը (հազար օր.)
1928	9	917	40,8	Տվյալներ չկան
Հայերեն	8	834	39,6	» »
Ազգային փոքրամասնությունների	1	83	0,2	» »
1933	40	3823	213	» »
Հայերեն	35	3142	208	» »
Ազգային փոքրամասնությունների	4	422	4,4	» »
Ռուսերեն	1	59	0,6	» »
1938	47	4935	242	41272
Հայերեն	39	4005	206	33224
Ռուսերեն	3	429	23	5939
Ազգային փոքրամասնությունների	4	491	9	2101
Ռուսերեն	1	10	1	8
1948	54	3940	159,90	29,057
Հայերեն	44	2757	120.0	18,400
Ռուսերեն	4	676	34.0	8,600
Ազգային փոքրամասնությունների	6	507	5,90	2 57
1958	54	5227	250,65	46,4275
Հայերեն	48	4347	214.7	36,6ծ4,1
Ռուսերեն	3	504	30,85	8,661,7
Ազգային փոքրամասնությունների	3	376	5.1	1,071,7

Հայկական ՍՍՌ-ի ժուռնալները

Հայկական ՍՍՌ-ում, բացի գրքից, լրագրերից, հրատարակվում են՝ հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ ժուռնալներ։ Մեր Գիտությունների ակադեմիան իր բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներով հրատարակում է՝ «Գիտական աշխատություններ», «Տեղեկագրեր», «Բյուլետեններ» և այլն, որոնք պարբերաբար լույս են տեսնում և, ըստ միութենական մարմինների որոշման, մտնում են պարբերական մամուլի մեջ։

Գիտության և տեխնիկայի զարգացմանը համընթաց Հայկական ՍՍՌ-ում տարեցտարի ընդլայնվում է նույնպես հասարակագիտական և բնագիտական՝ էկոնոմիկային, կուլտուրային նվիրված և գիտահետազոտական բազմաթիվ հիմնարկների կողմից պլանավորված գիտական աշխատությունները ամփոփող բազմաթիվ տեղեկագրերի, պարբերական ժողովածուների ցանկը։

Մեր աշխատության վերջում մենք տվել ենք Հայկական ՍՍՌ-ի ժուռնալների լրիվ ցանկը, ներկա բիբլիոգրաֆիայի մեջ մենք տվել ենք, ըստ գիտության առանձին ճյուղերի, մեր ժուռնալային գրականության լրիվ բիբլիոգրաֆիան, որը լայնորեն կարող է օգտագործվել տարբեր մասնագիտությունների՝ դասախոսների, ուսանողության և ընթերցողների կողմից։

Ինչպես գիրքը, լրագիրը, նույնպես և ժուռնալները, գիտահետազոտական

ինստիտուտների կողմից հրատարակվող աշխատությունները և բյուլետենները զարգացման մեծ ուժգին են ունեցել։ Ներում ենք մի քանի թվական տվյալներ։

Հայկական ՍՍՌ ժուռնալները

Տարիներ	Անուն	Համարների քանակը	Տիրաժը (հազարներով)	Ծախսը (հազարներով)
1913	2	Տվյալներ չկան	Տվյալներ չկան	Տվյալներ չկան
1918	1	» »	» »	» »
1921	2	» »	» »	» »
1923	22	120	118	309
1937	21	123	365	1,122
1948	33	148	435	1 607
1953	30	183	523,5	Տվյալներ չկան

Որպեսզի գաղափար տրվի, թե ինչ բովանդակություն են ունեցել և ի՞նչ բնույթի ժուռնալներ են հրատարակվում ռեսպուբլիկայում, մենք կատարել ենք որոշ խմբավորումներ և ներքևում բերում ենք տվյալները։

Հայկական ՍՍՌ-ի ժուռնալների թեմատիկան

Թեմատիկ բաժնում	Տարիներ	Անուն	Համարների քանակը	Տիրաժը (հազարներով)	Ծախսը (հազարներով)
1. Բազմաբնական և սոցիալական	1932	8	55	143	232
	1937	9	65	244	757
	1948	6	64	340	700
	1950	7	66	420	—
2. Բնագիտության, մաթեմատիկայի և աշխարհագրության հարցերի մասին	1937	1	1	1	10
	1948	8	18	16	114
	1950	9	26	9,0	—
3. Ինդուստրիալ-տնտեսական	1932	2	23	15	30
	1937	3	18	5	23
	1948	—	—	—	—
	1950	3	15	8,5	—
4. Գյուղատնտեսական	1932	1	1	1	5
	1937	1	1	1	8
	1948	6	7	5	70
	1950	6	20	16	—
5. Առողջապահության և բժշկության հարցերի մասին	1932	1	4	4	6
	1948	3	3	2	57
	1950	3	3	2,3	—
6. Մանկավարժության և դիաության հարցերի մասին	1932	4	24	21	55
	1937	3	14	72	154
	1948	3	14	14	66
	1950	4	17	8,0	—
7. Արվեստի հարց. մասին	1937	1	8	13	61
	1948	—	—	—	—
	1950	1	12	23,0	—
8. Գրականագիտության, գեղարվեստ. գրական-ության	1932	3	43	21	161
	1938	4	32	85	365
	1948	2	23	46	377
	1950	4	26	89,4	—

Անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել ներկա բիբլիոգրաֆիայի նպատակների և կազմելու հետ կապված մի քանի մեթոդական հարցերի վրա։

Մեր աշխատության ներկա հատորը, ինչպես վերնագիրն է ցույց տալիս, ընդգրկում է՝ 1. Հայ բոլշևիկյան մամուլի (1902—1920 թ.թ.) և 2. Սովետահայ մամուլը 1920—1954 թ. թ.

Այս հիսունից ավելի տարիների ընթացքում, բոլշևիկյան մամուլը հայ ժողովրդի պատմության մեջ մի բացառիկ կարևոր տեղ է գրավում։

Նախասովետական շրջանի հայ բոլշևիկյան մամուլը արտացոլում է ցարիզմի դաժան իրականությունը, առաջավոր, ռևոլյուցիոն պրոլետարիատի և աշխատավորության կյանքն ու կռիվը՝ կապիտալիզմի, ինքնակալության և բուրժուական-նացիոնալիստական պարտիաների դեմ։

Ինչպես ամբողջ բոլշևիկյան մամուլը, նույնպես և հայերեն հրատարակվող բոլշևիկյան թերթերը, մեծ դեր են խաղացել՝ հայ աշխատավոր մասսաների քաղաքական արթնացման ու դաստիարակման գործում, ամրապնդել են նրանց դասակարգային ինքնագիտակցությունը, բարձրացրել են նրանց ռևոլյուցիոն ակտիվությունը, համախմբել և կազմակերպել են մեր պարտիայի դրոշակի տակ, հանդիսացել են ամբիոն, որտեղից բարձր հնչել է մեր պարտիայի կոչերը, մարքսիստական-լենինյան հրապարակախոսության ձայնը։

Ներկա բիբլիոգրաֆիայի նպատակն է՝ ցույց տալ նախառևոլյուցիոն բոլշևիկյան և սովետահայ պարբերական մամուլի զարգացումը, հարստությունը, նրա հերոսական վերելքը 50 տարում։

Բացի տեղեկատու-բիբլիոգրաֆիական ձեռնարկ, մեր աշխատությունը նպատակ ունի՝ սպասարկել մեր գրադարաններին, օգնել մեր ինտելիգենցիայի լայն խավերին՝ գիտական աշխատողներին, մասնագետներին, ուսուցչությանը, ուսանողությանը, մամուլի աշխատողներին, օգտվել մեր պարբերական մամուլից՝ իրենց գիտահետազոտական, ուսումնասիրական աշխատանքներում։

Սովետական ամեն մի բիբլիոգրաֆիական աշխատություն պահանջվում է՝ գիտականություն, բոլշևիկյան պարտիականություն և լրիվություն։

Գիտականությունն ապահովելու համար մենք բոլոր հնարավոր միջոցներով աշխատել ենք՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Մոսկվայի խոշոր գրադարաններից ստանալ և ուսումնասիրել, անմիջական աղբյուրից (դե վիզու), նկարագրել բոլոր թերթերը և ժուռնալները։ Մենք օգտագործել ենք՝ Մարքսի — Էնգելսի — Լենինի — Ստալինի ինստիտուտի Հայկական, Վրացական և Ադրբեջանական ֆիլիալների մամուլի ֆոնդերը, որպեսզի նախառևոլյուցիոն բոլշևիկյան հրատարակությունները բազմակողմանի և լրիվ լինեն, ուսումնասիրել և ինչպես բիբլիոգրաֆիան է ցույց տալիս՝ տվել ենք ընդարձակ անոտացիաներ, ծանոթագրություններ։

Սովետական ժամանակաշրջանի լրագրերը, ժուռնալների նյութերը մշակելիս նույնպես քիչ ենք օգտվել երկրորդական աղբյուրներից, Գեներալապալատի տարեգրքերից, որովհետև նախ ռևրագրային ու ժուռնալային հոդվածների տարեգրեր չեն հրատարակվել 1920—1949 թվականներին (մեկ-երկու տարի եղել է ընդմիջումներով), երկրորդ մեր կազմած բիբլիոգրաֆիան ուրիշ մեթոդով է

կատարված, ավելի հեշտ և նպատակահարմար է օգտագործել անմիջական աղբյուրը՝ լրագիրը և ժուռնալը։

Նյութի խիստ ընտրության հետ միասին, մենք հաշվի առնելով ժամանակը և պայմանները հանվող նյութերը չենք նկարագրել, որոշ նյութեր էլ տվել ենք համապատասխան ժանրությունների։

Նախահոկտեմբերյան շրջանի բոլշևիկյան մամուլի նյութերից շատ քիչ է հանված, ի նկատի ունենալով, որ ընդհանրապես նման հրատարակությունների լրիվ տեքստերը հրատարակվում են և հնարավորություն է տրվում գիտականորեն ուսումնասիրել այդ նյութերը *։

Ներկա բիբլիոգրաֆիայի լրիվությունն ապահովելու համար մենք հետևյալն ենք կատարել՝

1. Նախահոկտեմբերյան բոլշևիկյան մամուլի Հայաստանում եղած օրինակները օգտագործելու հետ միասին, որոշ նյութեր ենք ստացել Մոսկվայից, Լենինգրադյան հանրապետական գրադարաններից և նույնիսկ առանձին անհատներից։ Բայց, այնուամենայնիվ, որոշ թերթերի մի քանի համարներ պակաս են։ 2. Սովետական ժամանակաշրջանի լրագրերը, ժուռնալները, համարյա թե լրիվ, եղել են մեր Պետգրադարանում։ Ղեկավարվելով սովետական բիբլիոգրաֆիայի ներկայումս գործող մեթոդական հրահանգներով, մենք այս բիբլիոգրաֆիայի մեջ մտցրել ենք, ոչ միայն հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական ժուռնալները, այլև Հայկական ՍՌՄ-ում լույս տեսած բոլոր պարբերականները, գիտական-ուսումնական հիմնարկների հրատարակած՝ «Գիտական աշխատություններ»-ը, «Զեկուցումներ»-ը, «Տեղեկագրեր»-ը, «Տարեգրքեր»-ը, գիտատեխնիկական «Բյուլետեններ»-ները և այլն։ Իսկ այս ամբողջ արժեքավոր պարբերականները տեղ չեն գտել, համեմատաբար ավելի հաջող կազմված, Գ. Լևոնյանի բիբլիոգրաֆիայում։

Բայց չի նշանակում, թե մեր բիբլիոգրաֆիայում ամեն ինչ տվել ենք։ Այժմեականությունը կորցրած, անկարևոր և հնացած որոշ նյութեր հանվել են, չեն մշակվել։

Բիբլիոգրաֆիայում նյութերը հետևյալ կերպ են դասավորվել՝

1. Նախահոկտեմբերյան շրջանի բոլշևիկյան մամուլը — ժամանակագրական կարգով։ 2. Սովետական շրջանի լրագրերը — նույնպես ժամանակագրական կարգով։ Սովետական շրջանի ժուռնալները և մյուս պարբերականները — ըստ բովանդակության։ Ժուռնալների թեմատիկ դասավորումն էլ մեր հնարածը չէ, այլ ներկայումս ամբողջ Սովետական Միությունում պետգրադարանների կողմից կիրառվող կլասիֆիկացիան ենք հիմք ընդունել։

---

* Որպեսզի հնարավորություն տրվի լրիվ կերպով ուսումնասիրել բոլշևիկյան մամուլը, հրատարակված են՝

„Искра". № 1—52 Декабрь 1900-ноябрь 1903 Полный текст под ред. и с предисл. П. Лепешинского и со вступитель. статей Н. Крупской. Ленинград 1924. Вып. 1—8.

„Вперёд" и „Пролетарий". Первые большевистские газеты 905 года. Полный текст под ред. Истпарта и со вступитель. статей М. Ольминского. М.—Л. Госиздат. 1924—1925. Вып. 1—6.

„Звезда". № 1—96. 1910—1912 гг. Полный текст под ред. М. А. Савельева. М. Партиздат, 1934. Вып. 1—8.

„Правда" № 1—224 1912 – 914гг. Полный текст под общ. редакцией М. С. Ольминского. М. А. Савельева. М. Партиздат. 1933 (Институт Маркса—Энгельса Ленина при ЦК ВКП(б) 23 выпусков. Տպագրված են նաև՝ „Рабочая Правда"-ի, „Северная Правда"-ի, „Правда Труда"-ի, „За Правду"-ի, Пролетарская Правда"-ի, "Путь Правды"-ի, „Рабочий"-ի և „Трудовая Правда"-ի նյութերը։

կարող է հարց առաջանալ, ինչո՞ւ միասնական մեթոդով, կամ ժամանակագրական և կամ թեմատիկ սկզբունքով չեն դասավորվել նյութերը, այլ կիրառվել է թե ժամանակագրական և թե ըստ բովանդակության դասավորման կարգը։

Մենք աշխատել ենք նշնել ընթերցողների, բիբլիոգրաֆիան օգտագործողների շահերից։ Նախասովետական շրջանի բոլշևիկյան հայ լրագրերը մենք դասավորել ենք ժամանակագրական կարգով, որևէ պահանջ չի կարող լինել՝ թե լրագրերը պիտի խմբավորեին։ Սովետական ժամանակաշրջանի լրագրերի բիբլիոգրաֆիկ նկարագրությունը նույնպես կատարված է ըստ տարիների՝ ժամանակագրական կարգով, այլընտրական կամ թեմատիկ դասավորումը կդժվարացներ նյութերի գտնելը։

Իսկ 1920—1954 թվականների ամբողջ ժուռնալները դասավորված են թեմատիկ կարգով, ըստ բովանդակության, որովհետև — եթե չխմբավորեինք, ըստ տարիների դասավորեինք, ընթերցողը մի որևէ հարցի բիբլիոգրաֆիկ նյութեր գտնելու համար — բոլոր տարիների նյութերը պիտի քրքրեր, շատ կցրվեր նյութը, կդժվարանար բիբլիոգրաֆիայից օգտվելը։

Ներկայիս դասավորությունը օժանդակում է արագ և ըստ բովանդակության նյութը որոնելուն և գտնելուն։ Հարկավոր է՝ գյուղատնտեսության, գրականության կամ արվեստի վերաբերյալ որևէ նյութ՝ անմիջապես բաց ենք անում համապատասխան բաժինը և ընտրում պահանջվող նյութերը։

Մի քանի խոսք էլ մեր բիբլիոգրաֆիական նկարագրման մեթոդի մասին։ Այս մեթոդիկան հիմնականում բխում է Համամիութենական Գիտական գրապալատի կողմից մշակված և ներկայումս ամբողջ Սովետական Միությունում կիրառվող բիբլիոգրաֆիական հրահանգներից, որ կայանում է հետևյալում՝ 1. Եթե մի որևէ լրագիր կամ ժուռնալ փոխել է իր անունը, կամ լույս է տեսել մի քանի անուններով (օրինակ, «Սովետական Հայաստան»-ը սկզբում կոչվել է «Կոմունիստ», հետո՝ «Խորհրդային Հայաստան») — նկարագրված է ներկայիս անվան տակ։ 2. Եթե տվյալ պարբերականի անվան, ենթավերնագրի (օրգան կամ բյուլլետեն), հրատարակման վայրի, հրատարակչության, սերիաների, համարների, ծավալի և թվական ցուցանիշների մեջ փոփոխություններ են եղել՝ այդ մասին մանրամասն նշվել է ծանոթություններում։ 3. Ծանոթություններում մանրամասն կերպով թվարկվում է, թե տվյալ ժուռնալից, ըստ տարիների հաջորդականության, քանի համար է լույս տեսել, դրանցից որոնք են միացյալ համարներ։ Առանց պարբերականների ամբողջ կյանքի ուղին պարզող այս տվյալների, բիբլիոգրաֆիան կկորցներ իր գիտական արժեքը։ 4. Բացի վերը նշվածներից մենք տվել ենք ընդարձակ անոտացիաներ, որոնք պարզաբանում են լրագրերի և ժուռնալների բնույթը, բովանդակությունը, պատմությունը։ Հարկ շատ դժվար է մի քանի տողում բնութագրել կամ տալ որևէ պարբերականի մասին ամփոփ ծանոթություն, դրա համար էլ մենք լայնորեն օգտագործել ենք խմբագրականների, առաջնորդողների նյութերը և մի մասն էլ մենք ենք գրել։ Կան նաև այնպիսի թերթեր, պարբերականներ, որոնց անոտացիաներ չեն գրված՝ վերնագրից և մյուս տվյալներից հարցը պարզ լինելու պատճառով։ 5. Մեր բիբլիոգրաֆիական նկարագրման ժամանակ ղեկավարվել ենք Համամիութենական Գիտգրապալատի հրահանգով («Инструкция по библиографическому описанию статей и рецензий» М. 1953)։ 6. Տվյալ լրագրի կամ ժուռնալի ներսում հոդվածների նկարագրությունները դասավորված են երկու ձևով. նախա-

սովետական մամուլինը ըստ հաջորդականության, որպեսզի գաղափար տրվի հոդվածների դասավորման մասին, իսկ ժուռնալների բաժնում հոդվածները դասավորված են այբբենական կարգով։

Մեր բիբլիոգրաֆիական աշխատանքների ժամանակ օգտվել ենք հիմնականում հետևյալ հիմնարկներից՝ ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքս—Էնգելս—Լենինի — Ստալինի ինստիտուտից և նրա Հայկական, Վրացական և Ադրբեջանական ֆիլիալների ֆոնդերից. 2. Պետդրապալատի և Ալ. Մյասնիկյանի անվ. Պետդրադարանի մամուլի ֆոնդերից, Հայկական ՍՍՌ Պետ. պատմության թանգարանի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ջեռագրատան (Մատենադարանի) ֆոնդերից, Երևանի բոլոր բարձրագույն դպրոցների և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրադարանների ֆոնդերից։

Ջնայած պատմականորեն կարճ ժամանակամիջոց է անցել, ընդամենը 34 տարի, բայց հիշված խոշոր գրադարաններում մեզ չի հաջողվել լրիվ կերպով գտնել նախասովետական և նույնիսկ 1920—1925 թվականների կոմպլեկտները, կան առանձին բացեր։ Որոշ թերթերի վերաբերյալ նյութեր մենք վերցրել ենք գրքերից, հոդվածներից։

Վերջում անհրաժեշտ ենք համարում գրել, որ սա հայ նախասովետական բոլշևիկյան մամուլի և սովետահայ պարբերական մամուլի առաջին ընդհանուր բիբլիոգրաֆիան է, որ ընդգրկում է՝ 210 անուն թերթերի, 179 անուն ժուռնալների և այդ ժուռնալների մեջ եղած մոտ 20 հազար հոդվածների նկարագրություն։

Համոզված ենք, որ նյութերի այսքան ընդարձակ ընդգրկումով և իր թեմաների բազմակողմանիությամբ, ներկա բիբլիոգրաֆիան լայն գաղափար կտա մեր ընթերցողներին՝ հարազատ պարբերական մամուլի մասին, օգտակար կլինի նրանց գիտական և ուսումնական աշխատանքներում։

Մեր ներկա աշխատությունը հայ բոլշևիկյան մամուլի (1902—1920 թ.թ.) և սովետահայ մամուլի (1920—1954 թ.թ.) առաջին ընդհանուր բիբլիոգրաֆիան է, կունենա բացեր և թերություններ։ Բարեխիղճ ու անաչառ քննադատությունը կօգնի կազմողին՝ վերացնել թերությունները, վերանայել տարիների ծանր աշխատանքների արդյունք հանդիսացող «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի» մյուս հատորները և ավելի կատարյալ դարձնել՝ լույզ և հոգատարության արժանի այդ գործը։

ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՐԾԱԾՎԱԾ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ագիտացիոն—ագիտ.
ակադեմիկա—ակադ.
արտադրական—արտադր.
առողջապահություն—առողջապահ.
բանասիրություն—բանասիրք.
բիբլիոգրաֆիա—բիբլիոգր.
բժշկություն—բժշկ.
բոլշևիկյան—բոլշ.
բնագիտական—բնագիտ.
գիմնազիական—գիմն.
գիտահետազոտական—գիտահետազոտ.
գիտական—գիտ.
գյուղատնտեսական—գյուղատնտ.
գրադարան—գրադ.-ն
գրական—գրական.
գրախոսություն—գրախոսութ.
և ուրիշներ—և ուրիշ.
քաղաքացիություն—քաղաքացի.
Քիվ—Ք.
ժողովրդական—ժող.
լենգու—լենգ.
Լենինգրադ—Լ.
խմբագիր—խմբ.
ծանոթություն—ծանոթ.
Կարմիր Բանակ—Կ. Բ.
կենտրոնական կոմիտեն—ԿԿ
կոմիտեն—կոմ.
կոոպերացիա—կոոպ.
կուլտուրական—կուլտ.
կոմերիտական—կոմերիտ.
համալսարան—համալս.
համամիութենական—համամիութ.
համատուտական—համատուտ.
հայկական—հայկական.
հասարակական—հասարակ.
հատոր—հտ.
հնագիտ—հնագ.
հրատարակություն—հրատ.
մաս—մ.
Մոսկվա—Մ.
նախարին—նախ.
չապկի—չապկ.
չարաշնական—չարաշ.
չրջան—չրջ.
պարբերական—պարբ.
պատմական—պատմ.
պետական—պետ.
պրակ—պր.
պրոլետարական—պրոլետ.
ռևոլուցիական—ռևոլ.
ռուսական—ռուս.
սոցիալական—սոց.
սահմանադրություն—սահման.
սովետական—սովետ.
տնտեսական—տնտես.
Միանգամ Պետերբուրգ — Մ Պ Բ
վիճակագրություն—վիճ.
տիրաժ—տիրաժ.
տնտեսական—տնտես.
տպարան—տպ.
ուսումնական—ուս.
քաղաք—ք.
օրինակ—օր.
ֆաքսիմիլի—ֆաքս.
ֆինանսական—ֆին.

СПИСОК СОКРАЩЕНИЙ

ор—авт.
демия—акад.
янский—арч.
лиография—библиогр.
лиотека—б-ка
летень—бюл.
нге—в кн.
дение—введ.
— в.
еринарный—вет.
ета — газ.
— г.
од — г.
ударственное издательство—Госиздат
ократический—демократич.
сертация—дисс.
тор—д-р.
гие—др.
нал—журн.
ный—заочн.
логический—зоол.
другие—и др.
ание—изд.
юстрация—илл.
